Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՈՒՍԱՐԱՐ

10-11(512-513)
28.04.2018
Հրատարակվում է 1999թ. սեպտեմբերից

Лусарар ❁ ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ ❁ Lusarar

## ԱՐՑԱԽՈՒՄ ՊԵՏԱԿԱՆԱԿԵՐՏՄԱՆ 100 ՏԱՐԻՆ



2018-ը հոբելյանական է հայության համար: Նշել ենք Արցախյան ազգային-ազատագրական շարժման 30-ամյակը, և շարունակվում են տոնական միջոցառումները, պատրաստվում ենք նշել Հայաստանի Հանրապետության 100-ամյակը: Այս շրջանակներում Արցախում պետականության վերակերտման 100-ամյակին էր նվիրված ապրիլի 20-ին ԱրՊՀ-ում կազմակերպված գիտաժողովը, որը նախաձեռնել էր Համազգային հայ կրթական և մշակութային միությունը ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության և ԱրՊՀ գործուն աջակցությամբ:

Լիագումար նիստում ողջույնի խոսքով հանդես եկավ ԱՀ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը: Նա ընդգծեց այն փաստը, որ ուղիղ մեկ դար առաջ տեղի ունեցած պատմական անցքերը բնորոշեցին իր հանդեպ բռնությունները չհանդուրժելու` արցախահայության կամքը, որը հետագա տասնամյակներում տարբեր դրսևորումներ ունեցավ` մշտաբորբոք պահելով ազգային-ազատագրական ոգին: Այս իրողությունը կարևոր կռվան է` ապացուցելու, որ պատմական հանգամանքների բերումով Խորհրդային Ադրբեջանին բռնակցված արցախահայությունը երբևէ չի հաշտվել իր այդ կարգավիճակի հետ և հարմար առիթի է սպասել իր բողոքն արտահայտելու համար: 1988-ը դարձավ այն առիթը, երբ ԼՂԻՄ-ի հայության օրինական կամքը` վերամիավորվել մայր Հայաստանին, դեմ առավ քաղաքական պատնեշի և բացահայտեց Ադրբեջանի բռնատիրական նկրտումները: Ն. Աղաբալյանը կարևոր համարեց պատմական իրադարձությունները գլոբալ քաղաքականության համատեքստում դիտարկելը, ինչը կարևոր է նաև նոր մարտահրավերները ճիշտ գնահատելու և արդյունավետ ռազմավարություն մշակելու տեսանկյունից: Հայոց պետականությունը վերականգնելու, պահպանելու և հզորացնելու մեծ պատասխանատվություն կրողը նաև նոր սերունդն է, որը պիտի կարողանա ամենաթանկ գնով ձեռք բերվածը` անկախ պետականությունը, չվտանգել և պաշտպանել ցանկացած ոտնձգությունից` միշտ հիշելով, որ պատմությունը սխալներ չի ներում: «Ներկայում, երբ կրկին անհանգիստ օրեր ենք ապրում ազգովի, տեղին եմ համարում մեր բոլոր հայրենակիցներին հիշեցնել, որ մեզ համար այդքան թանկ հայրենիքը պաշտպանվում, և խաղաղությունը շարունակում է պահպանվել սահմանում ամուր կանգնած մեր զավակների շնորհիվ: Մենք պետականության վերականգնման 100-ամյակի շեմին ենք հասել երկու հայկական հանրապետություններով և մեկ միացյալ հայրենիքով: Մեզ հաջողվել է հաղթահարել պարտադրված պատերազմի պատճառած բոլոր դժվարությունները` փլատակներից ու ավերակներից վերականգնել տնտեսությունը, կառուցել նոր ենթակառուցվածքներ ու շինություններ, հաջողություններ արձանագրել կրթության, գիտության մշակույթի, սպորտի և այլ բնագավառներում, ամրապնդել մեր դիրքերն առաջնագծում, կատարելագործել մեր բանակը, կարևոր դիրք գրավել տարածաշրջանում և ունենալ ավելի լավ ապագայի տեսլական: Այն իրականացնելու համար մեզ անհրաժեշտ է նորից համախմբվել ու առանց շեղվելու առաջ ընթանալ»,- ընդգծեց Ն. Աղաբալյանը:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունել ու արդյունավետ աշխատանք են մաղթել ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի ու զբոսաշրջության նախարար Սերգեյ Շահվերդյանը, Համազգային հայ կրթական և մշակութային միության կենտրոնական վարչության անդամ Սպարտակ Ղարաբաղցյանը` ներկայացնելով նաև միության ուղերձը, կազմակերպության Ստեփանակերտի գրասենյակի ղեկավար Հերմինե Ավագյանը:

Գիտաժողովի գլխավոր բանախոս, ԱՀ Ազգային ժողովի փոխնախագահ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահրամ Բալայանի գնահատմամբ` նմանօրինակ միջոցառումները ոչ միայն պետք է տոնական տրամադրություն հաղորդեն, այլև ծառայեցվեն ՀՀ և ԱՀ պետականության կայացմանը, նյութականանան, այսինքն` հնչած մտքերը և գաղափարները կիրառելի դառնան կյանքում:

Ղարաբաղյան հարցի կարգավորման գործում որպես խոչընդոտ բերվում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Մինչդեռ, ըստ բանախոսի, իրականում տարածքային ամբողջականության սկզբունքով Արցախի հիմնահարցի լուծումը բխում է նաև մեր շահերից, քանի որ Արցախը ոչ միայն ազգերի ինքնորոշման իրավունք ունի, այլև տարածքային ամբողջականության: Մինչև Ադրբեջանի Հանրապետության ձևավորումն Արցախում եղել է պետականություն, որը ոչ մի կապ չի ունեցել Ադրբեջանի հետ. Արցախը երբեք չի եղել Ադրբեջանի կազմում թե՛ 1918-20թթ., թե՛ խորհրդային ժամանակաշրջանում, պարզաբանեց բանախոսը:

Վահրամ Բալայանը փաստեց, որ պատմությունը կրկնվում է, ինչն ապացուցում է նաև 1917-18թթ. իրադարձությունների համադրումը ներկա զարգացումներին: Դա թույլ է տալիս հնարավորինս խուսափել հենց այդ ժամանակահատվածում թույլ տված սխալներից և առողջ հիմքերի վրա դնել մեր պետականությունը:

☞2

## ՄԻԱՎՈՐԵԼ ՆԵՐՈՒԺԸ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Ապրիլի 11-13-ը Արցախի պետական համալսարանի նախաձեռնությամբ անցկացվեց ուսանողական ֆորում` նվիրված Ղարաբաղյան շարժման 30-ամյակին: Մասնակցեցին ՀՀ, հեռակա կարգով` ՌԴ և արտերկրի` ԱրՊՀ գործընկեր բուհերի ուսանողներ, ընդհանուր առմամբ` 140 հոգի:

Ողջույնի և Շարժման արժևորման խոսքով հանդես եկավ ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը: Նրա գնահատմամբ` Ղարաբաղյան շարժման 30-ամյակի հոբելյանական տարվա միջոցառումներն առանձնահատուկ են նրանով, որ ամենազանգվածայինն են, քանի որ միավորել են հասարակության բոլոր հատվածներին` արտահայտելով մեր սերն ու ապրումները, հավատն ու վստահությունը, անցյալի դասերն ու մաքառումներով ձեռք բերածը: Նա հպարտությամբ նշեց, որ 30 տարի առաջ հայ ժողովրդի ազատատենչ ոգու զարթոնքի շնորհիվ այսօր ունենք երկու հայկական պետություն: «Պատերազմի կրակների և ավերակների միջից Արցախը կարողացավ բարձրանալ և աշխարհին ներկայանալ իր հերոսական բանակով, պետական հաստատություններով, տնտեսական լուրջ առաջընթացով, կրթական և մշակութային օրինակելի օջախներով և վերջապես` իր կազմակերպված հասարակությամբ»,- ասաց նա` հավելելով, որ անցած 30 տարիների ընթացքում Արցախը կայացավ որպես ամուր, ազատ ժողովրդավարական պետություն, որը ոչ միայն մարտունակ է, այլև կենսունակ և մրցունակ. «Արցախի պաշտպանները գիտեն կռվել և հանուն ինչի կռվել: Արցախի զինված ուժերն այսօր պաշտպանում են ոչ միայն Արցախի, այլև Հայաստանի և ողջ հայության անվտանգությունը»: Բանախոսը բոլորի կարծիքն արտահայտեց` որ անկախ պետականությունը մեր ամենամեծ արժեքն է, և Ղարաբաղյան շարժումը մեզ պատգամում է հավատարիմ մնալ իրենց կյանքը սերունդների ազատության և խաղաղության համար պայքարում զոհաբերած հայորդների հիշատակին, լինել տերը սեփական ճակատագրի և պահապանը նախնյաց ժառանգության, շարունակել կերտել և կառուցել անկախ ժողովրդավարական և սոցիալական երկիր: Այդ համատեքստում նա կարևորեց ուսանողության դերը պետության հասարակական-քաղաքական կյանքում, քանի որ «յուրաքանչյուր պետության մասնակցությունը համաշխարհային արագընթաց զարգացումներում պայմանավորված է գիտելիքներով հարուստ ու բանիմաց երիտասարդներով»: Իսկ յուրաքանչյուր սերունդ պարտավոր է իր նախորդ սերնդից որոշ արժեքներ ստանալ, պահպանել դրանք ու հաջորդին շատ բան փոխանցել: Ըստ այդմ` ներկա սերունդը հաջորդին պետք է կարողանա փոխանցել ազատագրված Արցախից ճանաչված Արցախ: Դրա համար պետք է ժամանակն առավելագույն արդյունավետությամբ օգտագործել, ինչը, նրա կարծիքով, միշտ չէ, որ արվում է: Ռեկտորը վստահ է, որ ֆորումը ևս մեկ առիթ է հայ երիտասարդության մասնագիտական ներուժի համախմբման համար:




Ֆորումին ողջույնի խոսք հղեց ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը:

Իր ելույթում նա ասաց, որ 30 տարի անց Շարժման պատմական իրադարձությունները վերարժևորելու, խնդիրները վերհանելու և անելիքները հստակեցնելու մղումն է Արցախում մեկտեղել նոր սերնդի ուսանողներին: «Ֆորումը միավորել է Արցախի և Հայաստանի ուսանողներին, իսկ 30 տարի առաջ այս պատերից ուսանողությունը և պրոֆեսորադասախոսական կազմը բաժանված էին հայերի և ադրբեջանցիների միջև: Խորհրդային Ադրբեջանը նպատակադրվել էր և հույս ուներ աստիճանաբար փոխել բուհի էթնիկ կազմը հօգուտ իրեն, և դա ԼՂ հայաթափման ադրբեջանական պլանի մի մասն էր: Սակայն ադրբեջանական իշխանությունների ջանքերն ու բռնատիրական նկրտումներն ապարդյուն էին. ազգային-ազատագրական ոգին ոչ միայն չմարեց Ղարաբաղի գլխավոր կրթօջախում, այլև հարմար պահի էր սպասում ժայթքելու համար»: Եվ 88-ի փետրվարի 13-ին այն վերաճեց համաժողովրդական հուժկու շարժման: Նախարարն անդրադարձավ նաև ընդամենը երկու տարի առաջ տեղի ունեցած իրադարձություններին: «2016թ. ապրիլին մենք ազգովի նորից ապրեցինք պատերազմի արհավիրք, նորից թանկ կորուստներ ունեցանք, ողբերգություն ապրեցինք, բայց ինչքան մեծ էր մեր ոգևորությունը և հպարտությունը, երբ հանկարծահաս պատերազմի առաջին իսկ օրից դեպի Արցախ սկսեցին ձգվել մայր հայրենիքից ու Սփյուռքից հարյուրավոր, հազարավոր հայ կամավորականներ, ոչ միայն Արցախյան պատերազմի վետերաններ, այլև երիտասարդներ, ովքեր չեն տեսել Արցախյան պատերազմը, բայց գեներով ժառանգել են հայրերի խիզախությունը, ոգին, արժանապատվությունը»: Ինչպես որ յուրաքանչյուր պատերազմ իր դասերն է թելադրում, ապրիլյան պատերազմն էլ հուշեց, որ իրավունք չունենք կորցնել մեր զգոնությունը, որ աչքի լույսի պես պիտի փայփայենք մեր լինելության և հաղթանակների միակ երաշխիքը` մեր միասնությունը, ընդգծեց նախարարը` նկատելով, որ պատերազմում մեծ զոհողությունների ու զրկանքների գնով ձեռք բերված միասնությունը խաղաղ օրերում, սակայն, երբեմն տեղի է տալիս մեր անփութությամբ, և զարմանալ ու զայրանալ կարելի է: «Այսօր, երբ մեր սահմանին կանգնած հայ զինվորն ամեն օր իր կյանքն է վտանգում, տարածաշրջանում զարգացումներն օրեցօր անկանխատեսելի ու անկառավարելի են դառնում, գուցե առավել քան երբևէ կարևոր է համախմբել մեր ներուժը, ջանքերը, միտքն ու տաղանդը միավորել համազգային խնդիրների շուրջ»,- ասաց նախարարը` ուսանողներին կոչ անելով հայրենիքի վաղվա օրը կերտելու համար կայացնել մեր երկրի, ժողովրդի, ազգի համար ճակատագրական որոշումներ: Նրանց է վիճակված այս բարդ ու դժվարին ժամանակներում ճիշտ կողմնորոշվել, ոչ միայն չկորցնել, այլև բազմապատկել ձեռքբերումներն ու հաղթանակները: Նա հույս հայտնեց, որ Ղարաբաղյան շարժման 30-ամյակը կդառնա հենց այդպիսի մեկնակետ:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց նաև ԱՀ Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Արզիկ Մխիթարյանը, որը բուհի հիմնադրման օրից է այստեղ աշխատել: 30 տարիների հեռվից նա գնահատում է կատարվածը: Նրա խոսքով` Ադրբեջանի հեռահար նպատակները չիրականացան, քանզի չէին գիտակցում, թե այստեղ բուհ հիմնադրելով` դանդաղ գործող ինչ ռումբ են դնում, որովհետև մեկտեղվեցին մտավորականներ, հայրենասեր երիտասարդներ, և 88-ին եղավ այն, ինչ բոլորիս հայտնի է:

☞2

## ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՐՈՒՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մենք՝ 2018թ. ապրիլի 11-13-ը Արցախի Հանրապետությունում անցկացված՝ Ղարաբաղյան շարժման 30-րդ տարեդարձին նվիրված ուսանողական համահայկական ֆորումի մասնակիցներս, պատմական Գանձասարում հանրագումարի բերելով նախորդ օրերի քննարկումները և ամփոփելով ֆորումի աշխատանքները՝

**կարևորում ենք** հայկական բուհերի ուսանողներին համազգային գաղափարների շուրջ միավորելու անհրաժեշտությունը՝ ընդգծելով Ղարաբաղյան շարժման 30-ամյա պատմության ընթացքում ունեցած ձեռքբերումները, որում անուրանալի է նաև երիտասարդության ներդրումը.

**հավաստում ենք**, որ Հայաստանի, Արցախի և Սփյուռքի երիտասարդությունը համախմբված է Մայր Հայաստանի և նրա անքակտելի մասը հանդիսացող հայկական երկրորդ հանրապետության տարածքները պաշտպանելու և հայոց պետականության սահմաններն անառիկ պահելու նպատակի շուրջ.

**փաստում ենք**, որ արդի մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ է կրթական և երիտասարդական ճիշտ քաղաքականության իրականացմամբ ձևավորել ինտելեկտուալ ու ժամանակակից երիտասարդություն՝ խթանելով վերջինիս ներգրավվածությունը պետության զարգացման գործընթացներում, հասարակական, քաղաքական կյանքում.

**ընդգծում ենք** ԱՀ և ՀՀ ուսանողական և երիտասարդական կառույցների պատրաստակամությունը՝ միասնական ջանքերով նպաստելու Արցախի Հանրապետության միջազգային ճանաչմանն ուղղված քայլերին՝ գիտական, կրթական, հասարակական և այլ հարթակներում: Միևնույն ժամանակ կարևորում ենք Արցախի Հանրապետության ուսանողության համար միջազգային փոխանակման և կրթական այլ ծրագրերի մատչելիության ապահովումը.

**հաստատում ենք** Արցախում հայկական երիտասարդական կազմակերպությունների, ուսանողական ինքնավար մարմինների մասնակցությամբ համաժողովների, քննարկումների պարբերական կազմակերպման ու շարունակականության կարևորությունը՝ դիտարկելով դրանք որպես երիտասարդության համախմբում համահայկական գաղափարների շուրջ՝ ի նպաստ Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության ամրապնդման և ի շահ միասնական հայրենիքի կայուն զարգացման:

*Գ ա ն ձ ա ս ա ր*
*13 ապրիլի 2018թ.*

ՀԱՄԱԺՈՂՈՎ

## ՄԻԱՎՈՐԵԼ ՆԵՐՈՒԺԸ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

1 ☜

«88-ը կարծես բացեց Մհերի դուռը, և քարանձավից դուրս եկավ հայոց քարավանի նառը՝ Արցախը, որը պետք է ազատության տենչ հաղորդեր ողջ հայ ժողովրդին»:

ՀՀ պատվիրակության անունից գիտաժողովի մասնակիցներին ողջունեց Հայաստանի երիտասարդական հիմնադրամի ներկայացուցիչ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ուսանողական խորհրդի նախագահ Ներսիկ Մարգարյանը: Իր խոսքում նա նշեց, որ կարևորում են այն կրթական ծրագրերը, որոնք իրենք ԱրՊՀ-ի հետ համատեղ են իրականացնում: Համագործակցության շրջանակներում բազմաթիվ ծրագրեր արդեն իսկ կյանքի են կոչվել:

Շարժման 30-ամյակին նվիրված՝ ուսանողների ուժերով կազմակերպված միջոցառումները ներկայացրեց ԱրՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը:

Գիտաժողովի ընթացքում ցուցադրվեցին քաղաքական, հասարակական և մշակութային միջազգային ճանաչված գործիչների՝ Արցախին ուղղված շնորհավորական տեսաուղերձները: Ցուցադրվեց «Պաշարվածները» փաստավավերագրական ֆիլմը:

Լիագումար նիստից հետո գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին 7 մասնախմբերում:

Ուսանողական ֆորումի շրջանակներում բուհերի և կազմակերպությունների ուսանողական ինքնավար մարմինների նախագահները հանդես են եկել իրենց կողմից ներկայացվող կառույցի մասին պատմող շնորհանդեսներով:

ԱրՊՀ ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը կարևորել է ժամանակակից երիտասարդի դերակատարությունը գլոբալ զարգացումների համատեքստում:

Ուսանողական ֆորումի շրջանակներում մասնակիցների հետ հանդիպում են ունեցել Շարժման մի խումբ առաջամարտիկներ:

ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը առաջամարտիկներին ներկայացնելիս ընդգծել է այն հանգամանքը, որ նրանց միավորում է ոչ միայն այն, որ ուսանողական ակտիվ կյանքը հետագայում հաջողությամբ կարողացել են վերածել պաշտոնական ոլորտում հաջողությունների՝ ի նպաստ Արցախի պետականաշինության, այլև դեռ ուսանողական տարիներից միասին են կռել Ղարաբաղի ապագան՝ 88-ին ներգրավված լինելով ուսանողական ակտիվիստների շարքերում:

Հրավիրվածները՝ ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարար Սերգեյ Շահվերդյան, ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Դավիթ Իշխանյան, ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի պետ Աշոտ Սարգսյան, ԱրՊՀ հրատարակչության բաժնի պետ Եղիշե Առուշանյան. մարդիկ, ովքեր 88-ի շարժման և առաջին զանգվածային երթի նախաձեռնողներից էին, պատմեցին պատմական այդ օրերի մասին, ներկայացրին ուշագրավ դրվագներ, նաև պատասխանեցին քննարկմանը մասնակից ուսանողների հարցերին:

Խոսելով հակամարտության կարգավորման ուղիների շուրջ՝ բանախոսները շեշտադրեցին «Ո՛չ մի թիզ հող թշնամուն» գաղափարը և ընդգծեցին, որ մենք դեռ տարածքներ ունենք վերադարձնելու, և այստեղ հատկապես անելիքներ ունի երիտասարդությունը:

Ֆորումի մասնակիցներին ընդունեց ԱՀ խորհրդարանի ղեկավար Աշոտ Ղուլյանը:

ԱԺ նախագահը կարևորել է ուսանողական ֆորումի նշանակությունը՝ ուսանողներին միասնական ազգային գաղափարների շուրջ համախմբելու, հայկական երկու հանրապետությունների ուսանողական կառույցների միջև փոխգործակցությունն ակտիվացնելու տեսանկյունից:

Հանդես գալով «Արցախի Հանրապետության անցած ուղին. ձեռքբերումներ և հեռանկարներ» թեմայով բանախոսությամբ՝ Ա.Ղուլյանն ընդգծել է. «Ղարաբաղյան շարժման 30-ամյա ճանապարհը հայ ժողովրդի համար ինքնությունը վերագտնելու, տարիներով նենգափոխված դիմագիծը մաքրելու, դարավոր ավանդույթները վերականգնելու և արժեքները վերագնահատելու ժամանակշրջան էր: Կասկած չկա, որ այդ գործում մենք հաջողել ենք, քանզի այսօր ունենք անկախությունը վաստակած Հայաստանի Հանրապետություն, ազատագրված ու զարգացող Արցախ և զույգ հայկական պետականությունը փայփայող Սփյուռք: Մեր ամենակարևոր նպատակներից է Արցախի միջազգայնացումը, մասնավորապես արտաքին աշխարհում Արցախը որպես ակտիվ, ստեղծարար ու մտածող երիտասարդների երկիր ներկայացնելը»:

ԱԺ նախագահը պատասխանել է ուսանողների հարցերին:

Ֆորումի աշխատանքներն ամփոփվել են Գանձասարում: Փակման հանդիսավոր արարողությանը ներկա էին ՀԱԵ Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ԱՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը, ԱՀ ԱԳ նախարար Մասիս Մայիլյանը, ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը, դասախոսներ, ուսանողներ:

Հայկական երկու հանրապետությունների բարձրագույն ուսումնական հաստատությունների ավելի քան 100 ուսանող «Մատենադարան-Գանձասար» գիտամշակութային կենտրոնում հանրագումարի է բերել եռօրյա ֆորումի արդյունքները. ուսանողության տպավորությունները դրական են, իսկ աշխատանքների արդյունքները շոշափելի իրողություն կդառնան՝ գիտական հանրույթին ներկայացնելով Ղարաբաղյան շարժման 30-ամյակին նվիրված շուրջ 150 գիտական հոդվածներ, որոնք նախատեսվում է առաջիկայում տպագրել առանձին ժողովածուով:

ԱՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը, կարևորելով երիտասարդության դերը երկրի պետականաշինության գործընթացում, փակման հանդիսավոր արարողությանն ընդգծել է. «18-20 տարեկան երիտասարդներին վստահված է մեր երկրի սահմանների պաշտպանությունը, և այդ առաքելության շարունակությունը դուք եք իրականացնում՝ այցելելով Արցախ և քննարկումներ ծավալելով, տեսակետներ առաջադրելով մեր զարգացման հեռանկարների շուրջ: Մենք պետք է լավատես լինենք. դա հաջողության հասնելու գրավականներից է: Բավական է հիշել, թե 88-ին ինչից ենք սկսել, ինչ ենք հաղթահարել և ինչ ունենք այսօր: Այն, ինչին մեզ հաջողվել է հասնել, շատ լավ հիմք է, որ ապագայում ավելի մեծ հաջողություններ կարողանանք արձանագրել»:

ԱրՊՀ ռեկտոր Մ. Մինասյանը շնորհակալություն է հայտնել պատվիրակներին մասնակցության և արդյունավետ աշխատանքների համար՝ կարևորելով ֆորումի նշանակությունը հայկական բուհերի ուսանողներին համազգային գաղափարների շուրջ միավորելու, Ղարաբաղյան շարժման պատմաքաղաքական 30-ամյա ուղին, ձեռքբերումներն արժևորելու, մեր երկրում իրականացվող կրթական և երիտասարդական քաղաքականության ոլորտում առկա խնդիրները բացահայտելու, ԱՀ և ՀՀ ուսանողության ներուժը ի նպաստ հայրենիքի կայուն զարգացմանն ուղղորդելու, Արցախի մայր բուհի և հայաստանյան գործընկեր բուհերի միջև կապերն ամրապնդելու գործում:

Քառօրյա միջոցառումների ընթացքում լսվեցին հետաքրքիր ելույթներ մերօրյա մարտահրավերներին դիմակայելու, Շարժման պատմաքաղաքական նշանակության արժևորման, ազգային անվտանգության՝ Հայաստան-Արցախ-Սփյուռք գործակցության էլ ավելի ամրապնդման վերաբերյալ, բարձրացվեցին բարձրագույն կրթությունում առկա խնդիրները, հետագա անելիքները, մասնակիցները նոր ծանոթություններ հաստատեցին միմյանց հետ, վայելեցին արցախյան հյուրասիրություն, անցկացրին հաճելի ժամանակ:

Վերջում ֆորումի մասնակիցները հանդես են եկել համատեղ հայտարարությամբ:

## ԱՐՑԱԽՈՒՄ ՊԵՏԱԿԱՆԱԿԵՐՏՄԱՆ 100 ՏԱՐԻՆ

1 ☜

Նա անդրադարձավ 1917թ. իրադարձություններին: Հայությունը և նրա մի մասը հանդիսացող արցախահայությունը միշտ էլ ընկալունակ է եղել առաջադեմ գաղափարների նկատմամբ: Եվ պատահական չէ, որ ցարական իշխանությունները ժամանակին Այսրկովկասում, ի դեմս հայության, միշտ տեսնում էին այն առաջմղիչ ուժը, որը կարող է խնդիրներ ստեղծեր ցարական իշխանությունների համար, և այն հալածանքները, որ տեղի ունեցան 20-րդ դարի սկզբներին, հենց այդ ամենի արտացոլանքն են: Շուշին դարձել էր առաջադեմ ու նաև պետականության գաղափարների կրողը:

1917թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, երբ Ռուսաստանում անիշխանություն էր, Արցախում գործող քաղաքական ուժերը մտածեցին Շուշիում ունենալ մի իշխանություն, որը թույլ կտա կարգ ու կանոն հաստատել երկրամասում և ունենալ առողջ հարաբերություններ հայ և թուրք ժողովուրդների հետ: Դաշնակցության կառույցը խորհրդաժողով հրավիրեց, որին մասնակցում էին բոլշևիկներ, էսէռներ և կադետները, քննարկվեց իշխանության ձևավորման հարցը: Եվ դեկտեմբերի 23-ին ձևավորվեց Անդրկովկասում առաջին պետությունը: Այս գործընթացները այստեղ շարունակվեցին մինչև 1917թ. հուլիսի 22-26-ը, երբ անհրաժեշտություն առաջացավ հրավիրել Արցախահայության 1-ին համագումարը: Որոշման մեջ մի այսպիսի կետ էլ կար. որ Արցախը միանում է Արարատյան Հանրապետությանը, այսինքն՝ Հայաստանի մի մաս էր դառնում, բայց հաշվի առնելով ստեղծված կացությունը, որ ՀՀ-ն գտնվում էր ծանր կացության մեջ, նոր էր ձևավորվել, տեղի հայ գործիչները նպատակահարմար գտան ժամանակավորապես ունենալ իշխանություն, մինչև ՀՀ-ում դրությունը կշտկվեր: Եվ ահա այս համատեքստում ընթացան ամբողջ 1918-20թթ. իրադարձությունները:

Վ. Բալայանի ընդհանրացումով՝ Ղարաբաղի քաղաքական գործիչները համարձակություն ունեցան իրենց վրա վերցնել պետականությունը ձևավորելու առաքելությունը, և ինչպես Հայաստանի Առաջին Հանրապետության նշանավոր գործիչներից Արշալույս Բաբայանն է նշել, հենց այդ իշխանությունը թույլ չտվեց, որ թուրքերը և մուսավաթական Ադրբեջանի բանդաները մտնեն Արցախ: Ճիշտ է, պատերազմներ տեղի ունեցան, բայց հայ մարդն իր արժանապատվությունը պահեց՝ սպասելով ներկա օրվան:

Լիագումար նիստից հետո գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին մասնախմբում, որտեղ հնչեցին հետաքրքիր ելույթներ:

Շատերի համար հայտնություն էին հայ դասական Դերենիկ Դեմիրճյանի խոհերը Նախիջևանի և Ղարաբաղի մասին, որը ներկայացրեց գրողի տուն-թանգարանի տնօրեն Կարինե Ռաֆայելյանը:

Իսկ քաղաքագիտության դոկտոր Խաչիկ Գալստյանի ելույթը, որ նա վերնագրել է «Փոքր ազգի մեծ երազանքը», յուրատեսակ էսսե էր հայ ժողովրդի մասին: «Հայ ժողովրդի նորօրյա պատմության բավիղներում մենք ազատ ու անկախ Արցախից ավելի լուսավոր կետ չունենք: Ժամանակակից հայի համար ոգեշնչման, ինքնանվիրաբերման և ինքազոհաբերման ուրիշ աղբյուր չունենք: Ավագ սերունդը ազգին տվեց պետություն, մասնակցեց Գոյապայքարին, բայց ես նկատում եմ սպառվածության տարրեր: Մեր ազգին 21-րդ դարում առաջավոր ազգերին հավասար բարձր գծանշման դաշտում պետք է դնեն երիտասարդները: Որպեսզի դիմակայենք էթնոգենեզի փոթորիկների հորձանուտում, այդ նոր պասիոնարության բռնկումը պարտադիր պետք է տեղի ունենա»,- ասաց նա:

Բանախոսն առաջ քաշեց ազգ-մահապարտ գաղափարը. «Եթե մենք ազգովի դառնանք մահապարտ, հանուն հայրենիքի յուրաքանչյուր հայ պատրաստ լինի ինքազոհման, մեր դեմ խաղ չի լինի: Այն միֆը, որ մեզնից կախված ոչինչ չկա, որ մեծ տերություններն են որոշում մեր հարցը, հօդս կցնդի: Արցախյան իրադարձություններն այդ մեծ դասը մեզ տվեցին»:

**«ԼՈՒՍԱՐԱՐ»**

## ԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

# ԿԼՈՐ ՍԵՂԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց» համալսարանը կազմակերպել է կլոր սեղան՝ «Կովկասը տարածաշրջանային և աշխարհի տերությունների աշխարհաքաղաքական շահերի ծիրում» թեմայով, որին մասնակցում էին Արցախի, ՀՀ բուհերի և ՌԴ Հարավային դաշնային համալսարանի իրավահաջորդ Դոնի Ռոստովի համալսարանի գիտնականներ: Ներկա էին ԱՀ արդարադատության նախարար Արարատ Դանիելյանը, ԱՀ նախագահի խորհրդական Տիգրան Աբրահամյանն ու ԿԳՍ նախարարի խորհրդական Իրինա Գրիգորյանը:

Կլոր սեղանը վարում էր ՄՄՀ Կովկասագիտության կենտրոնի ղեկավար, պրոռեկտոր, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Ղարիբ Բաբայանը: Ողջունելով հյուրերին՝ նա տեղեկացրեց, որ կլոր սեղանը անցած տարի աշնանը ՄՄՀ-ի կողմից անցկացված միջազգային գիտաժողովի երկրորդ փուլն է: Հաշվի է առնվել մի կողմից խնդրո առարկայի հրատապությունը արտաքին աշխարհի համար, մյուս կողմից այն, որ այն կարևոր է համալսարանի «Կովկասագիտություն» բաժնի սովորողների համար՝ շփվելու այս ասպարեզում ճանաչված գիտնականների, քաղաքագետների հետ, ապագայում դառնալու լավ վերլուծաբաններ: Այդ առումով կլոր սեղանի հիմնական ունկնդիրներն էլ ՄՄՀ վերոնշյալ բաժնի ուսանողներն ու դասախոսներն էին:

Կլոր սեղանին ներկայացված էր չորս զեկուցում:

ՀՀ իրավունքի և քաղաքականության ինստիտուտի տնօրեն Լարիսա Ալավերդյանը հանդես եկավ «Հարավային Կովկասի տարածաշրջանը ԽՍՀՄ փլուզման ժամանակաշրջանում և ներկայում» թեմայով:

Բանախոսի համոզմամբ՝ ԽՍՀՄ փլուզումը, որն սկսվել էր 1985 թվականից, նախապատրաստված էր և նպատակադրված: Արևմուտքը և առանձին անհատներ ակտիվորեն արձագանքեցին մեր տարածաշրջանում 1988-90թթ. տեղի ունեցած իրադարձություններին: Հիշատակման արժանի է ԱՄՆ սենատի ընդունած բանաձևը, ինչպես նաև չորս սենատորների, որոնց թվում էր մեզ քաջածանոթ Ջոն Քերրին, նամակը, որում կոչ էր արվում ԽՍՀՄ կառավարությանը՝ կասեցնել անմեղ մարդկանց ոչնչացումը ինչպես Հայաստանում, այնպես էլ Ղարաբաղում և նրա շուրջ, դադարեցնել շրջափակումը, դուրս բերել խորհրդային զորքերը ԼՂ գոտուց և ի վերջո լուծել հիմնախնդիրը ժողովրդի ինքնորոշման սկզբունքի հիման վրա առհասարակ ԽՍՀՄ բոլոր ինքնավար կազմավորումներում: Հավաստում էին, որ ԼՂՀ-ն կայացել է խորհրդային օրենքների և սահմանադրության համաձայն, որոնք չէին հակասում միջազգային նորմերին: Արևմուտքը մեզ աջակցում էր այդպիսի բանաձևերով: Նույնպիսի վերաբերմունք կար նաև ռուս մտավորականների և մի շարք կազմակերպությունների կողմից, ինչպես, օրինակ՝ «ԿՐԻԿ»-ի:



Նրանք ճշմարտությունը Ղարաբաղի մասին հասցրել են աշխարհին, որովհետև Կենտրոնն անում էր ամեն ինչ, որպեսզի ԽՍՀՄ ժողովուրդները ղարաբաղյան իրադարձություններն ընկալեն որպես ահաբեկիչների ու ծայրահեղականների գործ՝ «պերեստրոյկային» հակասող: Այդ տարիներին Արցախում գործել են միջազգային իրավապաշտպաններ, որոնք նույնպես աշխարհին ներկայացրել են Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունների մասին ճշմարտությունը: Ինեսա Բուրկովան Ադրբեջանի քաղաքականության մասին հստակ արտահայտություն ունի՝ դա ցեղասպանություն է:

Անսաթվերով ներկայացնելով ԽՍՀՄ փլուզման ընթացքը և Ադրբեջանի դիրքորոշումը, որը կարճ ժամանակում 180 աստիճանով փոխվեց, և Արդրբեջանի ղեկավարությունը նույնիսկ Ռուսաստանին որակեց զավթիչ իր երկրի նկատմամբ՝ բանախոսն անդրադարձավ ազգերի ինքնորոշման և տարածքային անձեռնմխելիության սկզբունքների արհեստական անհամատեղելիությանը Ղարաբաղյան հարցի լուծման մեջ: Նա ցավով արձանագրեց, որ անգամ հայ փորձագետներն ուշադիր չեն ընթերցել 1991թ. սեպտեմբերի 2-ին ԼՂՀ ընդունած փաստաթուղթը, որում բերված են բոլոր հիմնավորումները, այդ թվում Արցախի ժողովրդի՝ հանուն գոյատևման պայքարը: Տվյալ թեմայով բանախոսը վերջերս հանդես է եկել ԱրՊՀ-ում կազմակեպված գիտաժողովում, որը շատերն ընկալեցին որպես նոր խոսք: Բայց դա նոր միտք չէ, այլ ժամանակին ասված և ցայսօր իր հրատապությունը չկորցրած խոսք: «Կառչել միայն ժողովրդի ինքնորոշման սկզբունքից, երբ ժողովրդին սպառնում է ցեղասպանությունը, նրա ապրելու իրավունքը, ես համարում եմ անհեռատես մոտեցում»,- ասաց Լ. Ալավերդյանը: Ըստ նրա՝ միջազգային հարթակներում պետք է ներկայացնել, որ դա պարզապես ինքնորոշման հարց չէ, այլ պայքար՝ հանուն կյանքի, գոյատևման: Այդ համատեքստում նա բերեց նաև Իլհամ Ալիևի վերջերս հնչեցրած՝ «Էրիվանը» իրենցը լինելու մասին հայտարարությունը, որը ոմանք- քմծիծաղով ընդունեցին: Դա նույն այն սկզբունքի կրկնությունն է, որով ստեղծվել է Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը, որի նպատակն է շարունակել ու ավարտել Օսմանյան Թուրքիայում սկսված հայերի ցեղասպանությունը: Բանախոսը կոչ արեց օգտագործել միջազգային իրավունքի այլ հարթակներ, ընդարձակել այդ դաշտը: «Յուրաքանչյուր ժողովուրդ պայքարում է իր գոյության համար: Յուրաքանչյուր սերունդ այդ խնդիրը լուծում է իր ձևով: Ինչ-որ ձևով լուծել է իմ սերունդը, մնացածը ձեզ է թողնված, որը նույնպես քիչ չէ»,- իր խոսքն այսպես եզրափակեց Լ. Ալավերդյանը:

Զեկուցումներով հանդես եկան նաև Դոնի Ռոստովի համալսարանի դոկտոր, պրոֆեսորներ Վալերի Կոնովալովը, Մաքսիմ Վասկովը, իրավաբանական գիտությունների թեկնածու Վառլեն Սևումյանը: Վ. Կոնովալովը ներկայացրեց հնարավոր զարգացումները Կովկասում: Ինչպե՞ս է գնահատում Ղարաբաղի դերը Կովկասում՝ մեր հարցին ի պատասխան՝ նա ասաց, որ ընդհանրական ձևով այս հակամարտությունը կկրի երկարատև բնույթ և չի լուծվի մոտակա 10-20 տարվա ընթացքում: «Այս սառեցված հակամարտությունը, ցավոք, շատ խաղացողների համար ձեռնտու է, բայց նույնը չի կարելի ասել թեժ իրավիճակի մասին, որը ձեռնտու չէ: Ես կարող եմ ասել մասնավորապես ԱՄՆ-ի դիրքորոշման մասին. նա շահագրգռված է դրանում»:

Մ. Վասկովը ներկայացրեց Ռուսաստանի և Հայաստանի հարաբերությունները: Նրա խոստովանությամբ՝ ռուսների համար հայերը եղբայրական ժողովուրդ են, կապված են պատմականորեն, ընտանեկան կապերով: Ըստ նրա՝ կան ուժեր, որոնք չէին ուզենա, որ այդ հարաբերությունները պահպանվեն: Հայաստանը՝ որպես անկախ երկիր, իհարկե ունի իր հետաքրքրությունները, շահերը, ինչին Ռուսաստանը վերաբերվում է հարգանքով: «Հուսով եմ՝ բոլոր սպառնալիքները կվերացվեն, և հարաբերությունները կպահպանվեն»,-ասաց նա: Ի դեպ, Հայաստան ասելով՝ ռուս պրոֆեսորը նկատի ուներ նաև Ղարաբաղը: «Հայաստան ասելով՝ ես հասկանում եմ նաև Արցախը, գիտեմ, որ իրավաբանորեն ճանաչված չէ, բայց դե ֆակտո նա Հայաստան է: Ինձ համար՝ որպես մասնավոր անձի, որպես գիտնական-փորձագետի, այն միասնական պետություն է, միասնական ժողովուրդ: Հայաստանի սիրտը Արցախն է»,- ասաց նա:

# ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆ ՄԵԾ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Ապրիլի 14-ին Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց» համալսարանում տեղի ունեցան Ուսանողների և երիտասարդ գիտնականների ամենամյա միջազգային փիլիսոփայական ընթերցումներ «Քաղաքակրթությունը և մարդը» խորագրով՝ նվիրված աստվածաբան, փիլիսոփա, գիտնական, հոգևորական Պավել Ֆլորենսկու հիշատակին: Մի մարդու, որը, արցախյան հողի ծնունդ լինելով, ռուս ուղղափառ եկեղեցու պատմության գաղափարախոսության, նաև փիլիսոփայության զարգացման մեջ թողել է իր անջնջելի հետքը: Ընթերցումներին մասնակցում էին Մոսկվայի Լոմոնոսովի անվան, ՌԴ Պյատիգորսկի, Դոնի Ռոստովի, Երևանի ռուս-հայկական (սլավոնական), Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց» համալսարանների ուսանողներ և դասախոսներ:

Բացման և ողջույնի խոսքով հանդես եկավ ՀԱԵ Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը: Սրբազանն ասաց, որ Ֆլորենսկու նման խոշոր անհատականությամբ կարող է հպարտանալ ոչ միայն ռուս, այլև հայ ժողովուրդը, քանի որ նա կիսով չափ հայ է: Ֆլորենսկու մայրը՝ Օլգա (Սալոմե) Սաֆարովան (Սաֆարյան), սերում էր Գյուլիստանի Մելիք-Բեգլարյանների տոհմից: Պավել Ֆլորենսկին ծնվել է Հյուսիսային Արցախի Գանձակի նահանգում (ներկայիս Եվլախում): Արցախի թեմի առաջնորդն ասաց, որ ինքը Պ. Ֆլորենսկուն ծանոթացել է 35 տարի առաջ, նրա աշխատություններով: Երիցս ճիշտ են բնութագրել նրան՝ անվանելով ռուսական Լեոնարդո դա Վինչի: Նա աստվածաբան էր, փիլիսոփա, մաթեմատիկոս, ֆիզիկոս, բանասեր, բանաստեղծ... Ունի բազմաթիվ աշխատություններ երկրաչափության, աստղագիտության, մաթեմատիկայի, էլեկտրատեխնիկայի, քիմիայի, կենսաբանության և շատ այլ ոլորտների վերաբերյալ: 30-ից ավելի գյուտերի հեղինակ է: Նրան ծանր ճակատագիր էր բաժին ընկել: Երկու անգամ աքսորվել է, Սոլովկիի ճամբարում անգամ նրա պրպտուն միտքը հանգիստ չի մնացել. նա խիզախել է ստեղծել երկու հսկայական գիտահետազոտական ինստիտուտ: Նա ԽՍՀՄ էլեկտրիֆիկացիայի ծրագրի հիմնադիրներից էր: Զոհ է գնացել ստալինյան բռնարարքներին. գնդակահարել են 1937թ. դեկտեմբերի 8-ին:

«Մենք՝ արցախցիներս, շատ լավ գիտենք՝ ինչ է նշանակում անցնել տառապանքների ու դժվարությունների միջով, և մենք լավագույնս հասկանում ենք՝ ինչպես է ապրել այդ մեծ ճգնավորը: Նա իրոք անցել է սուրբ մարդու ճանապարհ: Նրա մասին ինչքան էլ խոսենք, քիչ է: Մարդ-դարաշրջան»,- այդպես բնորոշեց Պ. Ֆլորենսկուն Պարգև սրբազանը:

Փիլիսոփայական ընթերցումները և հյուրերին ողջունեց ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը՝ նշելով, որ դա նոր, հետաքրքիր նախաձեռնություն է, որը կոչված է միավորելու աշխարհի տարբեր ծայրերում ապրող ուսանողներին և երիտասարդ գիտնականներին՝ հրատապ խնդիրներ քննարկելու նպատակով: Նրա համոզմամբ՝



ժամանակակից մարտահրավերների դարաշրջանում, երբ մեր շուրջը հայտնվում են նոր բաժանարար սահմաններ, աշխարհը դառնում է ավելի ու ավելի անկանխատեսելի, անորոշ, կարևոր է չկորցնել համագործակցելու, միմյանց լսելու ունակությունը: Նա փաստեց, որ Արցախը պատմականորեն եղել է քաղաքակրթությունների խաչմերուկ: Այստեղ խաչվում են նաև աշխարհաքաղաքական հետաքրքրությունները: Եվ իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել արցախյան հողում 30 տարի առաջ, կանխորոշել են ոչ միայն մեր ժողովրդի ճակատագիրը, այլև խորհրդային տարածքում պատմական ընթացքը: «Ուրախ ենք, որ գիտական քննարկումների համար հենց նման հարթակ է հանդիսացել մեր երկիրը»,- ասաց նախարարը՝ ընդգծելով, որ Արցախը դինամիկ զարգացող երկիր է՝ պատմամշակութային հարուստ ժառանգությամբ: Ն.Աղաբալյանը բեղմնավոր աշխատանք մաղթեց փիլիսոփայական ընթերցումներին՝ հավատացած, որ այն կօգնի ավելի լավ ճանաչել և ներկայացնել տաղանդավոր անհատի փիլիսոփայությունը և հոգևոր աշխարհայացքը, որ ուսանողների և երիտասարդ գիտնականների շահագրգիռ շփումները կնպաստեն նոր գաղափարների որոնմանը և նոր լուծումներին, համալսարանների միջև բարեկամությանն ու համագործակցությանը:

Իր ողջույնի խոսքում ՄՄՀ ռեկտոր Դոնարա Գաբրիելյանը անդրադարձավ նաև Ղարաբաղին՝ նշելով, որ այն գորբաչովյան «պերեստրոյկա»-ի անկյունաքարն էր, սակայն «պերեստրոյկա»-ն չդիմացավ փորձությանը, իսկ Արցախը կայացավ որպես ինքնիշխան պետություն: Այսօր այն սիրված վայր է ոչ միայն հայ ուխտագնացների, այլև աշխարհի բարի կամքի տեր մարդկանց համար: Հենց շնորհիվ դրա իրենք ծանոթացել են հրապարակախոս Դենիս Դվորնիկովի հետ և միասին մտահղացել այս միջոցառումը, իսկ ԼՂՀ Նախագահի, կրթության, գիտության և սպորտի նախարարության աջակցությամբ այն կյանքի է կոչվել: ՄՄՀ ռեկտորը չմոռացավ նշել նաև իրենց համալսարանի մասին, որը կրում է համաշխարհային քաղաքակրթություն կրող անհատի և հայ ժողովրդի ինքնության պահպանման գործում մեծ երախտավոր Մեսրոպ Մաշտոցի անունը:

Դենիս Դվորնիկովը համեստորեն միջոցառման գաղափարի հեղինակ համարեց հայ և ռուս ժողովուրդների մշակույթն արտացոլող Պ. Ֆլորենսկուն: Այս նախագծում երկու նպատակ են դրել. Արցախում ստեղծել փիլիսոփայական, քաղաքագիտական հարցերով քննարկումների հարթակ, կարևորել փիլիսոփայության դերն արդի պայմաններում: «Կա երկու տարբերակ՝ լինել օբյեկտ կամ սուբյեկտ: Կարելի է նստել, նայել ու սպասել, թե ինչ կանեն քեզ հետ ուժային կենտրոնները կամ էլ փորձել ինքնաճանաչողությամբ համապատասխան գիտելիքների բազայի շնորհիվ հասկանալ՝ ինչ է կատարվում ու ինչ անել: Փիլիսոփայությունը վերացական գիտություն չէ, այլ շատ կարևոր ու կիրառական, այստեղ օդը հագեցած է փիլիսոփայական մտածողությամբ, ու էներգետիկական տեսակետից շատ ճիշտ կլինի, եթե զարգանա սեփական փիլիսոփայական դպրոցը»,- ասաց նա: Մյուս նպատակը պատմական դեմքերի մասին հիշողությունն է: Այդ առումով հոգևորական, փիլիսոփա, նկարիչ, գյուտարար, բանաստեղծ Պավել Ֆլորենսկին իդեալական պատմական կերպար է:

Ընթերցումներին հանդես եկած ուսանողները և երիտասարդ գիտնականները ներկայացրել են Պ. Ֆլորենսկու կյանքի պատմությունը, ընտանիքը, փիլիսոփայական ժառանգությունը, հայացքները և այլն:

Լոմոնոսովի անվան համալսարանի դոցենտ Անդրեյ Սիտինը իր զեկուցման մեջ նշեց, որ իր համար շատ կարևոր են այն հողի վրա անցկացվող ընթերցումները, որտեղ Ֆլորենսկու արմատներն են. «Առանձնահատուկ հույզեր ենք ապրում, այնպիսի զգացողություններ ունենք, որ այստեղ մի անբացատրելի ուժ կա, որի վրա հենվելով՝ այսպիսի հանճար է մեծացել, ինչպիսին Պավել Ֆլորենսկին է»:

Պավել Ֆլորենսկու ուղղափառ մշակույթի հիմնադրամի տնօրեն Մարիա Տիխոնովան համալսարանի գրադարանին նվիրեց Ֆլորենսկու եզակի հրատարակություններից: Տեղեկացրեց, որ այս տարի լույս է տեսնելու մեծ մտածողի վեցհատորյակը, ինչպես նաև առաջին անգամ կանգնեցվելու է նրա հուշարձանը, բացմանը պաշտոնական հրավեր կուղարկվի Արցախ: Հիմնադրամի կողմից ՌԴ-ում ստեղծվել է երեք թանգարան. Կոստրոմայում՝ հայրական գծով նրա նախնիների ծննդավայրում, տուն-թանգարան՝ Մոսկվայում, Սերգիև Պոսադում՝ հուշահամալիր բռնությունների և հալածանքների ենթարկված զոհերի հիշատակին, որտեղ տեղադրված է նաև Ֆլորենսկու հուշաքանդակը (Մ. Տիխոնովան համեստորեն չասաց, բայց համացանցից իմացանք, որ նա քանդակագործ-մոնումենտալիստ, նկարիչ է, և ինքն է հեղինակը այդ հուշաքանդակի): Նա հանդես եկավ առաջարկությամբ. քանի որ Արցախը նույնպես հայր Ֆլորենսկու հայրենիքն է, ցանկանում է այստեղ էլ տեսնել նրան նվիրված հուշակոթող: Ինչպես նաև նրա տուն-թանգարան տանել մի կտոր Ղարաբաղ՝ հարստացնելու Ֆլորենսկու հայրենիքի հավաքածուն: Նման պատվիրան տվել է Պավել Ֆլորենսկու թոռ հայր Անդրանիկը:

Մարիա Տիխոնովան հույս հայտնեց, որ այս հանդիպումը կտա իր բարի պտուղները, պատրաստ են համագործակցել տարբեր ձևերով, ինչպես, օրինակ՝ բացել Մոսկվա-Սոլովկի-Արցախ ուխտագնացության-զբոսաշրջային երթուղի: Հիմնադրամը հիմնել է Ֆլորենսկու անվան հուշամեդալ: Առաջին երկուսով պարգևատրվել են ՌԴ պատրիարքը, մշակույթի նախարարը, երրորդն էլ նախատեսել են ԼՂՀ Նախագահի համար: Կպարգևատրեն նաև նրանց, ովքեր լավագույնս կհետազոտեն Պ. Ֆլորենսկու գործունեությունը: Ցանկացողները կարող են իրենց հոդվածներն ուղարկել հիմնադրամ: Կոնկրետ այս ընթերցումներում հնչած զեկուցումները լույս կտեսնեն առանձին գրքով:

Միջոցառման համակարգող՝ ՄՄՀ պրոռեկտոր Ղարիբ Բաբայանն ասաց, որ այս գիտաժողովը համալսարանի միջազգային մեծ նախագծի միայն առաջին քայլն է:

**Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

# «ԱՐՄԱԹ»՝ ԱՊԱԳԱՅԻ ԱԼԳՈՐԻԹՄԸ

Ապրիլի 23-ը հիշարժան էր Մարտակերտի շրջանի ակ. Ռադիկ Մարտիրոսյանի անվան միջնակարգ դպրոցի համար: Այստեղ բացվեց «Արմաթ» ինժեներական լաբորատորիան: Հիշեցնենք, որ այս տարվա հունվարին ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության և ՀՀ ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (ԻՏՁՄ) միջև ստորագրվել է հուշագիր՝ Արցախի դպրոցներում ինժեներական լաբորատորիաներ ստեղծելու մասին: Հուշագրի ընդունումից հետո Մատաղիսի դպրոցն առաջինն է ընդգրկվել:



Լաբորատորիայի բացմանը ներկա էր ԱՀ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը, որին դպրոցականները դիմավորեցին աղ ու հացով, իսկ դահլիճում հանդես եկան գրական-երաժշտական համարներով:

«Արմաթ» ծրագրի ղեկավար Սեդրակ Վարդանյանը, շնորհավորելով մատաղիսցիներին հիշարժան իրադարձության առթիվ, տեղեկացրեց, որ դա կազմակերպության կողմից ստեղծված 222-րդ ինժեներական լաբորատորիան է Հայաստանում, որից տասը՝ Արցախում և բացառիկ հնարավորություն է Մատաղիսի դպրոցի համար, քանի որ Հայաստանում 1000 դպրոց դեռ չունի այդ հնարավորությունը, իսկ Երևան քաղաքի դպրոցների՝ 95-ը: Չունեն նաև բազմաթիվ երկրներ: Այս պահի դրությամբ 15 երկիր միության հետ բանակցություններ է վարում իրենց դպրոցներում նման լաբորատորիա ստեղծելու ուղղությամբ: Կոնկրետ Հնդկաստանը նախնական հայտ է ներկայացրել 300 դպրոցի համար:

Ս. Վարդանյանը պարզաբանեց, թե ինչ խնդիրներ են լուծում նորագույն տեխնոլոգիաները և «Արմաթը»: Նախ՝ մասնագիտական կողմնորոշման: Աշակերտների և մասնավորապես գյուղական դպրոցի սովորողների հետ շփումից պարզ է դարձել, որ նրանց գերակշիռ մասը չի կարողանում կողմնորոշվել մասնագիտության ընտրության հարցում՝ կապված ապագայում աշխատանք գտնելու հետ: ՏՏ-ն իր ներկայությունն ունի բոլոր ոլորտներում՝ բժշկության, շինարարության, տնտեսագիտության, իրավագիտության, մանկավարժության մեջ, մի խոսքով՝ ամենուրեք: Առանց բարձր տեխնոլոգիաների այսօր ո՛չ անհատը կարող է մրցունակ լինել, հասնել հաջողությունների, ո՛չ էլ երկիրն ընդհանրապես, աշակերտներին բացատրեց Ս. Վարդանյանը: Այս լաբորատորիաները հնարավորություն են տալիս հմտություններ ձեռք բերել ու դրանցով եկամուտ ստանալ՝ ապրելով իրենց բնակավայրերում: Ասել է թե՝ հնարավորություն են տալիս լուծել սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և, ամենակարևորը՝ անվտանգության խնդիրներ: Գաղտնիք չէ, որ այսօր պատերազմի ելքը որոշում են տեխնոլոգիաները: Ս. Վարդանյանը տեղեկացրեց, որ իրենց միության ուղղություններից մեկն էլ ռազմարդյունաբերությունն է, որը կարող է դառնալ նաև տնտեսության շարժիչ ուժ, ինչպես ցույց է տվել Իսրայելի օրինակը: «Արմաթ»-ի ղեկավարը մեջբերեց մեծագույն գործիչ Բիսմարկի խոսքը՝ պատերազմը ռազմաճակատում չեն հաղթում, պատերազմը հաղթում են դպրոցական նստարանին, այսինքն՝ կրթությամբ: Ս. Վարդանյանը հնարավոր է համարում այդ ճանապարհով առաջիկա 4-5 տարում այնպիսի վիճակ ստեղծել, որ առաջնագծում զինվոր չծառայի, այնտեղ լինեն տեխնիկան և տեխնոլոգիաները, իսկ զինվորը և սպան լինեն ավելի թիկունքում և կառավարեն դրանք:



Նա մի հետաքրքիր դիտարկում էլ արեց. գյուղական բնակավայրերի երեխաներն ավելի նպատակասլաց են, քան քաղաքի: Ծրագրավորման և ռոբոտաշինության գծով վերջին 3-4 տարվա մրցույթներում միշտ հաղթել են շրջանների երեխաները:

Եվս մի հետաքրքիր փաստ. «Արմաթ» լաբորատորիաներ հաճախողների 84%-ն ընդունվել է բուհեր, որոնց 82%-ը՝ բնական գիտությունների և տեխնիկական մասնագիտությունների գծով:

ԱՀ ԿԳՍ նախարար Ն. Աղաբալյանը, դիմելով աշակերտներին, վկայակոչեց արցախցի մի շարք գիտնականների, որոնք սովորել են նրանց նման գյուղական փոքր դպրոցներում ու դարձել աշխարհահռչակ գիտնականներ: «Շատ հավանական է, որ ձեր մեջ նստած է մեր ապագայի գիտնականը, ինժեները, մեր ամենահայտնի զինվորականը»,- ասաց նա՝ հավելելով, որ այսօր ամեն ինչ արվում է նրանց մեջ եղած շնորհքը, կարողությունները, հնարավորությունները զարգացնելու համար: Նա տեղեկացրեց նաև, որ պատահական չէ հուշագրի ստորագրումից հետո առաջին լաբորատորիան Մատաղիսում բացելը. այստեղ սահմանապահ է ոչ միայն զինվորը, այլև աշակերտը, ուսուցիչը, մեծ թե փոքր, և այսուհետ ամեն ինչ առաջինը արվելու է հենց նման բնակավայրերի համար, որ այդտեղի երեխաները լիարժեք զարգանալու հնարավորություն ունենան, մեծանալով՝ իրենց հողում ստեղծեն այն բոլոր բարիքները, որոնք իրենց համար բարեկեցիկ կյանք կապահովեն, իսկ երկրին՝ առաջընթաց: Նախարարը տեղեկացրեց, որ նոր ուսումնականից դպրոց կմտցվի ազգային երգ ու պար ծրագիրը, ինչը կնպաստի, որ երեխաներն ավելի լավ ճանաչեն իրենց ինքնությունը: Իսկ սեպտեմբերին անցկացվելու է առաջին մրցույթը «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների միջև: Մատաղիսի դպրոցականները հնարավորություն կունենան տեսնել՝ ինչի են հասել մյուսները, իսկ հաջորդ տարվանից՝ մասնակցել, հաղթել և հաղթանակն օգտագործել իրենց ու դպրոցի զարգացման համար:

Մատաղիսում ինժեներական լաբորատորիա ստեղծելու առթիվ իր ուրախությունը հայտնեց Ազ պատգամավոր Գագիկ Բաղունցը՝ Հայոց մեծ եղեռնի տարելիցի նախօրյակին նման ձեռնարկումի համար. «Ամենահզոր պատասխանը թուրք ոճրագործին կլինի մեր պետության, մեր ազգի, կրթության, գիտության զարգացումը, մեր հզոր բանակի ստեղծումը: Ես այսօր հպարտ եմ, որ մենք այնքան կամք ունեցանք, դեպի ապագան միտված քաղաքականություն, որ երկրի ծայրամասում ստեղծում ենք մի օջախ, որ մեր երեխաները աշխարհից կտրված չլինեն, մասնակից լինեն կրթության ու գիտության զարգացմանը»: Նա հույս հայտնեց, որ «Արմաթ»-ի վրա կաճեն բերքառատ այգիներ, ինչը կնպաստի մեր երկրի ու ազգի հզորացմանը:

Շրջվարչակազմի աշխատակազմի անունից լաբորատորիայի բացումը կարևորեց և կազմակերպիչներին երախտագիտություն հայտնեց կրթության և սպորտի բաժնի վարիչ Դավիթ Լալայանը: Նրա համոզմամբ՝ դրանով նաև համայնքային խնդիրներ կլուծվեն:

Նոր տեխնոլոգիաների մուտքն իրենց դպրոց ողջունեց կրթօջախի տնօրեն Գեղամ Աղաջանյանը՝ նշելով, որ կունենան տեխնոլոգիական գիտելիքներով զինված սերունդ, որը կյանքի տարբեր ոլորտներում կարող է իրացնել իր գիտելիքները:

Լաբորատորիան ստեղծվել է «Բեյզ մեթըլս» ընկերության հովանավորությամբ: Ն. Աղաբալյանը տեղեկացրեց, որ հաջորդը նախատեսվում է Իշխանաձորում: Իսկ Ս. Վարդանյանն ասաց, որ Արցախից վերադառնալով՝ կմեկնեն Ջավախք և առաջին «Արմաթ»-ը կարմատավորեն այնտեղ էլ:

**Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# «ԹՈՒՄՈ»-Ն ԸՆԴԼԱՅՆՈՒՄ Է ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԸ

«Թումո»-ում ծնողական շաբաթն ապրիլի 16-ին մեկնարկեց նրա գործադիր տնօրեն Մարի Լու Փափազյանի հետ հանդիպումով: Նա ներկայացրեց «Թումո»-ի առաջիկա ծրագրերը, պատասխանեց ծնողների հարցերին:

«Թումո»-ն այսօր ունի 14 հազար աշակերտ իր չորս՝ Երևանի, Դիլիջանի, Գյումրիի և Ստեփանակերտի կենտրոններում, որտեղ երեխաները կրթություն են ստանում տեխնոլոգիաների և դիզայնի համադրությամբ 14 ոլորտներում (սկզբում 4-ն էր), և յուրաքանչյուրն ստանում է իր հնարավորությունների առավելագույն չափով հմտություններ:



Մարի Փափազյանի տեղեկատվությամբ՝ 2019-ին բացվելու է Մասիսի «Թումո»-ն: Ընթացքի մեջ է Կողբի «Թումո»-ի շինարարությունը: «Մեր նպատակը ամբողջ Հայաստանով հաստատվելն է, կստեղծենք 28 կենտրոն »,- ասաց Մ. Փափազյանը: Դրա համար մեծ դրամահավաք է սկսված: Փարիզում, Բեյրութում իրենք բացում են «Թումո», առաջարկ ունեն Մոսկվայից, Քատարից: Արտասահմանում բացելով՝ տարեկան գումար են վաստակում, որն ապահովում է մեկ «Թումո»-ի ստեղծումը Հայաստանում: Արցախում նախատեսում են առնվազն չորս կենտրոն: «Մեր հիմնական նպատակն է 12-18 տարեկան բոլոր երիտասարդների համար հնարավորություն ստեղծել հաճախել «Թումո»,- ասաց տնօրենը:

Մ. Փափազյանը պատմեց նաև նոր ծրագրերի մասին, որոնցում կընդգրկվեն 12-18 տարեկանից բարձր՝ մինչև 28 տարեկան երիտասարդներ: Դրանք են՝ «Թումո-ստուդիա», «Թումո-լաբ» և «Թումո-բանակ»:

**«Թումո-ստուդիան».** կրթական ծրագիր է, որը հիմնականում կենտրոնանում է դիզայնի և աշխատանքային ուսուցման վրա: Ծրագրի ֆինանսավորումն առաջին երեք տարիների համար ապահովված է: Շինարարությունն արդեն ընթանում է Երևանի Թումանյանի անվան այգում (որտեղ «Թումո»-ն է): Աշակերտների համար ստեղծվում է միջավայր, որտեղ նրանք կզբաղվեն դիզայնով և զարդարային-կիրառական արվեստով՝ ասեղնագործություն, կավագործություն, քարի, փայտի վրա փորագրություն, ոսկերչություն, ինչպես նաև խոհարարություն, որպեսզի ովքեր տեխնոլոգիաներով աշխատելու հետաքրքրություն չունեն, զբաղվեն այս ուղղություններով, տիրապետեն մեր ազգային ճարտարապետական ավանդույթներին ու սովորույթներին ու փոխանցեն նոր սերնդին: Ծրագիրը, որը կսկսվի Երևանում, հավանական է կգործի նաև Արցախում: Մ. Փափազյանը տեղեկացրեց, որ այս առումով Գյումրիում սկսել են իրականացնել մի հետաքրքիր նախաձեռնություն: Եթե փորձառությունը հաջողվի, կբերեն Արցախ: Գնել են Գյումրիի շուկան, որն ուզում էին քանդել և նոր բան կառուցել: Բայց հիմա «Թումո»-ի շնորհիվ շուկան պահպանվում է, ստեղծել են հարմարություններ, որ մարդիկ կարողանան այստեղ աշխատել նաև ձմռան պայմաններում, նաև բացել են խոհարարական ստուդիա: Ներկայում փորձում են աշխատել միջազգային ճարտարապետների հետ, որ կարողանան շուկան տպավորիչ դարձնել զբոսաշրջիկների և առհասարակ ժողովրդի համար՝ որպես հետաքրքիր և մանավանդ առողջ սննդի վայր, որտեղ կներկայացվի հայկական խոհանոցը: Կվերականգնեն մոռացվող արհեստները, ինչպես, օրինակ՝ թիթեղագործությունը: Այդ փորձը նույնպես հաջողություն ունենալու դեպքում կտարածեն Արցախում:

**«Թումո-լաբ»** ծրագիրը նրանց համար է, ովքեր ցանկանում են դառնալ ծրագրավորող:Կսովորեցնեն արտադրանք տալ: Ըստ ցանկության՝ աշակերտները կզարգանան մարքեթինգի, դիզայնի, հաշվապահության և այլ ուղղություններով: Ծրագրի ֆինանսավորումը՝ շուրջ 15 մլն եվրո, «Թումոն» ապահովել է Ֆրանսիական համալսարանի, Եվրամիության միջոցներով: Ծրագիրը Երևանում հաջողվելու դեպքում, կբերեն Արցախ, ստահեցրեց Մարի Փափազյանը:

Երրորդ ծրագիրը, որը նախատեսված է 18-ից բարձր տարիքի երիտասարդների համար, կոչվում է **«Թումո-բանակ»**: Նպատակ ունեն 8 զորամասում՝ Կողբում և Արցախում «Թումո»-ներ ստեղծել, որպեսզի զինվորներն իրենց ծառայության ընթացքում հետևեն հետաքրքիր ծրագրեր, նրանց ուղեղները միշտ լինի մարզված, բանակում ծառայելը ոչ միայն գրավիչ դառնա, այլև այնտեղ կարողանան ստանալ ուսում: Ինչպես ասաց Մ. Փափազյանը, գերատեսչական մարմնի համաձայնությամբ պայմանավորվելով համալսարանների հետ՝ որոշ դասեր կանցկացվեն բանակում, զինծառայողները կգնահատվեն. այդպես նաև ժամանակ կշահեն ուսման մեջ: «18 տարին ամենաաշխույժ տարիքն է, երբ անպայմանորեն պետք է նրան հրել դեպի ուսում: Կարդալ, սովորել, զարգանալ. չպետք չէ կանգ առնել, թափը չպետք է կոտրել, որովհետև ուղեղը այնպիսի բան է, որ չաշխատելուց ժանգոտվում է»,-ասաց նա:

Ծնողներն իրենց հավանությունը հայտնեցին ծրագրերի վերաբերյալ, հատկապես՝ «Թումո-բանակ»-ի: Իսկ հայր ծնողներից մեկը հարցրեց, թե ինչպես կարող են իրենց լուման ներդնել:

Այդ առնչությամբ Մարի Փափազյանն ասաց.«Ես միշտ ասում եմ՝ «Թումո»-ն ոչ միայն 14 հազար աշակերտ ունի, 14 հազար էլ ծնող ունի նվազագույնը: Մի հսկայական բանակ ունենք, որ չենք օգտագործում: Փողն այնքան կարևոր չէ, ինչքան՝ գիտելիքները, որոնցով կարող եք ձեր աջակցությունը բերել մեր ծրագրերին: Եթե ամեն ինչ իդեալական է աշխատում, կարիք չկա օգնության, բայց ոչ մի բան իդեալական լինել չի կարող, միշտ որևէ խնդիր լինում է, պետք է բոլոր ուժերը գործադրենք: Մենք պետք է ոչ միայն ձեր ձայնը լսենք, այլև մասնակցությունն ապահովենք մեր աշխատանքի մեջ, որովհետև, անկեղծ ասած, չենք հասցնում: Այսօր այնքան պրոյեկտ ունենք, որ եթե իրար կողքի շարեն ու ինձ հարցնեն՝ ինչպես եմ հասցնում, կասեմ՝ չեմ հասցնում: Մենք ձեր օգնության կարիքը ունենք, ձեր խոհեմության, ձեր անկեղծ կարծիքի: Ես համարում եմ, որ մենք մի ընտանիք ենք, և բոլորս ծառայում ենք մեկ ընդհանուր նպատակի՝ երիտասարդության համար ապահովել ամենալավ ապագան: Եվ ձեռք ձեռքի պիտի տանք»:

☞15

## ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ

# ԲԱՆԱԿ-ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՄՈՒՐ ԿԱՊԸ ՆՈՐ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՎԱԿԱՆՆ Է

«Զորամասի (ստորաբաժանման) հրամանատարի ԱՀՏԱ գծով տեղակալի աշխատանքը՝ մարտի բարոյահոգեբանական ապահովումը պլանավորման, անձնակազմի ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման գործում: Հիմնախնդիրներ և լուծման ուղիներ». սա էր ապրիլի 11-ին ՊԲ կենտրոնական ենթակայության Ն զորամասում տեղի ունեցած համաբանակային կոնֆերանսի թեման:

Կոնֆերանսին հրավիրվել ու մասնակցում էին պետական տարբեր կառույցների ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Գևորգ Ալթունյանը:



Ներկայացնելով քննարկվելիք թեմաների հիմնական ուղղությունները՝ ՊԲ հրամանատարի ԱՀՏԱ գծով տեղակալ, գեներալ-մայոր Վարդան Բալայանը միաժամանակ անդրադարձավ ռազմաքաղաքական իրավիճակին, առաջնագծում տիրող լարվածությանն ու տարվող նպատակային աշխատանքներին: Կոնֆերանսի հիմնական նպատակներից մեկն էլ հասարակայնության տարբեր խավերը ներկայացնող անհատներին ու կազմակերպություններին համախմբելն է մեկ նպատակի և մեկ գաղափարի շուրջ, շեշտեց Վ. Բալայանը:

ՊԲ ԱՀՏԱ բաժնի պետ, գնդապետ Նորայր Մկրտչյանը հանդես եկավ «Մարտի բարոյահոգեբանական ապահովման (ԲՀԱ) պլանավորումը, պետական կառույցների հետ փոխգործակցության կազմակերպումը» թեմայով զեկուցմամբ:

Բարոյահոգեբանական ապահովումը անձնակազմի շրջանում բարոյական և հոգեբանական կայունության ձևավորման, պահպանման և վերականգնման նպատակով ցանկացած իրավիճակում գլխավոր հրամանատարության, հրամանատարների (պետերի), շտաբների, ԱՀՏԱ կառույցի, պետական ու ռազմական կառավարման այլ մարմինների և պաշտոնատար անձանց առաջադրանքների անվերապահ կատարումն ապահովող՝ նպատակներով, առաջադրանքներով, ուղղություններով, տեղաբաշխման վայրով, ժամանակով, հետևողականությամբ, ներգրավված ուժերով և միջոցներով համաձայնեցված գործունեության համալիր է, որի գերնպատակը ժամանակակից մարտի պայմաններում առաջադրված մարտական խնդրի կատարմանը գաղափարապես և մասնագիտորեն, ֆիզիկապես ու հոգեբանորեն պատրաստակամ զինծառայող ունենալն է, նշեց Ն. Մկրտչյանը:

Բանախոսը նաև անդրադարձավ ԲՀԱ-ի գործընթացի կառուցվածքին, տեղեկատվական-դաստիարակչական, հոգեբանական ռազմասոցիալական (սոցիալ-իրավական), մշակութաժամանցային աշխատանքներին ու հակառակորդի տեղեկատվական-հոգեբանական ազդեցությունից մեր զորքերի (ուժերի) պաշտպանությանը: Իբրև առկա հիմնախնդիրների լուծման ուղիներ՝ նա մատնանշեց գաղտնիություն պարունակող տեղեկատվության արտահոսքը բացառելը, գաղտնիության ռեժիմը պահպանելու նպատակով զինծառայողների կողմից բջջային հեռախոսների օգտագործումն արգելելու պարագայում նրանց ծնողների ու հարազատների հետ հաղորդակցվելու հարցի լուծումը, ինչպես նաև զինծառայողների համար տնից ուղարկվող ծանրոցների և կապոցների տեղափոխման կանոնակարգումը: Նա առաջարկեց ծնողների և հարազատների հետ կապը պահել նամակագրության կամ ստեղծված գծալարային կապի, իսկ ծանրոցների տեղափոխումն իրականացնել փոստային ծառայությունների միջոցով:

ՊԲ ԱՀՏԱ բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ Դավիթ Հակոբյանը խոսեց մարտական գործողությունների նախապատրաստման փուլում և ընթացքում ստորաբաժանումներում տեղեկատվական-դաստիարակչական աշխատանքների կազմակերպման խնդիրների շուրջ:

Կարևորելով տեղեկատվական աշխատանքների իրականացման ժամանակ գաղտնիության ռեժիմի պահպանումը՝ նա հատկանշեց, որ արգելվում է լուսաբանել զորքերի տեղաբաշխումը, ռազմական օբյեկտների պահպանության ու պաշտպանության կազմակերպման մասին տվյալները, զորքերի մարտական կիրառման կարգը, ստորաբաժանումների ու զորամասերի համարները, զորքերի գործողությունների մարտավարությունն ու մարտական համակարգերի կիրառման արդյունավետությունը բնութագրող տվյալները: Իսկ զորքերի կորուստների վերաբերյալ տվյալներն, ըստ բանախոսի, անհրաժեշտ է հրապարակել՝ ելնելով պաշտպանության նախարարության հաղորդագրությունից:

ՊԲ տեղեկատվության և ՀՀԿ բաժնի պետ, գնդապետ Սենոր Հասրաթյանի ելույթը «Ռազմատեղեկատվական աշխատանքի կազմակերպման առանձնահատկություններն ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության արդի զարգացումներում» թեմայով էր: Ս. Հասրաթյանը մասնավորապես անդրադարձավ ռազմատեղեկատվական և ռազմաքարոզչական աշխատանքների անթերի կատարման խնդրին՝ այս շրջանակում շեշտելով, որ մարտադաշտում կարելի է հասնել հաջողության ոչ միայն փայլուն մարտավարությամբ, այլև այդ ամենի շուրջ իրականացվող գրագետ տեղեկատվական ու քարոզչական աշխատանքով: Իսկ դրանում, բացի բանակային ենթակայության տեղեկատվական համակարգից, լուրջ անելիքներ ունեն նաև հանրապետությունում գործող զանգվածային լրատվամիջոցները: Բանախոսի համոզմամբ՝ տեղեկատվությամբ զբաղվող ամեն ոք, հատկապես երբ ապրում է հավանական պատերազմի վերսկսման պայմաններում, պետք է գիտակցի, որ լրագրության հիմնական նպատակն իրական փաստերով հիմնավորված տեղեկությունների հայթայթումն ու տարածումն է հանրության շրջանում, այլ ոչ թե կասկածելի աղբյուրներից ստացված և սենսացիոն հնչողություն ենթադրող լուրերի շրջանառումը:

ԱՀ պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդի նախագահ, ԱրՊՀ պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանն իր ելույթում մատնանշեց այն հիմնական խնդիրները, որոնք պատճառ են հանդիսանում հասարակության կողմից հակասական, երբեմն էլ ոչ դրական գնահատականներ տալուն: Նրա խոսքով՝ խորհրդի անդամները պարբերաբար լինում են զորամասերում, դիրքապահ զինվորների կողքին, մասնակցում են սոցիալապես անապահով ու աջակցության կարիք ունեցող մանկահասակ ու դպրոցահասակ երեխաների համար իրականացվող մարդասիրական միջոցառումներին՝ գործուն աջակցություն ցույց տալով: Առկա հիմնախնդիրների վերաբերյալ առաջարկներ ներկայացնելով՝ Վ. Յարամիշյանը բարձր գնահատեց հասարակության և հասարակական կազմակերպությունների ներուժի կիրառումը երկրի պաշտպանունակության ամրապնդման գործում: Երբ բանակի խնդիրները դառնում են հասարակությանը և՝ հակառակը, նշանակում է՝ ապահովված է բանակ-հասարակություն ամուր կապը, իրագործվում է «Ազգ-բանակ» կոնցեպտը, ուրեմն՝ հաջողություններն անպակաս են լինելու, համոզմունք հայտնեց պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդի նախագահը:

Զեկուցումներից հետո հնչեցին ելույթներ, որոնցով հանդես եկան Ն զորամասի հրամանատարի ԱՀՏԱ գծով տեղակալ, մայոր Արամ Ավետիսյանը, ԱՀ «Մայրություն» ՀԿ նախագահ Հասմիկ Միքայելյանը և գնդերեց Սարգիս սարկավագ Աբյանը:

**Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

# ԱՂՄԿՈՒՄ Է ԱՆՑՅԱԼԸ, ՊԱՀԱՆՋՈՒՄ՝ ՆԵՐԿԱՆ

Որքան էլ ցավալի է, հայ ժողովրդի պատմությունը լի է պայքարով: Պայքար, որ արյունով է ողողել մեր պատմության էջերը: Դրա շնորհիվ է, թե՞ դիմանալու, տոկալու և համբերելու արդյունքն է, որ, չնայած բոլոր փորձություններին, հայ ազգը մինչ օրս շարունակում է գոյություն ունենալ: Շարունակում է ապրել ու ապացուցել աշխարհին, որ հայ մարդն ունի կամք, ունի պայքարելու ու չհանձնվելու կամք:

Շուրջ մեկ դար առաջ ևս հայ մարդու գլխին վտանգ էր ծառացե. նրան ուզում էին ոչնչացնել, ջնջել պատմությունից:

Թեև 1915 թվականը մնացել է անցյալում, բայց վերքերը, սպիները չեն ապաքինվում, ու դժվար թե երբևէ անհետանան, կորչեն, քանի որ այն, ինչ զգացել են մեր պապերը, մնացել է մեր արյան մեջ… Դաժան կոտորած, որի արդյունքում զոհ գնաց մեկ ու կես միլիոն մարդ...

Իհարկե, ցեղասպանության ցավը շատ մեծ է, և պետք է հիշել երիտթուրքական հրեշավոր ծրագրին զոհ գնացած անմեղ զոհերին:

Հայերը սպանվեցին, քանի որ չցանկացան ուրանալ իրենց կրոնը, հետևաբար նաև՝ իրենց ազգությունը, լեզուն ու մշակույթը:

Ինչո՞ւ եղավ Ավարայրի ճակատամարտը: Պատասխանը նույնն է. հայերը չուզեցան ուրանալ իրենց կրոնն ու ընդունել կրակապաշտությունը:

Մեր պապերն իրենց արյունն են տվել՝ պահելու քրիստոնեական արժեքները: Ի՞նչ ենք անում մենք այսօր: Արդյոք ապրո՞ւմ ենք այնպես, որ պահենք այն նույն արժեքները, որոնց համար մեր պապերն իրենց կյանքն են տվել: Այսօր, երբ բոլորս սգում ենք անմեղ զոհերի հիշատակը, ուզում եմ կոչ անել բոլորիս՝ պահել քրիստոնեական արժեքները. այս է պահանջում ներկան:

**Արթուր ԴԱԼԼԱՔՅԱՆ**
**Միրիկի միջնակարգ դպրոցի զինղեկ**

# ՀԻՇԱՏԱԿԻ ՏՈՒՐՔ

*Անպարտելի է այն ժողովուրդը, որ ղեկավարվում է ոգու ձեռքով:*

**Գ. Նժդեհ**

Քարահունջի հիմնական դպրոցի պատմության ուսուցչուհի Ժ.Ստեփանյանը գյուղի ակումբում կազմակերպեց միջոցառում՝ նվիրված ապրիլյան քառօրյա պատերազմի և Հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակին: Ներկա էին համայնքի ղեկավար Իգնատ Լալայանը, դպրոցի տնօրեն Արթուր Լալայանը, ուսուցիչներ, բնակիչներ: Միջոցառումը սկսվեց մեկ րոպե լռությամբ. հոտնկայս հարգանքի տուրք մատուցվեց բոլոր ժամանակներում զոհված հայորդիների հիշատակին:



Բացման խոսքով հանդես եկավ կազմակերպիչ Ժ.Ստեփանյանը: Նա ասաց, որ ազգի նահատակների հիշատակը վառ պահելը աշակերտներին մղում է նրանց օրինակով առաջնորդվելու, սերմանում այն խոր գիտակցումը, որ սերը դեպի հայրենի երկիր և ժողովուրդ բարձր է բոլոր զգացմունքներից: Բանիմաց ուսուցչուհին ելույթի վերջում դիմեց Նժդեհյան կոչով. «Փոքր ազգերը պարտադրորեն ավելի հայրենասեր պիտի լինեն, քան մեծերը, մենք՝ ավելի, քան բոլորը: Հայրենապաշտ պիտի լինենք մենք»:

Այնուհետև ելույթ ունեցան դպրոցի նախկին և ներկա աշակերտները՝ հանգամանալից ներկայացնելով հայ ժողովրդի մաքառումների ուղին: Մեկը մյուսին շարունակելով՝ նրանք արտահայտեցին իրենց զգացմունքները, որոնք փոխանցվեցին ներկաներին:

2016թ. ապրիլը նույնպես ներկվեց սևով, ինչպես 1915-ի ապրիլը: Ինչքա՜ն տառապանք տեսավ հայ ազգը այս ամսին: Մեր հիշողության մեջ միշտ կմնան բոլոր նրանց անունները, ովքեր հանուն հայրենիքի, հանուն այսօրվա տվեցին իրենց կյանքը: Մենք միշտ կհիշենք ձեզ, Արմենակ Ուրֆանյան, Ռոբերտ Աբաջյան, Ադամ Սահակյան, Վրեժ Մարգարյան, Քյարամ Սլոյան, մեր մյուս նահատակներ, անմեղ զոհ փոքրիկ Վաղարշակ Գրիգորյան և բոլոր նրանց, ովքեր հուշարձանացան… Հավե՛րժ փառք քեզ, Հայոց բանակի զինվո՛ր:

Հայրենասիրական ոգին թևածեց ներկաների հոգում, երբ քույր ու եղբայր Միգել և Միլենա Աղաբեկյանները կատարեցին «Հայոց բանակ» երգը, մյուսները՝ ևս մի շարք հայրենասիրական երգեր, խանդավառեցին, բայց և հուզեցին. պատերազմ տեսած ժողովրդի համար այն նորից վերապրելը հզոր կամքի դրսևորում է: Ուսուցչուհի Ժաննա Ստեփանյանը կոչ արեց չընկճվել, չլացել և միշտ սպասել նոր հաղթանակների:

Երեխաներն արտասանեցին Պ.Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմից «Ողջանք եղեռնական» գլուխը, իսկ Ժ. Ստեփանյանը նշեց, որ դա Թուրքիայի կառավարող ուժերի կողմից կազմակերպված ցեղասպանություն էր, որի արդյունքում տեղահանության և սպանդի ենթարկվեց Արևմտյան Հայաստանի հայ բնակչությունը: Այն ցեղասպանություն էր, քանի որ պետական մակարդակով ծրագրված մի ամբողջ ազգի բնաջնջում էր: Սակայն մինչև այսօր այս անհերքելի փաստը համառորեն չի ընդունում Թուրքիան: Թերևս այդ էր պատճառը, որ թշնամին փորձեց հարյուր տարի անց նոր ոճրագործություն իրականացնել, բայց դրան էլ դիմացանք:

Համայնքապետարանի աշխատակից Մարգարիտա Ղահրամանյանը բնակչության անունից շնորհակալություն հայտնեց դպրոցի տնօրինությանը, միջոցառման կազմակերպիչ Ժ.Ստեփանյանին՝ նշելով, որ գյուղերում մշակութային կյանքը ակտիվ պահելու հիմնական ծանրաբեռնվածությունը դպրոցի ուսերին է: Նա առաջարկեց ազգային, պետական տոները, իրադարձային միջոցառումներն այդպես միշտ անցկացնել համայնքի անդամների ընդգրկմամբ:

**Անուշ ՔԱՄԱԼՅԱՆ**
**Քերթի Կ.Հակոբյանի անվան միջն. դպրոցի նախապատրաստական խմբի դաստիարակ**

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

# ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ 2017-2018 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Յուրաքանչյուր երկրի կրթական խնդիրները բխում են տվյալ երկրի հասարակության, ազգի և պետության շահերից: Կիրթ մարդը, լավ մասնագետը, դժվարություններին դիմակայելու ընդունակ քաղաքացին պետության համար հարստություն են: Կրթության համակարգում իրականացվող բոլոր բարեփոխումները մեկ նպատակ են հետապնդում՝ կրթել ու դաստիարակել այնպիսի սերունդ, որն իր գիտելիքներով ու կարողություններով գերազանցի նախորդ սերնդին: Նման միտում ունի նաև դպրոցականների առարկայական օլիմպիադան:

Կարևորելով դպրոցականների ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը՝ դպրոցականների առարկայական օլիմպիադաների նպատակը շարունակում են մնալ սովորողների ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, աշխատասիրությունը, բարձր պատասխանատվությունը:

Օլիմպիադայի նպատակն է նաև տաղանդավոր, շնորհալի և ստեղծագործական կարողություններ ունեցող երեխաների հայտնաբերումը, ուսումնական առարկաների նկատմամբ նրանց հետաքրքրությունների զարգացումը, այդ առարկաներից խոր ու կայուն գիտելիքներ ստանալուն նպաստելը, ինչպես նաև ստեղծագործող ուսուցիչների ներգրավումը շնորհալի երեխաների հայտնաբերման և ուսուցանման գործում:

Դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլը նախապատրաստելու և անցկացնելու նպատակով ինչպես յուրաքանչյուր տարի, այս տարի ևս ստեղծվել են հանրապետական կազմկոմիտե և առարկայական հանձնաժողովներ, որոնց անվանական կազմը նախարարի հաստատմանն է ներկայացրել կրթության և գիտության վարչությունը: Կազմկոմիտեն մշակել է օլիմպիադայի հանրապետական փուլի նախապատրաստական աշխատանքների իրականացման, անցկացման, բողոքարկման ընթացակարգերը, ինչպես նաև վերահսկողության իրականացման, լուսաբանման, թափանցիկության և մասսայականության ապահովման մեխանիզմները՝ օլիմպիադայի ողջ ընթացքում պահպանելով նրանց հավասար հնարավորությունները, ապահովելով գործընթացի անաչառությունը:

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի 30-րդ հոդվածի 24-րդ կետի պահանջներով ու հիմք ընդունելով «Դպրոցականների առարկայական օլիմպիադաների անցկացման կարգի» պահանջները, ինչպես նաև ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարի 2018թ. հունվարի 9-ի N 1/Մ հրամանը՝ փետրվարի 24-ից մարտի 16-ն ընկած ժամանակահատվածում Ստեփանակերտի N 8 հիմնական (հոսքային) դպրոցում 15 առարկաներից (հայոց լեզու, հայ գրականություն, ռուսաց լեզու, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, պատմություն, աշխարհագրություն, քիմիա, կենսաբանություն, մաթեմատիկա, ֆիզիկա, ինֆորմատիկա, հայոց եկեղեցու պատմություն, նախնական զինվորական պատրաստություն) անց է կացվել դպրոցականների 2017-2018 ուստարվա առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլը՝ ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի մարզային փուլի ժամանակացույցի համապատասխան՝ յուրաքանչյուր առարկայի հատկացնելով առանձին օր: Շրջվարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության բաժինները օլիմպիադայի շրջանային (քաղաքային) փուլի արդյունքների ամփոփման հիման վրա հանրապետական փուլին մասնակցելու իրավունք են տվել 419 դպրոցականների՝ անցած ուսումնական տարվա 421-ի փոխարեն, որից բացակայել է 5 աշակերտ: Ինչպես տեսնում ենք, մասնակիցների ընդհանուր քանակը գրեթե հավասար է:

*Մասնակիցների քանակն ըստ շրջանների*

| Շրջան | 2011-2012 | 2012-2013 | 2013-2014 | 2014-2015 | 2015-2016 | 2016-2017 | 2017-2018 |
|---|---|---|---|---|---|---|---|
| ք.Ստեփանակերտ | 85 մասն. | 85 մասն. | 108 մասն. | 128 մասն. | 151 մասն. | 159 մասն | 156 մասն. |
| Ասկերան | 40 | 46 | 46 | 47 | 47 | 57 | 55 |
| Մարտակերտ | 41 | 46 | 46 | 46 | 46 | 51 | 50 |
| Մարտունի | 55 | 53 | 49 | 53 | 53 | 59 | 58 |
| Հադրութ | 36 | 40 | 38 | 32 | 31 | 35 | 35 |
| Շուշի | 17 | 17 | 19 | 15 | 28 | 21 | 19 |
| Շահումյան | 15 | 17 | 14 | 17 | 12 | 12 | 16 |
| Քաշաթաղ | 26 | 33 | 29 | 35 | 30 | 27 | 30 |
| **Ընդամենը** | 315 | 337 | 349 | 373 | 398 | 421 | 419 |

*Մասնակիցների քանակն ըստ առարկաների*

| ՀՀ | Առարկա | 2011-2012 | 2012-2013 | 2013-2014 | 2014-2015 | 2015-2016 | 2016-2017 | 2017-2018 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հայոց լեզու | 82 | 63 | 69 | 65 | 63 | 51 | 68 |
| 2 | Հայ գրականություն | 25 | 24 | 29 | 30 | 30 | 23 | 30 |
| 3 | Ռուսաց լեզու | 39 | 45 | 41 | 39 | 68 | 39 | 51 |
| 4 | Անգլերեն | 31 | 24 | 39 | 53 | 40 | 48 | 37 |
| 5 | Ֆրանսերեն | - | - | - | 5 | 6 | 5 | 6 |
| 6 | Գերմաներեն | - | - | - | - | 7 | 2 | 5 |
| 7 | Պատմություն | 34 | 48 | 34 | 43 | 39 | 26 | 29 |
| 8 | Աշխարհագրություն | 27 | 22 | 26 | 18 | 21 | 45 | 27 |
| 9 | Մաթեմատիկա | 21 | 24 | 15 | 17 | 24 | 62 | 49 |
| 10 | Ֆիզիկա | 4 | 8 | 12 | 10 | 10 | 22 | 21 |
| 11 | Քիմիա | 18 | 22 | 17 | 15 | 11 | 18 | 3 |
| 12 | Կենսաբանություն | 27 | 20 | 20 | 20 | 26 | 29 | 8 |
| 13 | Ինֆորմատիկա | 7 | 4 | 1 | 2 | 4 | 1 | 13 |
| 14 | ՀԵՊ | - | 9 | 14 | 23 | 23 | 17 | 21 |
| 15 | ՆԶՊ | - | 24 | 32 | 38 | 26 | 33 | 51 |
| | **Ընդամենը** | **315** | **337** | **349** | **373** | **398** | **421** | **419** |

Անցյալ տարվա համեմատ մասնակիցների քանակը նկատելիորեն աճել է հայոց լեզու, ռուսաց լեզու, հայ գրականություն, ֆրանսերեն, գերմաներեն, պատմություն, հայոց եկեղեցու պատմություն, ինֆորմատիկա և նախնական զինվորական պատրաստություն առարկաներից:

Օլիմպիադայի մասնակիցների գրավոր աշխատանքներն ստուգելու նպատակով ստեղծվել են առարկայական ստուգող հանձնաժողովներ՝ Ստեփանակերտի հանրակրթական դպրոցների փորձառու ուսուցիչների մասնակցությամբ: Գրավոր աշխատանքների ստուգումները բոլոր առարկաներից սկսվել են նույն օրը, անհրաժեշտության դեպքում՝ շարունակվել հաջորդ օրը: Արդյունքները հանրապետական հանձնաժողովի կողմից ամփոփվել են և նույն օրը տեղադրվել նախարարության www.edu.nkr.am կայք էջում: Բողոքարկման օրերին հանրապետական հանձնաժողովին դիմել են հայ գրականություն, ՆԶՊ, ռուսաց լեզու, գերմաներեն, անգլերեն, աշխարհագրություն առարկաներից 38 մասնակիցներ, որոնց հնարավորություն է տրվել ծանոթանալ իրենց գրավոր աշխատանքներին: Հանրապետական առարկայական հանձնաժողովների նախագահների կողմից կատարվել է գրավոր աշխատանքների վերստուգում, և արդյունքում 16-ի միավորները փոխվել են՝ հօգուտ աշակերտների: Փոփոխության մասին ևս տեղեկատվություն է տեղադրվել նախարարության կայք էջում:

*Մրցանակային տեղերն ըստ առարկաների*

| | | |
|---|---|---|
| Հայոց լեզվից | 2 աշակերտ | 3-րդ տեղ |
| Հայ գրականությունից | 1 աշակերտ | 3-րդ տեղ |
| Ռուսաց լեզվից | 3 աշակերտ | 2-րդ տեղ |
| | 6 աշակերտ | 3-րդ տեղ |
| Անգլերենից | 1 աշակերտ | 3-րդ տեղ |
| գերմաներեն | 2 աշակերտ | 2-րդ տեղ |
| | 1 աշակերտ | 3-րդ տեղ |
| Պատմությունից | 2 աշակերտ | 1-ին տեղ |
| | 1 աշակերտ | 3-րդ տեղ |
| Աշխարհագրությունից | 1 աշակերտ | 2-րդ տեղ |
| | 7 աշակերտ | 3-րդ տեղ |
| Մաթեմատիկայից | 1 աշակերտ | 1-ին տեղ |
| | 2 աշակերտ | 2-րդ տեղ |
| | 5 աշակերտ | 3-րդ տեղ |
| Կենսաբանությունից | 3 աշակերտ | 3-րդ տեղ |
| Քիմիայից | - | - |
| Ֆիզիկայից | 1 աշակերտ | 2-րդ տեղ |
| | 1 աշակերտ | 3-րդ տեղ |
| ինֆորմատիկայից | - | - |
| Հայոց եկեղեցու պատմությունից | 1 աշակերտ | 1-ին տեղ |
| | 1 աշակերտ | 2-րդ տեղ |
| Նախնական զինվորական պատրաստությունից | 2 աշակերտ | 1-ին տեղ |
| | 4 աշակերտ | 2-րդ տեղ |
| | 6 աշակերտ | 3-րդ տեղ |

*Մրցանակային տեղերն ըստ առարկաների վերջին յոթ տարվա կտրվածքով*

| | 2011-2012 մրց.տեղ | 2012-2013 մրց.տեղ | 2013-2014 մրց.տեղ | 2014-2015 մրց.տեղ | 2015-2016 մրց.տեղ | 2016-2017 մրց.տեղ | 2017-2018 մրց.տեղ |
|---|---|---|---|---|---|---|---|
| Հայոց լեզու | 6 | 4 | 10 | 9 | 8 | 3 | 2 |
| Հայ գրականություն | 6 | 6 | 4 | 5 | 3 | 3 | 1 |
| Ռուսաց լ. և գրակ. | 5 | 6 | 4 | 6 | 12 | 10 | 9 |
| Ֆրանսերեն | | | | | 1 | 3 | - |
| Գերմաներեն | | | | | 1 | 2 | 3 |
| Անգլերեն | 7 | 8 | 9 | 8 | 7 | 11 | 1 |
| Պատմություն | 8 | 8 | 5 | 4 | 7 | 5 | 3 |
| Աշխարհագրություն | 3 | 1 | 2 | 2 | 6 | 4 | 8 |
| Մաթեմատիկայից | 4 | 2 | 5 | 3 | 7 | 8 | 8 |
| Ֆիզիկա | 3 | 3 | 2 | 3 | 3 | 4 | 2 |
| Քիմիա | 3 | - | - | - | - | - | - |
| Կենսաբանություն | 2 | 2 | 2 | 3 | 3 | 2 | 3 |
| Ինֆորմատիկա | 2 | 1 | - | - | - | - | - |
| Հայ եկեղեցու պատմ | - | 2 | 2 | 7 | 5 | 3 | 2 |
| ՆԶՊ | - | 8 | 7 | 14 | 10 | 12 | 12 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 49 | 51 | 52 | 64 | 73 | 70 | 54 |

Նախորդ տարվա համեմատ մրցանակային տեղերի քանակը նվազել է հայոց լեզու, ռուսաց լեզու, հայ գրականություն, անգլերեն, ֆրանսերեն, պատմություն, հայոց եկեղեցու պատմություն, ֆիզիկա առարկաներից, իսկ աշխարհագրություն և կենսաբանություն առարկաներից մրցանակային տեղերն ավելացել են:

Իհարկե, անհանգստացնող է բոլոր առարկաներից մրցանակային տեղերի նվազելու փաստը, բայց հատկապես անհանգստացնող են հայոց լեզու, հայ գրականություն, պատմություն առարկաներից աշակերտների թույլ գիտելիքները:

*Այսպես, հանրապետական փուլի արդյունքներով՝*

| 2011-2012 ուստարում | 2012-2013 ուստարում | 2013-2014 ուստարում | 2014-2015 ուստարում | 2015-2016 ուստարում | 2016-2017 ուստարում | 2017-2018 ուստարում |
|---|---|---|---|---|---|---|
| 4 աշ.գրավել են 1-ին տեղ | 9 աշ.գրավել են 1-ին տեղ | 7 աշ.գրավել են 1-ին տեղ | 13 աշ.գրավել են 1-ին տեղ | 14 աշ.գրավել են 1-ին տեղ | 11 աշ.գրավել են 1-ին տեղ | 6 աշ.գրավել են 1-ին տեղ |
| 16 աշ.գրավել են 2-րդ տեղ | 15 աշ.գրավել են 2-րդ տեղ | 11 աշ.գրավել են 2-րդ տեղ | 16 աշ.գրավել են 2-րդ տեղ | 24 աշ.գրավել են 2-րդ տեղ | 21 աշ.գրավել են 2-րդ տեղ | 14 աշ.գրավել են 2-րդ տեղ |
| 29 աշ.գրավել են 3-րդ տեղ | 27 աշ.գրավել են 3-րդ տեղ | 34 աշ.գրավել են 3-րդ տեղ | 35 աշ.գրավել են 3-րդ տեղ | 35 աշ.գրավել են 3-րդ տեղ | 38 աշ.գրավել են 3-րդ տեղ | 34 աշ.գրավել են 3-րդ տեղ |
| *49 մրցանակային տեղ* | *51 մրցանակային տեղ* | *52 մրցանակային տեղ* | *64 մրցանակային տեղ* | *73 մրցանակային տեղ* | *70 մրցանակային տեղ* | *54 մրցանակային տեղ* |

Այս տարի մրցանակային տեղ չունեցանք ֆրանսերեն, քիմիա և ինֆորմատիկա առարկաներից. ի դեպ, նշեմ, որ ինֆորմատիկա առարկայից վերջին հինգ, իսկ քիմիա առարկայից՝ վերջին վեց ուսումնական տարիների արդյունքներով մրցանակային տեղեր չենք ունեցել: Այս ուսումնականում մրցանակային տեղերի մեծ մասը բաժին հասավ ռուսաց լեզու (9 մրցանակային տեղ), աշխարհագրություն (8), մաթեմատիկա (8) և ՆԶՊ (12) առարկաներին:

Նախորդ ուսումնական տարվա համեմատ աճել են Մարտակերտի և Հադրութի շրջանների մրցանակային տեղերը, իսկ Ստեփանակերտ քաղաքի, Մարտունու և Շուշիի շրջանների մրցանակային տեղերը նվազել են:

Շուշիի և Շահումյանի շրջանները հանրապետական փուլի արդյունքներով մրցանակային տեղեր չունեցան:

*Ըստ շրջանների մրցանակային տեղերի քանակը*

| Շրջան | 1-ին տեղ | 2-րդ տեղ | 3-րդ տեղ | ակտիվ մասնակից | մրց.տ./ակտ մ. 2017-2018 |
|---|---|---|---|---|---|
| ք.Ստեփանակերտ | - | 7 | 17 | **20** | 24/20 |
| Ասկերան | 3 | 2 | 6 | **15** | 11/15 |
| Մարտակերտ | - | 3 | 6 | **4** | 9/4 |
| Մարտունի | 3 | 1 | 2 | **4** | 6/4 |
| Հադրութ | - | 1 | 2 | **3** | 3/3 |
| Շուշի | - | - | - | **2** | -/2 |
| Քաշաթաղ | - | - | 1 | - | 1/- |
| Շահումյան | - | - | - | - | -/- |
| **Ընդամենը** | **6** | **14** | **34** | 48 | **54/48** |

Այսպիսով՝ մրցանակային տեղերի քանակի առումով 1-ին տեղում է Ասկերանի շրջանի թիմը՝ 11 տեղ (20 %), 2-րդ տեղում՝ Մարտակերտի շրջանը՝ 9 (18 %) և 3-րդ տեղում է Ստեփանակերտի թիմը՝ 24 (15,4 %):

Այս գոհացուցիչ փաստերի կողքին ուզում եմ կանգ առնել մեզ բոլորիս հուզող մեկ այլ հարցի վրա: Ինչո՞վ բացատրել, որ հայոց լեզու առարկայի 68 մասնակցից մրցանակային տեղ է գրավել ընդամենը 2 աշակերտ, հայ գրականություն առարկայի 30 մասնակցից՝ միայն 1, անգլերենի 37 մասնակցից՝ 1 աշակերտ, պատմություն առարկայի 29 մասնակցից՝ 3 հոգի, հայոց եկեղեցու պատմություն առարկայի 21 մասնակցից՝ 2 աշակերտ, դա այն դեպքում, երբ աշխարհագրություն առարկայի 27 մասնակցից 8 աշակերտի, գերմաներենի 5 մասնակցից՝ 3-ին, նախնական զինվորական պատրաստություն առարկայի 51 մասնակցից 12-ին հաջողվեց գրավել մրցանակային տեղեր:

Ավելացնեմ նաև, որ այս տարի դրական՝ 8-միավորային շեմը չկարողացավ հաղթահարել 63 մասնակից, որը կազմում է օլիմպիադայի ընդհանուր մասնակիցների 15,75 %-ը:

Այս առումով ըստ առարկաների՝ պատկերը հետևյալն է՝

- հ. լեզու առարկայի 68 մասնակցից - 3 աշակերտ,
- հայ գրականություն առարկայի 30 մասնակցից - 12 աշակերտ,
- անգլերեն առարկայի 37 մասնակցից - 3 աշակերտ,
- մաթեմատիկա առարկայի 49 մասնակցից - 17 աշակերտ,
- ֆիզիկա առարկայի 21 մասնակցից - 16 աշակերտ,
- պատմություն առարկայի 29 մասնակցից - 4 աշակերտ,
- աշխարհագրություն առարկայի 27 մասնակցից - 1 աշակերտ,
- ինֆորմատիկա առարկայի 1 մասնակցից - 1 աշակերտ,
- քիմիա առարկայի 3 մասնակցից - 1 աշակերտ,
- հայոց եկեղեցու պատմություն առարկայի 21 մասնակցից - 2 աշակերտ,
- ՆԶՊ առարկայի 51 մասնակցից - 3 աշակերտ:

Օլիմպիադայի արդյունքներով ամենացածր միավորները գրանցվել են ֆիզիկա առարկայից, և ցավալին այն է, որ ֆիզմաթ դպրոցի 11-րդ դասարանի երկու աշակերտի գրավոր աշխատանքները գնահատվել են 0, 9-րդ և 11-րդ դասարանների 2 աշակերտինը՝ 1, բայց նույն առարկայից ամենաբարձր 18 միավորը վաստակել է Ասկերանի շրջանի Սզնեքի միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Արմեն Սահակյանը: Մտահոգիչ է նաև այն, որ քիմիա առարկայից այս տարի օլիմպիադայի հանրապետական փուլին մասնակցել է ընդամենը 3 աշակերտ: Այս փաստերը բոլորիս մտահոգվելու տեղիք են տալիս:

Հայոց լեզու առարկայի 2 մրցանակային տեղերը բաժին հասան Ասկերանի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Լիլիթ Բեգլարյանին, իսկ մյուսը՝ Մարտունու հ. 1 միջնակարգ (հոսքային) դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ Գևորգ Ավանեսյանին:

Հայ գրականություն առարկայից մրցանակային տեղ գրավել է միայն Մարտակերտի շրջանի Նոր Այգեստանի միջնակարգ դպրոցի աշակերտուհի Աստղիկ Բաբայանը:

Ռուսաց լեզու առարկայի 9 մրցանակակիրներից 8-ը Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոցի սաներ են:

Անգլերեն առարկայի միակ մրցանակային տեղը զբաղեցրեց Ստեփանակերտի հ. 11 ավագ ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Ավա-Նատալի Ղահրամանյանը:

Պատմություն առարկայի 3 մրցանակային տեղերից 2-ը հպարտորեն զբաղեցրին Ասկերանի շրջանի Ակնաղբյուրի միջնակարգ դպրոցի 10-րդ և 12-րդ դասարանների աշակերտուհիներ Աննա Մանուչարյանն ու Արգինե Սարգսյանը և Ստեփանակերտի հ.11 ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Արմեն Բեգլարյանը:

Մաթեմատիկա առարկայի 8 մրցանակային տեղերից 2-ը զբաղեցրել են Ասկերանի միջնակարգ դպրոցի սաներ՝ հինգերորդցի Մոնիկա Արզումանյանը և վեցերորդցի Հարութ Ալահվերդյանը: Մրցանակային 3-րդ տեղ է զբաղեցրել նաև վեցերորդցի Արեն Ղազարյանը՝ Հադրութի շրջանի Մարիամաձորի միջնակարգ դպրոցից: Մարտակերտի հ. 1 միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ Մաքսիմ Պետրոսյանն էլ արժանացավ 2-րդ մրցանակային տեղին: Այս առարկայից ամենաբարձր՝ 19 միավոր վաստակել և մրցանակային առաջին տեղ է զբաղեցրել Մարտունու հ. 2 հիմնական դպրոցի 6-րդ դասարանի աշակերտուհի Լուսինե Խաչատրյանը:

Ֆիզիկա առարկայի 2 մրցանակային տեղերը նվաճել են Ասկերանի շրջանի Սզնեքի միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Արմեն Սահակյանը և Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ Տիգրան Կիսիբեկյանը:

Կենսաբանություն առարկայից օլիմպիադայի հանրապետական փուլին մասնակցել է 8 աշակերտ, որից 4-ը՝ Մարտակերտի 4-ը՝ Ասկերանի շրջաններից:

Աշխարհագրություն առարկայի 27 մասնակիցներից 26-ը Ասկերանի, Մարտակերտի, Մարտունու և Հադրութի շրջանների դպ-

## ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

րոցականներ էին, միայն 1 մասնակից Ստեփանակերտի h. 11 ավագ դպրոցի աշակերտ էր:

Հայոց եկեղեցու պատմություն առարկայի 21 մասնակցից 2-ին՝ Մարտունու շրջանի Ճարտարի h. 1 միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Արիաննա Սարգսյանին հաջողվեց գրավել պատվավոր 1-ին տեղ, իսկ Ճարտարի h. 2 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ Վովա Արզումանյանը գրավեց 2-րդ տեղ:

Նախնական զինվորական պատրաստություն առարկայից օլիմպիադայի հանրապետական փուլին մասնակցել է 51 աշակերտ: Մրցանակային 1-ին տեղ գրավել են Մարտունու շրջանի Թաղավարդի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ Արման Բադասյանը և Ասկերանի միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Մերի Գաբրիելյանը:

Համեմատություն անցկացնելով հանրապետության հանրակրթական դպրոցների մասնակիցների՝ օլիմպիադայի հանրապետական փուլում ցուցաբերած արդյունքների միջև՝ ականմաջից խորհելու տեղիք են տալիս նաև այսպիսի փաստերը.

- Ստեփանակերտի h. 1 հիմնական դպրոցի 5-9-րդ դասարաններում սովորող 769 աշակերտից օլիմպիադային մասնակցել է ընդամենը 19 աշակերտ, որից մրցանակային տեղ գրավել է միայն 1 աշակերտ:
- Ստեփանակերտի h. 2 հիմնական դպրոցի 5-9-րդ դասարաններում սովորող 484 աշակերտից օլիմպիադային մասնակցել է ընդամենը 5 աշակերտ, որից ոչ մեկը մրցանակային տեղ չի գրավել:
- Ստեփանակերտի h. 3 միջնակարգ դպրոցի 5-12-րդ դասարաններում սովորող 226 աշակերտից օլիմպիադային մասնակցել է 22 աշակերտ, որից մրցանակային տեղ գրավել է 10 աշակերտ:
- Ստեփանակերտի h. 4 հիմնական դպրոցի 5-9-րդ դասարաններում սովորող 77 աշակերտից օլիմպիադային մասնակցել է ընդամենը 1 աշակերտ, որը մրցանակային տեղ չի գրավել:
- Ստեփանակերտի h. 5 հիմնական դպրոցի 5-9-րդ դասարաններում սովորող 205 աշակերտից օլիմպիադային մասնակցել է ընդամենը 2 աշակերտ, որից ոչ մեկին չհաջողվեց գրավել մրցանակային տեղ:
- Ստեփանակերտի h. 6 հիմնական դպրոցի 5-9-րդ դասարաններում սովորող 156 աշակերտից օլիմպիադային մասնակցել է ընդամենը 6 աշակերտ, որից ոչ մեկին չհաջողվեց արժանանալ մրցանակային տեղի:
- Ստեփանակերտի h. 7 հիմնական դպրոցի 5-9-րդ դասարաններում սովորող 674 աշակերտից օլիմպիադային մասնակցել է ընդամենը 6 աշակերտ, որոնցից 1 աշակերտ է գրավել մրցանակային տեղ:
- Ստեփանակերտի h. 8 միջնակարգ (հոսքային) դպրոցի 9-12-րդ դասարաններում սովորող 290 աշակերտից օլիմպիադային մասնակցել է 6 աշակերտ, որից 1 աշակերտ գրավեց մրցանակային տեղ:
- Ստեփանակերտի h. 9 հիմնական դպրոցի 5-9-րդ դասարաններում սովորող 201 աշակերտից օլիմպիադային մասնակցել է ընդամենը 4 աշակերտ, որից ոչ մեկը մրցանակային տեղ չգրավեց:
- Ստեփանակերտի h. 10 հիմնական դպրոցի 5-9-րդ դասարաններում սովորող 468 աշակերտից օլիմպիադային մասնակցել է ընդամենը 7 աշակերտ, որից 2-ը գրավել է մրցանակային տեղեր:
- Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցի 6-12-րդ դասարաններում սովորող 769 աշակերտից օլիմպիադային մասնակցել է 39 աշակերտ, որից ընդամենը 4-ն է գրավել մրցանակային տեղեր:

Իսկ Ստեփանակերտի h. 12 հիմնական դպրոցը, որտեղ 5-9-րդ դասարաններում սովորում է 47 աշակերտ, օլիմպիադային ոչ մի մասնակից չի ունեցել:

Այդ առումով շրջաններում պատկերն այսպես է.

Ասկերանի շրջանից ամենաշատ մասնակիցներ ունեցան Ասկերանի, Ակնաղբյուրի և Պատարայի միջնակարգ դպրոցները: Զարմանքի և զայրույթի տեղիք է տալիս այն փաստը, որ Սզնեքի միջնակարգ դպրոցից, որն ունի ընդամենը 11 աշակերտ, օլիմպիադայի հանրապետական փուլին մասնակցել է 3 աշակերտ՝ 5 առարկայից, իսկ Խնձրիստանի (125 աշակերտ), Այգեստանի (176 աշակերտ), Շոշի (105) միջնակարգ դպրոցները ոչ մի մասնակից չեն ունեցել:

Մարտակերտի շրջանից ակտիվ էին Մարտակերտի h. 1 (13 աշակերտ), Հաթերքի (7 աշակերտ), Վաղուհասի (6 աշակերտ) միջնակարգ դպրոցները:

Այստեղ զարմանալին այն է, որ 23 աշակերտ ունեցող Գառնաքարի հիմնական դպրոցից 1 աշակերտ մասնակցել է օլիմպիադայի հանրապետական փուլին հայոց եկեղեցու պատմություն առարկայից, իսկ Վանքի միջնակարգ դպրոցից, որն ունի 241 սովորող, օլիմպիադային մասնակցել է ընդամենը 2 աշակերտ, 107 աշակերտ ունեցող Մատաղիսի միջնակարգ դպրոցից օլիմպիադային մասնակցել է 1 աշակերտ:

Բոլորիս հիշողության մեջ թարմ է Թալիշ գյուղի ճակատագիրը, և, հուրախություն բոլորիս, նորից կա Թալիշ գյուղն ու դպրոցը՝ իր 31 աշակերտով, և նույնիսկ մեկ աշակերտ՝ Մարիաննա Ավանեսյանը, ով մասնակցել է օլիմպիադային ՆԶՊ առարկայից և գրավել մրցանակային 3-րդ տեղ, իսկ Ն. Հոռաթաղի (149 աշակերտ), Վ. Հոռաթաղի (90 աշակերտ), Մաղավուզի (107 աշակերտ) միջնակարգ դպրոցները և Մարտակերտի h. 2 հիմնական դպրոցը (199 աշակերտ) օլիմպիադային ոչ մի մասնակից չեն ունեցել:

Մարտունու շրջանի 36 դպրոցից օլիմպիադային մասնակցել է 57 աշակերտ: Մարտունու h. 2 հիմնական դպրոցից, որտեղ սովորում է 397 աշակերտ և 231 աշակերտ ունեցող Կարմիր Շուկայի միջնակարգ դպրոցից օլիմպիադային մասնակցել է 2-ական աշակերտ, իսկ Եմիշճանի հիմնական դպրոցից, որտեղ սովորում է 18 աշակերտ, օլիմպիադային մասնակցել է 1 աշակերտ: Ցավալի է, որ 174 աշակերտ ունեցող Սոսի միջնակարգ դպրոցից ոչ մի աշակերտ չի մասնակցել օլիմպիադայի հանրապետական փուլին:

Հադրութի շրջանի 25 դպրոցից մասնակցել է 35 աշակերտ: Տողի միջնակարգ դպրոցի 121 աշակերտից օլիմպիադային մասնակցել է միայն 1 աշակերտ, 1 մասնակից ունեցել է նաև 29 աշակերտ ունեցող Հակակուի հիմնական դպրոցը, իսկ 78 և 79 աշակերտ ունեցող Առաջամուղի և Դրախտիկի միջնակարգ դպրոցները ոչ մի մասնակից չեն ունեցել:

Քաշաթաղի շրջանի 54 դպրոցից մասնակցել է 30 աշակերտ: 31 աշակերտ ունեցող Քարոտանի միջնակարգ դպրոցը օլիմպիադային հայտ է ներկայացրել 2 աշակերտի համար, 46 աշակերտ ունեցող Ուռեկանի միջնակարգ դպրոցից մասնակցել է 6 աշակերտ, իսկ 110 աշակերտ ունեցող Կովսականի միջնակարգ դպրոցից հանրապետական փուլում ընդգրկվել է ընդամենը 1 աշակերտ: 1 աշակերտ է մասնակցել նաև Արտաշավիի միջնակարգ դպրոցից, իսկ 99 աշակերտ ունեցող Իշխանաձորի միջնակարգ դպրոցից օլիմպիադայի հանրապետական փուլում ոչ մի աշակերտ չի ընդգրկվել:

Շուշիի շրջանի 9 դպրոցներից մասնակցել է 19 աշակերտ՝ Խ. Աբովյանի անվան, Դ. Ղազարյանի անվան և Քարին տակի միջնակարգ դպրոցներից: Ցավով եմ նշում, որ 559 աշակերտ ունեցող Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցից օլիմպիադայի 8, ինչպես նաև 97 աշակերտ ունեցող Դ. Ղազարյանի անվան միջնակարգ դպրոցի 10 մասնակիցներից և ոչ մեկը մրցանակային տեղ չկարողացավ զբաղեցնել:

Շահումյանի շրջանի 16 դպրոցից մասնակցել է 16 աշակերտ: Քնարավանի հիմնական դպրոցի 37 աշակերտից 1-ը, Նոր Վերինշենի 55 աշակերտից՝ 4-ը, Չարեքտարի 50 աշակերտից՝ 3-ը մասնակցել են օլիմպիադայի հանրապետական փուլին, իսկ 72 աշակերտ ունեցող Եղեգնուտի և 111 աշակերտ ունեցող Ակնաբերդի միջնակարգ դպրոցներից ոչ մի աշակերտ չի երաշխավորվել մասնակցելու օլիմպիադայի հանրապետական փուլին:

Այս փաստերը մտածելու տեղիք կտան ինչպես շրջվարչակազմերի աշխատակազմերի կրթության և սպորտի բաժիններին, այնպես էլ շրջանների դպրոցների տնօրինություններին:

Այս փաստերի կողքին հարկ է նաև նշել հանրապետության հանրակրթական այն դպրոցների անունները, որոնք ամեն տարի մեծ պատասխանատվությամբ են պատրաստվում օլիմպիադային, և նրանց սաներն արդարացնում են բոլորիս հույսերը: Դրանք են՝

- Ստեփանակերտի h. 11 ավագ, Ստեփանակերտի h. 3 միջնակարգ և ֆիզմաթ դպրոցները,
- Ասկերանի շրջանի Ակնաղբյուրի և Սզնեքի միջնակարգ դպրոցները,
- Մարտակերտի շրջանի Մարտակերտի h. 1, Հաթերքի, Նոր Այգեստանի, Թալիշի, Վաղուհասի միջնակարգ դպրոցները,
- Մարտունու շրջանի Մարտունու h. 1, h. 2, Ճարտարի h. 1, h. 2, h. 5 և Թաղավարդի դպրոցները,
- Հադրութի շրջանի Հադրութի, Մեծ Թաղերի, Մարիամաձորի միջնակարգ դպրոցները,
- Շուշիի Դ. Ղազարյանի անվան միջնակարգ դպրոցը և Քաշաթաղի շրջանի Ուռեկանի միջնակարգ դպրոցը:

Հպարտությամբ ուզում եմ հնչեցնել նաև այն աշակերտների անունները, ովքեր արդեն 2-րդ, 3-րդ, նույնիսկ 4-րդ տարին է, ոչ միայն Արցախում, այլև ՀՀ-ում բարձր են պահում հարազատ դպրոցի և Արցախի անունը: Ահա նրանք.

1. Հայրուք Ալահվերդյան - Ասկերանի միջն. դպրոցի 6-րդ դասարանի աշակերտ, մաթեմատիկա առարկայից 2 տարի մասնակցելով օլիմպիադայի հանրապետական փուլին՝ արժանացել է 2-րդ և 3-րդ տեղերի (2017թ., 2018թ.):

2. Գևորգ Ավանեսյան - Մարտունու h. 1 միջն. դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ, հայոց լեզու առարկայից մասնակցելով օլիմպիադայի հանրապետական փուլին՝ 2017թ. և 2018թ. արժանացել է 2-րդ և 3-րդ տեղերի:

3. Արման Բադասյան - Մարտունու շրջանի Թաղավարդի միջն. դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ, ՆԶՊ առարկայից 2 տարի մասնակցելով օլիմպիադայի հանրապետական փուլին՝ արժանացել է 1-ին տեղի (2017թ., 2018թ.):

4. Աշոտ Ոսկանյան - Ստեփանակերտի h. 3 միջն. դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ, ռուսաց լեզու առարկայի օլիմպիադայի հանրապետական փուլին մասնակցելով՝ 2016թ. արժանացել է 1-ին, իսկ 2017թ. և 2018թ.՝ 3-րդ տեղերի:

5. Արիաննա Սարգսյան - Մարտունու շրջանի Ճարտարի h. 1 միջն. դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի, 4 տարի մասնակցելով հայոց եկեղեցու պատմություն առարկայի օլիմպիադայի հանրապետական փուլին՝ 3 տարի արժանացել 1-ին, իսկ 1 տարի՝ 2-րդ տեղի (2015թ., 2016թ., 2017թ., 2018թ.):

6. Աննա Մանուչարյան - Ասկերանի շրջանի Ակնաղբյուրի միջն. դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի, պատմություն առարկայից 2 տարի մասնակցելով օլիմպիադայի հանրապետական փուլին, արժանացել է 1-ին և 2-րդ տեղերի (2017թ., 2018թ.):

7. Արմեն Բեգլարյան - Ստեփանակերտի h. 11 ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ, պատմություն առարկայից 3 տարի մասնակցելով օլիմպիադայի հանրապետական փուլին, երկու տարի արժանացել է 1-ին և մեկ տարի՝ 2-րդ տեղերի (2016թ., 2017թ., 2018թ.):

8. Արմեն Սահակյան - Ասկերանի շրջանի Սզնեքի միջն. դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ, 2 տարի ֆիզիկա առարկայից մասնակցելով օլիմպիադայի հանրապետական փուլին՝ արժանացել է 2-րդ տեղի (2017թ., 2018թ.):

9. Մարիաննա Աղաբեկյան - Ստեփանակերտի h. 3 միջն. դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի, գերմաներենից օլիմպիադայի հանրապետական փուլում 2017թ. և 2018թ. արժանացել է 1-ին և 2-րդ տեղերի:

10. Վալերի Մարության - Ստեփանակերտի h. 3 միջն. դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ, գերմաներենից օլիմպիադայի հանրապետական փուլում 2017թ. և 2018թ. արժանացել է 2-րդ և 3-րդ տեղերի:

11. Նորա Գրիգորյան - Մարտակերտի h. 1 միջն. դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի, 2 տարի աշխարհագրություն առարկայից մասնակցելով օլիմպիադայի հանրապետական փուլին՝ արժանացել է 2-րդ և 3-րդ տեղերի (2017թ., 2018թ.):

12. Լիլիթ Բեգլարյան - Ասկերանի միջն. դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի, հայոց լեզու առարկայից 2 տարի մասնակցելով օլիմպիադայի հանրապետական փուլին՝ արժանացել է 3-րդ տեղի (2017թ., 2018թ.):

13. Ավա-Նատալի Ղահրամանյան - Ստեփանակերտի h. 11 ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի, 3 տարի անգլերենից մասնակցելով օլիմպիադայի հանրապետական փուլին՝ արժանացել է 1 տարի՝ 2-րդ և 2 տարի՝ 3-րդ տեղերի (2016թ, 2017թ., 2018թ.):

14. Ստեփան Համբարձումյան-Ստեփանակերտի h. 11 ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ, 2 տարի մասնակցելով աշխարհագրություն առարկայից օլիմպիադայի հանրապետական փուլին՝ արժանացել է 2-րդ և 3-րդ տեղերի (2017թ., 2018թ.):

15. Արգինե Սարգսյան - Ասկերանի շրջանի Ակնաղբյուրի միջն. դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի, 2 տարի պատմություն առարկայից մասնակցելով օլիմպիադայի հանրապետական փուլին՝ արժանացել է 1-ին և 2-րդ տեղերի (2017թ., 2018թ.):

Շնորհավորում և շնորհակալություն եմ հայտնում օլիմպիադայի մրցանակակիր բոլոր աշակերտներին և ցանկանում, որ նրանք մշտապես հաղթող լինեն գիտելիք տանող ճանապարհի խաչմերուկներում: Շնորհակալություն եմ հայտնում նաև իրենց սաների հաջողությամբ հպարտացող ուսուցիչներին, քանզի այսօրվա մեր ուրախությունը նրանց բարեխիղճ աշխատանքի ապացույցն է:

ԱՀ առարկայական օլիմպիադայի հանրապետական հանձնաժողովի կողմից բարձր արդյունք ցուցաբերած 77 աշակերտ երաշխավորվել է մասնակցելու Երևան քաղաքում կայանալիք օլիմպիադայի եզրափակիչ փուլին: Ակնկալում ենք, որ նրանք մեզ հուսախաբ չեն անի:

**Ռ. ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ**
**ԱՀ ԿԳՍՆ ԿԳ վարչության պետ**

## ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

*15.04.2018-ի դրությամբ*

| Հ/հ | Ազգանուն | Անուն | Դաս. | Մարզ | Կրթօջախ | Միավորը բող. հետո | 2-րդ փուլ | ∑ | Դիպլոմ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *Աշխարհագրություն* | | | | | | | | | |
| 1 | Սարգսյան | Արմեն | 10 | Արցախ | Ասկերան, Ավետարանոցի մ/դ | 15.75 | 11 | 26.75 | Գ |
| 2 | Գրիգորյան | Ռեգինա | 10 | Արցախ | Հադրութ, Հադրութի մ/դ | 16.50 | 10 | 26.50 | Գ |
| 3 | Ղազարյան | Ռիմա | 10 | Արցախ | Ասկերան, Նախիջևանիկի մ/դ | 17.00 | 9 | 26.00 | Գ |
| 4 | Պողոսյան | Արթուր | 10 | Արցախ | Մարտունի, Կաղարծու մ/դ | 15.25 | 10 | 25.25 | Գ |
| 5 | Մուսայելյան | Հարու թ | 11 | Արցախ | Ասկերան, Սզնեքի մ/դ | 17.50 | 14 | 31.50 | III |
| 6 | Գասպարյան | Լիանա | 11 | Արցախ | Ասկերան, Պատարայի մ/դ | 15.50 | 12 | 27.50 | Գ |
| 7 | Գրիգորյան | Նորա | 11 | Արցախ | Մարտակերտ, Մարտակերտի N:1 մ/դ | 17.00 | 9 | 26.00 | Գ |
| 8 | Այվազյան | Լիլիթ | 11 | Արցախ | Մարտակերտ, Մարտակերտի N:1 մ/դ | 16.75 | 7 | 23.75 | Գ |
| 9 | Դավթյան | Տաթևիկ | 12 | Արցախ | Մարտակերտի N:1 մ/դ | 16.00 | 14 | 30.00 | I |
| 10 | Օհանյան | Լիանուշ | 12 | Արցախ | Մարտակերտ, Հաթերքի մ/դ | 17.50 | 10 | 27.50 | III |
| 11 | Սարգսյան | Շուշան | 10 | Արցախ | Ասկերան, Ակնաղբյուրի մ/դ | 16.25 | 15 | 31.25 | III |
| *Կենսաբանություն* | | | | | | | | | |
| 1 | Մարգարյան | Սոսե | 10 | Արցախ | Ասկերան, Ակնաղբյուրի մ/դ | 340 | 44 | 77.6 | III |
| *Քիմիա* | | | | | | | | | |
| 1 | Մարգարյան | Սոսե | 10 | Արցախ | Ասկերան, Ակնաղբյուրի մ/դ | 123 | 8 | 15 | Գ |
| *Ռուսաց լեզու* | | | | | | | | | |
| 1 | Իսրայելյան | Ալեքսանդր | 10 | Արցախ | Ստեփանակերտի N3 մ/դ | 66 | | | I |
| 2 | Աքաջանյան | Լաուրա | 9 | Արցախ | Ստեփանակերտի N3 մ/դ | 62 | | | III |
| 3 | Ոսկանյան | Աշոտ | 9 | Արցախ | Ստեփանակերտի N3 մ/ դ | 58 | | | Գ |
| 4 | Աղաբեկյան | Մարիաննա | 11 | Արցախ | Ստեփանակերտի N3 մ/դ | 66 | | | I |
| 5 | Մարտիրոսյան | Քրիստինե | 11 | Արցախ | Ստեփանակերտի N3 մ/դ | 58 | | | Գ |
| *Պատմություն* | | | | | | | | | |
| 1 | Մարգարյան | Սեդա | 9 | Արցախ | Շուշիի դ. Ղազարյան մ.եր. դպրոց | 16 | | | II |
| 2 | Բեգլարյան | Արմեն | 10 | Արցախ | Ստեփանակերտի N11 ա/դ | 18 | | | I |
| 3 | Մանուչարյան | Աննա | 10 | Արցախ | Ասկերան, Ակնաղբյուրի մ/դ | 16.5 | | | III |
| 4 | Սարգսյան | Արգինե | 12 | Արցախ | Ասկերան, Ակնաղբյուրի մ/դ | 17.25 | | | I |
| *Մաթեմատիկա* | | | | | | | | | |
| 1 | Հարությունյան | Մարիամ | 5 | Արցախ | Ստեփանակերտ, N:1 h/դ | 6 | | | II |
| 2 | Ներսիսյան | Հայկ | 6 | Արցախ | Ստեփանակերտ, N:7 h/դ | 6 | | | II |
| 3 | Ղազարյան | Արեն | 6 | Արցախ | Հադրութ, Մարիամաձորիի մ/դ | 5 | | | III |
| 4 | Խաչատրյան | Լուսինե | 6 | Արցախ | Մարտունի, Մարտունու N:2 h/դ | 5 | | | III |
| 5 | Ղուկասյան | Մարիա | 6 | Արցախ | Ստեփանակերտ, N:1 h/դ | 5 | | | III |
| *Հայոց լեզու* | | | | | | | | | |
| 1 | Ավանեսյան | Գևորգ | 9 | Արցախ | Մարտունի, Մարտունու N:1 մh/դ | 16,1 | | | Գ |
| 2 | Մանուչարյան | Աննա | 10 | Արցախ | Ասկերան, Ակնաղբյուրի մ/դ | 13,75 | | | Գ |
| 3 | Ոսկանյան | Նունե | 10 | Արցախ | Ստեփանակերտի N 11 ա/դ | 13,5 | | | Գ |
| 4 | Մուսայելյան | Լենա | 12 | Արցախ | Մարտակերտ, Հաթերքի մ/դ | 17 | | | II |
| *Գրականություն* | | | | | | | | | |
| 1 | Բաղդասարյան | Սաթենիկ | 10 | Արցախ | Նոր Այգեստանի մ/դ | 17 | | | Գ |
| 2 | Բաբայան | Աստղիկ | 10 | Արցախ | Նոր Այգեստանի մ/դ | 17 | | | Գ |
| 3 | Մարտիրոսյան | Կարեն | 11 | Արցախ | Ասկերան, Սզնեքի մ/դ | 18.5 | | | II |
| 4 | Գաբրիելյան | Սիրուն | 11 | Արցախ | Ասկերան, Պատարայի մ/դ | 16.5 | | | Գ |
| 5 | Խաչատրյան | Ալլա | 12 | Արցախ | Մարտակերտ, Հաթերքի մ/դ | 18.5 | | | II |

## ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

# ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ապրիլի 2018 թ. N 288-Ն

ք. Ստեփանակերտ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՎԵԼԻՔ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱԼԱՎՐԻ ՈՒ ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՏԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին համաձայն՝ Արցախի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում Արցախի Հանրապետությանը հատկացվելիք 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության մասնագիտությունների և պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով տեղերի ցանկին՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը՝ սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

*«Հաստատում եմ»*
***ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ***
***Բ. ՍԱՀԱԿՅԱՆ***

---

*Հավելված*
*Արցախի Հանրապետության*
*կառավարության*
*2018 թվականի 18 ապրիլի*
*N 288-Ն որոշման*

# Ց Ա Ն Կ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՎԵԼԻՔ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱԼԱՎՐԻ ՈՒ ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՏԵՂԵՐԻ

| Դասիչը | Բուհը, մասնագիտությունը, կրթական ծրագիրը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրի վ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը | Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը |
|---|---|---|---|
| | *ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ* | | |
| 022801.00.6 | **Արևելագիտություն** | | |
| | 022801.02.6 Թյուրքագիտություն | 1 | - |
| 023201.00.6 | **Լեզվաբանություն** | | - |
| | 023201.01.6 Թարգմանչական գործ /անգլերեն և հայերեն/ | 1 | 1 |
| | 023201.02.6 Միջմշակութային հաղորդակցություն /անգլերեն/ | 1 | - |
| 031501.00.6 | **Մշակութաբանություն** | | |
| | 031501.01.6 Մշակութաբանություն | 1 | - |
| 031801.00.6 | **Միջազգային հարաբերություններ** | | |
| | 031801.01.6 Միջազգային հարաբերությ ուններ | 1 | 1 |
| 054101.00.6 | **Երկրաբանություն** | | |
| | 054101.01.6 Երկրաբանություն | 1 | - |
| 056101.00.6 | **Մաթեմատիկա** | | |
| | 056101.01.6 Մաթեմատիկա | 1 | - |
| 056802.00.6 | **Ֆինանսական մաթեմատիկա** | | |
| | 056802.01.6 Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա | 2 | - |
| 061101.00.6 | **Ինֆորմատիկա (համակարգ չային գիտություն)** | | |
| | 061101.02.6 Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա | 1 | - |
| 101801.00.6 | **Սերվիս** | | |
| | 101801.01.6 Սերվիս | 1 | - |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | ***11*** | ***2*** |
| | *ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ* | | |
| 061901.00.6 | **Տեղեկատվական անվտանգություն** | | |
| | 061901.01.6 Տեղեկատվական անվտանգություն | 1 | 1 |
| 071201.00.6 | **Շրջակա միջավայրի պահպանություն** | | |
| | 071201.01.6 Շրջակա միջավայրի պահպանություն | 1 | - |
| 071301.00.6 | **Էներգետիկա** | | |
| | 071301.03.6 էլեկտրաէներգետիկա | 1 | - |
| 072401.0 0.6 | **Լեռնային գործ և օգտակար հանածոների արդյունահանում** | | |
| | 072401.01.6 Լեռնային գործ և օգտակար հանածոների արդյունահանում | 1 | - |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | ***4*** | ***1*** |
| | *ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ* | | |
| 021201.00.6 | **Դիզայն** | | |
| | 021201.01.6 Դիզայն | 1 | - |
| 073101.00.6 | **Ճարտարապետություն** | | |
| | 073101.01.6 Ճարտարապետություն | 1 | 1 |
| 073102.00.6 | **Քաղաքային տնտեսություն** | | |
| | 073102.01.6 Քաղաքային տնտեսություն | 1 | - |
| | 073102.02.6 Ջերմագազամատակարարում և օդափոխություն | 1 | - |
| 073201.00.6 | **Շինարարություն** | | |
| | 073201.02.6 Շինարարական նյութերի, պատրաստվածքների և կոնստրուկցիաների արտադրություն | 1 | - |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | ***5*** | ***1*** |
| | *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ* | | |
| 041401.00.6 | **Շուկայագիտություն (մարքեթինգ)** | | |
| | 041401.01.6 Շուկայագիտություն (մարքեթինգ) /ըստ ոլորտի/ | 1 | 1 |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | ***1*** | ***1*** |
| | *Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ* | | |
| 011401.00.6 | **Մասն ագիտական մանկավարժություն** | | |
| | 011401.08.6 Հասարակագիտություն | 1 | - |
| 092301.00.6 | **Սոցիալական աշխատանք** | | |
| | 092301.01.6 Սոցիալական աշխատանք | 1 | - |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | ***2*** | ***0*** |
| | *ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ* | | |
| 021502.00.6 | **Կատարողական արվեստ** | | |
| | 021502.01.6 Գոր ծիքային կատարողականություն<br>- դաշնամուր<br>- դուդուկ<br>- ջազային գործիքներ | <br><br>1<br>1<br>1 | <br><br>1<br>-<br>- |
| | 021502.04.6 Վոկալ արվեստ<br>- ակադեմիական<br>- ժողովրդական | <br>1<br>1 | <br>1<br>1 |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | ***5*** | ***3*** |
| | *ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ* | | |
| 021201.00.6 | **Դիզայն** | | |
| | 021201.03.6 Հագուստի մոդելավորում | 1 | 1 |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | ***1*** | ***1*** |
| | *ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ* | | |
| 021103.00.6 | **Կինոարվեստ** | | |
| | 021103.01.6 Կինոարվեստ | 1 | 1 |
| 021503.00.6 | **Թատերական արվեստ** | | |
| | 021503.01.6 Դերասանական արվեստ | 1 | - |
| | 021503.02.6 Ռեժիսուրա | 1 | - |
| 021504.00.6 | **Պարարվեստի ռե ժիսուրա** | | |
| | 021504.01.6 Պարարվեստի ռեժիսուրա | 1 | - |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | ***4*** | ***1*** |
| | *ԵՐԵՎԱՆԻ Մ. ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ* | | |
| 091201.00.7 | **Բուժական գործ** | | |
| | 091201.01.7 Բուժական գործ | 10 | 3 |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | ***10*** | ***3*** |
| | *ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ* | | |
| 011401.00 .6 | **Մասնագիտական մանկավարժություն** | | |
| | 011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ | 1 | 1 |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | ***1*** | ***1*** |

## ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ | | | |
|---|---|---|---|
| *072101.00.6* | *Պարենամթերքի տեխնոլոգիա* | | |
| | 072101.02.6 Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգոր ծություն | 1 | - |
| | 072101.03.6 Հացի, հրուշակեղենի և մակարոնի արտադրության տեխնոլոգիա | 1 | - |
| | 072101.03.6 Գյուղատնտեսության և պարենային ապրանքի փաթեթավորման տեխնոլոգիա և դիզայն | 1 | - |
| | 072101.04.6 Պահածոյացման և սննդախտանյութերի տեխնոլոգիա | 1 | - |
| | 072101.06.6 Կաթ ի, կաթնամթերքի, մանկական և ֆունկցիոնալ սննդի տեխնոլոգիա | 1 | - |
| | 072101.07.6 Մսի և մսամթերքի տեխնոլոգիա | 1 | - |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | 6 | - |

| ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ | | | |
|---|---|---|---|
| | *Հայկական բաժանմունք* | | |
| **101501.00.6** | **Զբոսաշրջություն** | | |
| | 101501.01.6 Զբոսաշրջություն | 1 | 1 |
| | *Ռուսական բաժանմունք* | | |
| 11.03.04 | Էլեկտրոնիկա և նանոէլեկտրոնիկա | 1 | - |
| 38.03.01 | Տնտեսագիտություն | 1 | 1 |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | *3* | *2* |
| | *ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ* | | |
| **023201.00.6** | **Լեզվաբանություն** | | - |
| | 023201.04.6 Անգլերեն լեզու | 1 | 1 |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | *1* | *1* |
| | *ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՏԵՂԵՐ* | *6* | *-* |
| | *ԸՆԴՀԱՆՈՒՐԸ* | *60* | *17* |

***ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ***
***ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ***
***ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ***

# ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ապրիլի 2018 թ. N289-Ն

ք. Ստեփանակերտ

### ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասին ու «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է՝

1. Հաստատել Արցախի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման տեղերը և հեռակա ուսուցման վճարովի տեղերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Արցախի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների վճարովի ուսուցման համակարգում ուսման վարձի չափը որոշում են Արցախի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները՝ համաձայնեցնելով Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության հետ:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը հաստատելու մասին» N81 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված սոցիալական խմբերի ֆինանսավորումը կատարել Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին:

4. Արցախի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2018-2019 ուսումնական տարվա անվճար տեղերի (պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ) տասը տոկոսը (առնվազն մեկ տեղ) ըստ մասնագիտությունների հատկացնել պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված քաղաքացիներին:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը հանձնարարել Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

*«Հաստատում եմ»*
***ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ***
***Բ. ՍԱՀԱԿՅԱՆ***

*Հավելված*
*Արցախի Հանրապետության*
*կառավարության*
*2018 թվականի 18 ապրիլի*
*N 289-Ն որոշման*

## Ց Ա Ն Կ

### ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԻ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԻ

### ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
#### 1.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Դասիչը | Մասնագիտությունը, կրթական ծրագիրը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը | Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը |
|---|---|---|---|
| **011301.00.6** | **Ընդհանուր մանկավարժություն** | | |
| | 011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա | 10 | 20 |
| **011401.00.6** | **Մասնագիտական մանկավարժություն** | | |
| | 011401.01.6 Կենսաբանություն | 10 | 10 |
| | 011401.02.6 Քիմիա | 5 | 10 |
| | 011401.03.6 Աշխարհագրություն | 10 | 10 |
| | 011401.04.6 Ֆիզիկա | 5 | 10 |
| | 011401.05.6 Մաթեմատիկա | 10 | 10 |
| | 011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ | 7 | 18 |
| | 011401.11.6 Կերպարվեստ | 5 | 10 |
| | 011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն | 7 | 18 |
| | 011401.18.6 Պատմություն | 5 | 20 |
| | 011401.19.6 Հայոց լեզու և գրականություն | 10 | 20 |
| | 011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն | 5 | 20 |
| | 011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն | 10 | 20 |
| **031101.00.6** | **Տնտեսագիտություն** | | |
| | 031101.01.6 Տնտեսագիտություն | - | 15 |
| **031201.00.6** | **Քաղաքագիտություն** | | |
| | 031201.01.6 Քաղաքագիտություն | - | 15 |
| **031301.00 .6** | **Հոգեբանություն** | | |
| | 031301.01.6 Հոգեբանություն | 6 | 14 |
| **032101.00.6** | **Լրագրություն** | | |
| | 032101.01.6 Լրագրություն | 5 | 15 |
| **041201.00.6** | **Ֆինանսներ** | | |
| | 041201.01.6 Ֆինանսներ (ըստ ոլորտի) | 10 | 20 |
| **042101.00.6** | **Իրավագիտություն** | | |
| | 042101.01.6 Իրավագիտություն | 10 | 20 |
| **041301.00.6** | Կառավարում | | |
| | 041301.01.6 Կառավարում /ըստ ոլորտի/ | 5 | 20 |
| **061105.00.6** | **Տեղեկատվական տեխնոլոգիաներ** | | |
| | 061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ | 10 | 20 |
| **101501.00.6** | **Զբոսաշրջություն** | | |
| | 101501.01.6 Զբոսաշրջություն | - | 20 |
| | **Պահուստային տեղեր** | **5** | **-** |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | *150* | *355* |

#### 1.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Դասիչը | Մասնագիտությունը, կրթական ծրագիրը | Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը |
|---|---|---|
| 011301.00.6 | **Ընդհանուր մանկավարժություն** | |
| | 011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա | 30 |
| 011401.00.6 | **Մասնագիտական մանկավարժություն** | |
| | 011401.01.6 Կենսաբանություն | 20 |
| | 011401.03.6 Աշխարհագրություն | 20 |
| | 011401.04.6 Ֆիզիկա | 20 |
| | 011401.05.6 Մաթեմատիկա | 20 |
| | 011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ | 25 |
| | 011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն | 25 |
| | 011401.18.6 Պատմություն | 20 |
| | 011401.19.6 Հայոց լեզու և գրականություն | 20 |
| | 011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն | 20 |
| 041101.00.6 | **Հաշվապահական հաշվառում և հարկում** | |
| | 041101.01.6 Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի) | 25 |
| 042101.00.6 | **Իրավագիտություն** | |
| | 042101.01.6 Իրավագիտություն | 25 |
| 053101.00.6 | **Քիմիա** | |
| | 053101.02.6 Դեղագործական քիմիա | 20 |
| 061105.00.6 | **Տեղեկատվական տեխնոլոգիաներ** | |
| | 061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ | 20 |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | *310* |

## ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

### 2. «ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

#### 2.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Դասիչը | Մասնագիտությունը, կրթական ծրագիրը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը | Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը |
|---|---|---|---|
| 041801.00.6 | **Ագրոբիզնես** | | |
| | 041801.01.6 Ագրոբիզնես | 7 | 18 |
| 061105.00.6 | **Տեղեկատվական տեխնոլոգիաներ** | | |
| | 061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ | 8 | 17 |
| 071301.00.6 | **Էներգետիկա** | | |
| | 071301.03.6 Էլեկտրաէներգետիկա | 5 | 15 |
| 071403 .00.6 | **Ռադիոտեխնիկա և կապ** | | |
| | 071403.01.6 Ռադիոտեխնիկա և կապ | 5 | 15 |
| 071602.00.6 | **Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ** | | |
| | 071602.01.6 Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ | 8 | 17 |
| 072101.00.6 | **Պարենամթերքի տեխնոլոգիա** | | |
| | 072101.01.6 Պարենամթերքի տեխնոլոգիա | 7 | 18 |
| 073101.00.6 | **Ճարտարապետություն** | | |
| | 073101.01.6 Ճարտարապետություն | 5 | 10 |
| 073201.00.6 | **Շինարարություն** | | |
| | 073201.01.6 Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն | 5 | 10 |
| | 073201.03.6 Ջրային համակարգերի շինարարություն և շահագործում | 5 | 10 |
| 081101.00.6 | **Ագրոնոմիա** | | |
| | 081101.01.6 Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա | 5 | 15 |
| 084101.00.6 | **Անասնաբուժություն** | | |
| | 084101.01.6 Անասնաբուժություն | 5 | 15 |
| | **Պահուստային տեղեր** | **10** | - |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | *75* | *160* |

#### 2.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Դասիչը | Մասնագիտությունը, կրթական ծրագիրը | Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը |
|---|---|---|
| 041801.00.6 | **Ագրոբիզնես** | |
| | 041801.01.6 Ագրոբիզնես | 15 |
| 071601.00.6 | **Տրանսպորտային համակարգեր** | |
| | 071601.03.6 Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում | 15 |
| 071602.00.6 | **Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ** | |
| | 071602.01.6 Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ | 15 |
| 073201.00.6 | **Շինարարություն** | |
| | 073201.01.6 Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն | 15 |
| 081101.00.6 | **Ագրոնոմիա** | |
| | 081101.01.6 Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա | 15 |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | *75* |

#### 2.3 ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Դասիչը | Մասնագիտությունը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը | Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը |
|---|---|---|---|
| | | Հիմնական կրթությամբ | Հիմնական կրթությամբ |
| 0601 | Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ | 10 | 10 |
| 2401 | Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում | 10 | 10 |
| 2916 | Քաղաքաշինական կադաստր | 10 | 10 |
| 3102 | Գյուղատնտեսագիտություն | 10 | 10 |
| 3104 | Անասնաբուժություն | 10 | 5 |
| 3106 | Գյուղատնտեսության մեքենայացում | 10 | 5 |
| | **Պահուստային տեղեր** | **10** | - |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | *70* | *50* |

***ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ***

# ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ապրիլի 2018 թ. N 290-Ն

ք. Ստեփանակերտ

## ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան? Արցախի Հանրապետության կառավարությունը

*ո ր ո շ ու մ է.*

1. Հաստատել Արցախի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) առկա ուսուցման տեղերը և հեռակա ուսուցման վճարովի տեղերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Արցախի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վճարովի ուսուցման համակարգում ուսման վճարի չափը որոշում է տվյալ ուսումնական հաստատությունը՝ համաձայնեցնելով Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության հետ:

3. Թույլատրել Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը՝ պահուստային տեղերի բաշխումը և ըստ հաստատությունների թափուր մնացած տեղերի վերաբաշխումն իրականացնել նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին տրամադրված տեղերի շրջանակում:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը հանձնարարել Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

*«Հաստատում եմ»*
***ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ***
***Բ. ՍԱՀԱԿՅԱՆ***

*Հավելված*
*Արցախի Հանրապետության*
*կառավարության*
*2018 թվականի 18 ապրիլի*
*N 290-Ն որոշման*

# Ց Ա Ն Կ

## ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ ) ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԻ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԻ

### 1. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԹԱՄԱՐԱ ՔԱՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ

| Դասիչը | Մասնա գիտության անվանումը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը | | Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերը | |
|---|---|---|---|---|---|
| | | Հիմնական կրթությամբ | Միջնակարգ կրթությամբ | Հիմնական կրթությամբ | Միջնակարգ կրթությամբ |
| 0402 | Մանկաբարձական գործ | 5 | 2 | 25 | 28 |
| 0405 | Դեղագործություն | - | 2 | - | 28 |
| 0406 | Քույրական գործ | 5 | 2 | 25 | 28 |
| 0418 | Բուժական գործ զինված ուժերում | 5 | - | 25 | - |
| | **Պահուստային տեղեր** | **6** | **3** | **-** | **-** |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | *21* | *9* | *75* | *84* |

### 2. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ

| Դասիչը | Մասնա գիտության անվանումը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը | Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերը |
|---|---|---|---|
| 0501 | Գործիքային կատարողական արվեստ<br>այդ թվում՝<br>դաշնամուր<br>լարային գործիքներ (ջութակ)<br>փողային գործիքներ<br>ժողովրդական գործիքներ | **17**<br><br><br>6<br>2<br>3<br>6 | **7**<br><br><br>4<br>-<br>1<br>2 |

## ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| 0502 | Երգեցողություն | 3 | 6 |
| 0503 | Երգչախմբավարություն | 2 | 1 |
| 0504 | Երաժշտության տեսություն | 1 | 1 |
| 0505 | Էստրադային երաժշտարվեստ | 2 | 5 |
| | **Պահուստային տեղեր** | **5** | - |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | *30* | *20* |

### 3. ՇՈՒՇԻԻ ԱՐՍԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
### 3.1 ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

| Դասիչը | Մասնագիտության անվանումը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը | Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերը |
|---|---|---|---|
| | | Հիմնական կրթությամբ | Հիմնական կրթությամբ |
| 0514 | Դիզայն ըստ ճյուղերի | 10 | 10 |
| 0515 | Զարդարային-կիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ | 10 | 10 |
| 2014 | Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում | 5 | 10 |
| 2808 | Հագուստի մոդելավորում և նախագծում | 10 | 10 |
| | **Պահուստային տեղեր** | **5** | - |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | *40* | *40* |

### 3. 2 ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

| Դասիչը | Մասնագիտության անվանումը | Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերը (միջնակարգ կրթությամբ) |
|---|---|---|
| 2302 | Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում | 15 |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | *15* |

### 4. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ՔՈԼԵՋ

| Դասիչը | Մասնագիտության անվանումը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը |
|---|---|---|
| 0319 | Պարի ուսուցում | 10 |
| 0506 | Դասական պար | 10 |
| | Ժողովրդական պար | 10 |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | *30* |

### 5. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

| Դասիչը | Մասնագիտության անվանումը | Անվճար տեղերը (հիմնական կրթությամբ ) | Վճարովի տեղերը (հիմնական կրթությամբ) |
|---|---|---|---|
| 2014 | Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում | 15 | 10 |
| 2203 | Համակարգիչների շահագործում | 15 | 10 |
| 2304 | Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում | 15 | 10 |
| 2311 | Հասարակական սնունդ | 15 | 10 |
| 2401 | Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ըստ տեսակների) | 15 | 10 |
| 2603 | Փայտամշակման արտադրութ յունների սարքավորումների շահագործում և տեխնոլոգիա | 15 | 10 |
| | **Պահուստային տեղեր** | **10** | - |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | *100* | *60* |

### 6. ՄԱՐՏՈՒՆՈՒ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

| Դասիչը | Մասնագիտության անվանումը | Անվճար տեղերը (հիմնական կրթությամբ ) | Վճարովի տեղերը (հիմնական կրթությամբ | Վճարով ի տեղերը (միջնակարգ կրթությամբ) |
|---|---|---|---|---|
| 2203 | Համակարգիչների շահագործում | - | 15 | 10 |
| 2304 | Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում | 15 | 15 | 10 |
| 2311 | Հասարակական սնունդ | 15 | 10 | 10 |
| 2401 | Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ըստ տեսակների) | 15 | 10 | - |
| 2704 | Գինեգործություն և հյութերի արտադրություն | 15 | 10 | 10 |
| 2809 | Կարի արտադրության տեխնոլոգիա | 15 | 10 | 10 |
| 2905 | Ճանապարհաշինարարական և բարելավման աշխատանքների տեխնիկական ապահովում | 15 | 10 | - |
| | **Պահուստային տեղեր** | **10** | - | - |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | *100* | *80* | *50* |

### 7. ՇՈՒՇԻԻ «ԵԶՆԻԿ ՄՈՔՅԱՆ» ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Դասիչը | Մասնագիտության անվանումը | Անվճար տեղերը (հիմնական կրթությամբ) | Վճարովի տեղերը (հիմնական կրթությամբ) |
|---|---|---|---|
| 1003 | Մեքենաների և մեխանիզմների էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում | 15 | 5 |
| 1006 | Ջերմաէներգետիկ սար քավորումների և ջերմային ցանցերի տեխնիկական շահագործում | 15 | 5 |
| 1210 | Մետաղների մեխանիկական մշակում հաստոցների և գծերի վրա | 15 | 5 |
| 2311 | Հասարակական սնունդ | 15 | 5 |
| 2603 | Փայտամշակման արտադրո ւթյունների սարքավորումների շահագործում և տեխնոլոգիա | 15 | 5 |
| 2809 | Կարի արտադրո ւթյան տեխնոլոգիա | 10 | 5 |
| 2902 | Շինարարամոնտաժային և վերանորոգման աշխատանքների իրականացում | 15 | 5 |
| 2908 | Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում | 15 | 5 |
| | **Պահուստային տեղեր** | **5** | - |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | *120* | *40* |

***ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ***

# ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ապրիլի 2018 թ. N 291-Ն

ք. Ստեփանակերտ

## ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ԱՆՎՃԱՐ ԵՎ ՎՃԱՐՈՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՏԵՂԵՐԸ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասին ու «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել՝

1) Արցախի պետական համալսարանի 2018-2019 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտությունների, անվճար և վճարովի ուսուցման տեղերի ցանկը՝ համաձայն N1 հավելվածի:

2) Արցախի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) առկա և հեռակա ուսուցման մագիստրոսի կրթական ծրագրով տեղերն՝ ըստ մասնագիտությունների՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Թույլատրել Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը՝ պահուստային տեղերի բաշխումը և ըստ հաստատությունների թափուր մնացած տեղերի վերաբաշխումն իրականացնել բարձրագույն ուսումնական հաստատություններին տրամադրված տեղերի շրջանակում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

*«Հաստատում եմ»*
***ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ***
***Բ. ՍԱՀԱԿՅԱՆ***

*Հավելված N 1*
*Արցախի Հանրապետության*
*կառավարության*
*2018 թվականի 18 ապրիլի*
*N 291-Ն որոշման*

## Ց Ա Ն Կ
### ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎՃԱՐ ԵՎ ՎՃԱՐՈՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԻ

| Դասիչը | Մասնագիտության անվանումը | Անվճար ուսուցման տեղերը | Վճարովի ուսուցման տեղերը |
|---|---|---|---|
| Ա.01.01 | Մաթեմատիկական անալիզ | 1 | 1 |
| Ա. 04.07 | Կոնդեսացված վիճակի ֆիզիկա | 1 | - |
| Է.00.02 | Համաշխարհային պատմություն | 1 | 1 |
| Ը.00.02 | Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում | 1 | - |
| Ը.00.03 | Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ | 1 | 1 |
| Ը.00.05 | Հաշվապահական հաշվառում և վիճակագրություն | 1 | 1 |
| Ժ.01.02 | Նորագույն շրջանի հայ գրականություն | 1 | - |
| Ժ.01.06 | Ժուռնալիստիկա | 1 | - |
| Ժ.02.01 | Հայոց լեզու | 1 | 1 |
| Ժ.02.07 | Գերմանական լեզուներ | 1 | - |
| ԺԲ.00.03 | Մասնավոր իրավունք /քաղաքացիական/ | 1 | 1 |
| ԺԲ.00.04 | Դատական իրավունք | 1 | - |
| ԺԲ.00.06 | Միջազգային իրավունք | 1 | - |
| ԺԳ.00.01 | Մանկավարժության տեսություն և պատմություն | 1 | 1 |
| ԺԳ.00.02 | Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա /ըստ բնագավառների/ | 2 | 1 |
| ԺԹ.00.05 | Տարիքային և մանկավարժական հոգեբանություն | 1 | 1 |
| ԻԳ.00.01 | Քաղաքական գիտության պատմություն և տեսություն | 1 | - |
| ԻԳ.00.04 | Միջազգային հարաբերություններ | 1 | - |
| ԻԴ.00.02 | Տնտեսական, սոցիալական և քաղաքական աշխարհագրություն | 1 | 1 |
| *ԸՆԴԱՄԵՆԸ* | | *20* | *10* |

***ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ***

## ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*Հավելված N 2*
*Արցախի Հանրապետության*
*կառավարության*
*2018 թվականի 18 ապրիլի*
*N 291-Ն որոշման*

### ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՏԵՂԵՐՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

### 1. ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

| Դասիչը | Մասնագիտությունը, կրթական ծրագիրը | Առկա | | Հեռակա |
|---|---|---|---|---|
| | | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը | Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը | Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը |
| 011301.00.7 | **Ընդհանուր մանկավարժություն** | | | |
| | 011301.01.7 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա | 5 | 10 | - |
| | 011301.03.7 Սոցիալական մանկավարժություն | - | - | 20 |
| 011401.00.7 | **Մասնագիտական մանկավարժություն** | | | |
| | 011401.04.7 Ֆիզիկա | 3 | 7 | - |
| | 011401.05.7 Մաթեմատիկա | 3 | 7 | - |
| | 011401.09.7 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ | 3 | 7 | - |
| 022201.00.7 | **Պատմություն** | | | |
| | 022201.02.7 Հայոց պատմություն | 3 | 7 | - |
| 023101.00.7 | **Հայոց լեզու և գրականություն** | | | |
| | 023101.03.7 Հայոց լեզվի պատմություն և գրաքննադատություն | 5 | 7 | - |
| | 023101.04.7 Հայ գրականության պատմություն | 3 | 7 | - |
| 023102.00.7 | **Օտար լեզու և գրականություն** | | | |
| | 023102.08.7 Ռուսաց լեզու | 3 | 10 | - |
| | 023102.09.7 Անգլերեն լեզու | 6 | 14 | - |
| | 023102.15.7 Ռուս գրականություն | 3 | 7 | - |
| 031201.00.7 | **Քաղաքագիտություն** | | | |
| | 031201.01.7 Քաղաքագիտություն | 3 | 7 | - |
| 031301.00.7 | **Հոգեբանություն** | | | |
| | 031301.01.7 Հոգեբանություն | 3 | 7 | - |
| 032101.00.7 | **Լրագրություն** | | | |
| | 032101.01.7 Լրագրություն | 3 | 7 | - |
| 041101.00.7 | **Հաշվապահական հաշվառում և հարկում** | | | |
| | 041101.02.7 Հաշվապահական հաշվառում և աուդիտ | 5 | 10 | 10 |
| 041201.00.7 | **Ֆինանսներ** | | | |
| | 041201.01.7 Ֆինանսներ , դրամաշրջանառություն և վարկ | 5 | 10 | - |
| 041301.00.7 | **Կառավարում** | | | |
| | 041301.01.7 Կառավարում | 7 | 13 | - |
| 042101.00.7 | **Իրավագիտություն** | | | |
| | 042101.03.7 Քաղաքացիական իրավունք և դատավարություն | 3 | 7 | - |
| | 042101.04.7 Քրեական իրավունք և դատավարություն | 5 | 7 | 10 |
| 051101.00.7 | **Կենսաբանություն** | | | |
| | 051101.01.7 Կենսաբանություն | 3 | 7 | - |
| | 051101.05.7 Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա | 3 | 7 | 10 |
| 053101.00.7 | **Քիմիա** | | | |
| | 053101.02.7 Դեղագործական քիմիա | 4 | 6 | - |
| 054201.00.7 | **Աշխարհագրություն** | | | |
| | 054201.01.7 Աշխարհագրություն | 3 | 7 | - |
| 061104.00.7 | **Տեղեկատվական համակարգեր** | | | |
| | **061104.03.7** Կառավարման տեղեկատվական համակարգեր | 8 | 17 | - |
| | **Պահուստային տեղեր** | 13 | - | - |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | *105* | *195* | *50* |

### 2. «ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

| Դասիչը | Մասնագիտությունը, կրթական ծրագիրը | Առկա | | Հեռակա |
|---|---|---|---|---|
| | | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար ) տեղերը | Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը | Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի ) տեղերը |
| 041801.00.7 | **Ագրոբիզնես** | | | |
| | 041801.01.7 Ագրոբիզնես | 3 | 10 | 10 |
| 061105.00.7 | **Տեղեկատվական տեխնոլոգիաներ** | | | |
| | 061105.01.7 Տեղեկատվական տեխնոլոգիաներ | 2 | 10 | 10 |
| 071301.00. 7 | **Էներգետիկա** | | | |
| | 071301.03.7 Էլեկտրաէներգետիկա | 2 | 10 | - |
| 071601.00.7 | **Տրանսպորտային համակարգեր** | | | |
| | 071601.03.7 Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում | 2 | 10 | 10 |
| 071602.00.7 | **Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ** | | | |
| | 071602.01.7 Գյուղատնտես ության մեքենայացում | 2 | 10 | 10 |
| 072101.00.7 | **Պարենամթերքի տեխնոլոգիա** | | | |
| | 072101.01.7 Պարենամթերքի տեխնոլոգիա | 4 | 10 | 10 |
| 073101.00.7 | **Ճարտարապետություն** | | | |
| | 073101.01.7 Ճարտարապետություն | 2 | 10 | - |
| 073201.00.7 | **Շինարարություն** | | | |
| | 073201.01.7 Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն | 2 | 10 | 10 |
| | 073201.03.7 Ջրային համակարգերի շինարարություն և շահագործում | 2 | 10 | 10 |
| 081101.00.7 | **Ագրոնոմիա** | | | |
| | 081101.01.7 Ագրոնոմիա | 2 | 10 | 10 |
| 084101.00.7 | **Անասնաբուժություն** | | | |
| | 084101.01.7 Անասնաբուժություն | 2 | 10 | - |
| | **Պահուստային տեղեր** | *5* | *-* | *-* |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | *30* | *110* | *80* |

***ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ***
***ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ***
***ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ***

*Շնորհանդես*

# ԳԱՆՁԱՍԱՐ-ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՈՒՄ

Ապրիլի 18-ին Մատենադարան-Գանձասար գիտամշակութային կենտրոնում կայացավ Արմեն Մալխասյանի «Հայկական կազմարարության Արցախ-Ուտիքի դպրոցը» և իրանահայ Փերիո Կրթասիրաց միության նախաձեռնությամբ տպագրված՝ 18-րդ դարի պատմագիր Ստեփանոս Երեցի «Հանգիտագիրք» գրքերի շնորհանդեսը:



Ներկա էին ՀԱԵ Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ԱՀ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը, ՄԵՀ և զբոսաշրջության նախարար Սերգեյ Շահվերդյանը, Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի տնօրեն Վահան Տեր-Ղևոնդյանը, գիտաշխատողներ, ԱրՊՀ դասախոսներ, ուսանողներ:

Շնորհանդեսին օրհնության խոսք ասաց Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը՝ կարևորելով նման միջոցառումների կազմակերպումը Գանձասարում. «Թող Աստված օրհնի մեր ազգին, որ կարողանանք ոչ միայն զենքով պաշտպանել մեզ, մեր գոյությունն ու անկախությունը, այլ նաև՝ գրչով, վրձնով, գրով ու արվեստով»:

ԱՀ ԿԳՍ նախարար Ն. Աղաբալյանը, ողջունելով ներկաներին, խորհրդանշական է համարել գրքերի շնորհանդեսը հենց Մատենադարան-Գանձասարում կազմակերպելու իրողությունը. «Կարևորում եմ այս ձեռնարկը. Գանձասարի Մատենադարանի բացումն ամբողջական է դարձրել մեր բարոյական նկարագիրը: Այն մեզ համար լավ հնարավորություն է աշխարհին ճիշտ ներկայանալու և վերստեղծելու այն միջավայրը, որը ծնունդ է տվել հոգևոր, պատմամշակութային արժեքներին, որով հպարտանալու առիթ ունենք իրավացիորեն»:

ՀՀ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն Վահան Տեր-Ղևոնդյանը, ընդգծելով գրքերի գիտական արժեքն ու հեղինակների կատարած աշխատանքը, կարևորել է Գանձասարի Մատենադարանի գործունեությունը. «Մենք պետք է մեր գործունեությամբ փոխենք Արցախի մասին գոյացած կարծրատիպը: Աշխարհն Արցախը պետք է ճանաչի ոչ թե որպես պատերազմող, այլ բնականոն ընթացքով զարգացող, խաղաղասեր երկիր, որտեղ ժողովուրդն ապրում է արարելով, իսկ դրան պետք է նպաստի Մատենադարան-Գանձասար գիտամշակութային կենտրոնը»:

ՀՀ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն Վահան Տեր-Ղևոնդյանը «Մատենադարան» հուշամեդալով պարգևատրել է ՀԱԵ Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանին, ԱՀ ԿԳՍ նախարար Ն. Աղաբալյանին՝ գրքերի տպագրությանն աջակցելու համար, շնորհակալագրեր է հանձնել տպագրության աշխատանքներում ներդրում ունեցած մասնագետների:

«Հայկական կազմարարության Արցախ-Ուտիքի դպրոցը» գրքի և ուսումնասիրության շուրջ դասախոսությամբ հանդես է եկել գրքի հեղինակ, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային բաժնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու Արմեն Մալխասյանը:

Գրքում Երևանի մատենադարանի ձեռագրերի հավաքածուի հիման վրա ներկայացված է հայկական կազմարարության Արցախ-Ուտիքի դպրոցը, բերված են 18-րդ դարում ստեղծված կաշվե կազմերի նմուշներ:

Նշենք, որ գիրքը հրատարակվել է ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարության աջակցությամբ:

Գրքերը նախատեսված են պատմաբանների, ձեռագրագետների, արձանագրագետների, արվեստաբանների և ընթերցող լայն հասարակայնության համար:

Շնորհանդեսի ընթացքում ճարտարապետ-վերականգնող Ստեփան Նալբանդյանը Գանձասար-Մատենադարանին է նվիրել Արցախին վերաբերող նյութեր. 1910թ. Գանձասարի բակում Վարդավառի տոնին արված լուսանկար, գիրք, որի երկրորդ նմուշը պահվում է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում և հետաքրքիր ու եզակի այլ թանգարանային նմուշներ:

*ԱրՊՀ լրատվություն*

ՄԱՐԶԱԿԱՆ

# ԱՐԹՈՒՐ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԸ ՍԵՄԻՆԱՐ-ՄԱՐԶՈՒՄՆԵՐ ՎԱՐԵՑ ԻՍՐԱՅԵԼՈՒՄ



*«Լուսարար»-ի մարզական էջը հերթական անգամ հյուրընկալեց իր մարզասեր ընթերցողների կողմից սիրված մարզիկ, Արցախի «Օյամա» կիոկուշին կարատե-դո ֆեդերացիայի գլխավոր մարզիչ, Եվրոպայի եռակի եւ աշխարհի կրկնակի չեմպիոն **Արթուր ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ**, որը նոր էր վերադարձել Իսրայելի կիոկուշին կարատեի ֆեդերացիայի հրավերով՝ մարտի 22-24-ը Իսրայելում իր կողմից անցկացված սեմինար-մարզումներից եւ իր ընդունած գոտեւորման քննությունից: Արցախցի մարզիկն իր մասնագիտական փորձն ու հմտությունները օտարերկրացի մարզիկների ու մարզիչների հետ կիսելու մասին բարեհաճեց պատմել մեզ:*

***- Արթո՛ւր, ի՞նչ տպավորությամբ վերադարձաք հայրենիք:***

- Սա երրորդ անգամն է, ինչ արտասահմանում սեմինար-մարզումներ անցկացնելու հրավեր եմ ստանում եւ մասնակցում: Առաջինը 2017թ. Բեռլինում կայացավ, երկրորդը Կրասնոդարում՝ դարձյալ 2017-ին: Չնայած Իսրայելում անցկացրած մարզումների համար քիչ ժամանակ էր տրված, այնուամենայնիվ, հաջողվեց բավականին նպատակային օգտագործել այդ երկու օրը, եւ ցանկալի արդյունքի հասանք: Հաճելի էր համագործակցությունը, ընդունելությունը ջերմ էր, տպավորությունս միանգամայն դրական է:

***- Հիմնականում ի՞նչ սկզբունքների վրա էիք կենտրոնացել սեմինար-հավաքը վարելիս, ընդհանուր առմամբ, ինչպե՞ս անցավ այն:***

- Հավաքն անցավ բարձր մակարդակով, իսկ ամենակարեւորը՝ առանց լուրջ վնասվածքների: Երկու օրում անցկացվեցին առավելագույն քանակի պարապմունքներ: Դրանք ուղղված էին մարզիկների ֆունկցիոնալ եւ տեխնիկական նախապատրաստության բարձրացմանը: Ուշադրություն դարձվեց նաեւ հոգեբանական կողմին, եւ մարզիկների հետ անցկացվեց հոգեբանական թրենինգ՝ ինչպես կարգավորել մարտից կամ մրցաշարից առաջ մարզիկի հուզական վիճակը:

***- Ձեր գնահատմամբ՝ սեմինար-մարզումները նպաստեցի՞ն մարզիկների ներուժի բարձրացմանը:***

- Երկու օրվա մեջ տեսա մեծաքանակ կարատեիստների, որոնք մեծ ձգտումներով էին մոտենում հավաքին, աշխատում յուրացնել այն նորը, ինչ ես փորձում էի փոխանցել: Այդ ձգտումը կօգնի նրանց՝ նվաճելու նորանոր տիտղոսներ՝ օգտագործելով իրենց մեծ ներուժը: Վերջին օրը նաեւ գոտու որակավորման քննություն ընդունեցի, որը հաջողությամբ անցավ բոլոր մասնակիցների համար: Բնականաբար, նոր շունչ եւ նոր հմտություններ ստացան սեմինարներից, ինչը ի հայտ եկավ քննության ժամանակ:

***- Ի՞նչ տարբերություններ կան մարզաձեւի մատուցման, մարզչական գործունեության առումով:***

- Եթե խոսենք մարզչական գործունեության մասին, ապա իրենց մոտեցումն ու մարզիկ-մարզիչ հարաբերությունը մեր մենթալիտետի համար թերեւս անսովոր են: Մեզ մոտ, օրինակ, մարզիչը մարզադահլիճում ծնողի փոխարինողն է: Բացի մարզական, մարտական տեխնիկա փոխանցողից, մարզիչը նաեւ մարզիկի դաստիարակողն ու խրատողն է, որին վստահում են ծնողները՝ իմանալով, որ նա պատասխանատվություն է կրում իր սաների համար: Իսրայելում մարզիչն իր պարապմունքի շրջանակում ծեծ-վարժանքը կիրառելով՝ կարող է դատի ենթարկվել ծնողների կողմից: Այդպիսի մոտեցումը հեղինակազրկում է մարզիչին, ինչը բացասաբար կարող է անդրադառնալ պարապմունքի վրա: Այս տարբերությունն է հիմնականում նկատվել: Բայց նաեւ պետք է նշեմ, որ մարզաձեւին տիրապետելու մակարդակը բավականին բարձր է, կան հեռանկարային մարզիկներ:



***- Կարճ ժամանակում ուժերը մոբիլիզացնելու եւ մեծաքանակ լսարանին մասնագիտական գիտելիքները փոխանցելու ընթացքում ինքներդ նոր լիցքեր եւ փորձ ստանո՞ւմ եք:***

- Ցանկացած նոր միջավայր նորի ձեռքբերման փորձ է տալիս: Սեմինար-հավաքները սովորական պարապմունքներից տարբերվում են իրենց ժամանակի սղությամբ, այսինքն՝ պետք է ճիշտ կազմակերպել օրվա անելիքները եւ հասցնել իրագործել նախատեսված ծրագիրը: Ամեն ինչ շատ արագ է կատարվում: Այդ առումով փորձ ինձ պետք է, որն ստանում եմ ամեն անգամ սեմինար վարելով: Դրական լիցքերն էլ անպակաս էին: Ինձ դուր եկավ կարգապահ, բայց աշխույժ մթնոլորտը: Հաճելի ոգեշնչում («մուսա») էր ինձ ուղեկցում. նոր մտահղացումներ եւ գաղափարներ էին ծագում, թե ինչը կարելի է բարելավել իմ պարապմունքների ընթացքում, ինչին պետք է ավելի շատ ուշադրություն դարձնել հայրենիք վերադառնալուց: Նոր մտքերը գրանցում էի ինձանից անբաժան նոթատետրում՝ չմոռանալու համար, դրանցից որոշներն արդեն սկսել եմ կիրառել:

***- Իսկ նախադրյալներ կա՞ն Արցախում Ձեր կողմից անցկացվող սեմինար-հավաքներին այլ երկրներից մարզիկներ ներգրավելու:***

- Ասեմ, որ այդ ուղղությամբ մշակվում են հեռանկարային ծրագրեր: Ամառվա ընթացքում անցկացվելիք հավաքներին հնարավոր է՝ մասնակցեն նաեւ Իսրայելից մարզիկներ: Ի դեպ, այդպիսի առաջարկ եղավ իրենց նախաձեռնությամբ: Չնայած ասում են՝ սպորտը քաղաքականության հետ կապ չունի, բայց ստացվում է , որ քաղաքականության մեջ սպորտը մեծ դեր ունի: Այլ երկրներից մարզիկների ժամանումը եւ մասնակցությունը Արցախում կազմակերպվող մարզական սեմինարներին մեզ համար մարտավարական նշանակություն ունի: Արցախը ճանաչելու համար պետք է ճանաչվեն մեր ձեռքբերումները բոլոր ոլորտներում, իսկ այդ տեսակետից Արցախում սպորտը ամենավերջին տեղում չէ:

***- Կպատմե՞ք ֆեդերացիայի ընթացիկ եւ առաջիկա ծրագրերի մասին:***

- Ապրիլի 8-ին ֆեդերացիայի նախաձեռնությամբ կիոկուշին կարատեի մրցաշար կազմակերպվեց՝ նվիրված Ապրիլյան պատերազմի հերոսների հիշատակին: Այն նպատակ ունեցավ մարզիկների մեջ սերմանել հայրենասիրություն: Թող աճող սերունդը ճանաչի եւ հիշի մեր ազգի հերոսներին: Մասնակցեց 4-17 տարեկան մոտ 200 մարզիկ մեր ֆեդերացիայի տարբեր մասնաճյուղերից, որոնք պայքարեցին 29 քաշային կարգում: Լավագույն արդյունքներ ցուցաբերած ֆեդերացիայի 55 մարզիկ կմասնակցի ապրիլի 28-ին կայանալիք ՀՀ կիոկուշինի աննախադեպ առաջնությանը, որի մասնակիցների թիվը հասնում է 1000-ի: Սկսվել են նախապատրաստական ինտենսիվ պարապմունքները:

***- Շնորհակալություն, Արթո՛ւր, հետաքրքիր հարցազրույցի համար: Ցանկանում ենք հաջողություն մրցաշարում: Շարունակե՛ք Ձեր եւ ձեր ֆեդերացիայի սաների հաղթանակներով զարդարել արցախյան մարզաշխարհը, իսկ «Լուսարար»-ը շարունակում է հետեւել ձեր ֆեդերացիայի իրադարձություններին:***

**Սոնյա ԱՎԱԳՅԱՆ**

<u>*Շնորհավորանք*</u>

# ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՄԱՐԶԻՉ - ՇԱԽՄԱՏԻՍՏԸ



Լրացավ Ստեփանակերտի շախմատի մանկապատանեկան հանրապետական դպրոցի մարզիչ Երվանդ Մկրտչյանի ծննդյան 80-ամյակը:

Ծնվել է 1938թ. մարտի 25-ին Հադրութի շրջանի Քարինգ գյուղում: Տարրական կրթությունը ստացել է ծննդավայրում: 1949թ. տեղափոխվել է Տող գյուղ, սովորել տեղի միջնակարգում, 10-րդ դասարանն ավարտել է Ստեփանակերտի հ. 1 միջնակարգում՝ 1949թ.: 1957-60թթ. ծառայել է խորհրդային բանակում՝ Սվերդլովսկ քաղաքում՝ շինարարական զորամասում: Նրա ղեկավարած շինբրիգադն արժանացել է «Կոմունիստական աշխատանքի բրիգադ» կոչման, իսկ Ե. Մկրտչյանը՝ «Շինարարության գերազանցիկ» կրծքանշանի և մի շարք պատվոգրերի, դիպլոմների, գովասանագրերի: 1963-1979թթ. աշխատել է Ստեփանակերտի հ. 21 պրոֆտեխուսումնարանում՝ որպես արտադրության ուսուցման ավագ վարպետ, հետագայում՝ տնօրենի տեղակալ: Այդ տարիներին հեռակա կարգով ավարտել է գյուղատնտեսական տեխնիկումը և Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը: Պրոֆտեխուսումնարանում աշխատելու տարիներին արժանացել է բազմաթիվ դիպլոմների, պատվոգրերի համամիութենական, հանրապետական, մարզային և ուսումնարանի ղեկավար մարմինների կողմից: Հարյուրավոր շինարարական մասնագետներ է պատրաստել, որոնք մինչև հիմա էլ աշխատում են ԼՂՀ-ում և ՀՀ շինարարական հարթակներում:

1979-1983թթ. աշխատել է Ստեփանակերտի հ. 5 դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: Այդ տարիներին նա դպրոցում պահել է շախմատի խմբակ, որն առաջին տեղն է գրավել մարզում, իսկ նրա ղեկավարությամբ ԼՂ թիմը առաջնակարգ տեղեր է գրավել հանրապետական և համամիութենական մրցումներում:

Անուրանալի է Ե. Մկրտչյանի ներդրումը Արցախում շախմատի զարգացման և երիտասարդ շախմատիստների պատրաստման գործում: 1983-1997 թթ. եղել է Շախմատի մանկապատանեկան դպրոցի հիմնադիր տնօրենը: Իսկ 1998-2004թթ.՝ Շախմատի կենտրոնական տան տնօրենը: 2004-ից ցայսօր աշխատում է Շախմատի մանկապատանեկան դպրոցում՝ որպես մարզիչ-մանկավարժ:

Ե. Մկրտչյանը վաստակավոր մարզիչ է, հանրապետական կարգի մրցավար և առաջին կարգի շախմատիստ: Նա պատրաստել է տասնյակ շախմատիստներ, որոնցից Դավիթ Մարկոսյանը լրացրել է գրոսմայստերի նորման: 55-ից ավելի շախմատիստներ 1-ին և 2-րդ կարգայիններ են: Նրա սաներից 10 հոգի աշխատել և հիմա էլ աշխատում են Շախմատի մանկապատանեկան դպրոցում՝ որպես մարզիչ-մանկավարժներ:

Ե. Մկրտչյանի սաներից շատերը եղել են մարզի և հանրապետության չեմպիոններ: Դավիթ Մարկոսյանը միջազգային վարպետի կոչումը ստացել է 2000թ., 2007թ. Մոժայսկ քաղաքում լրացրել է գրոսմայստերի նորման, Դուբնայում երկու անգամ միջազգային մրցաշարում գրավել է 1-ին տեղ: 2010թ. նրա սան Նարինե Սարգսյանը ԼՂՀ կանանց շախմատի առաջնությունում գրավել է 1-ին տեղ և դարձել հանրապետության չեմպիոն:

Արցախյան շարժման ժամանակ Ե. Մկրտչյանը մեծ ակտիվություն է ցուցաբերել: Իմանալով շրջաններում տիրող իրավիճակի մասին՝ դպրոցը բաց է պահել մինչև գիշերվա ժամը 12-ը, որը եղել է շտաբին կից: Ահա մի քանի դրվագ. մի անգամ Ռ. Պետրոսյանը ուշ գալիս է Շախմատի տուն և հայտնում, որ Հադրութի շրջանի Սպիտակաշեն գյուղից թուրքերը պատանդ են վերցրել մեր ֆիդայիներին և տեղափոխել Շուշի: Ե. Մկրտչյանի գլխավորությամբ բոլոր շախմատիստները և շախմատասերները խումբ կազմած՝ անմիջապես գնացել և բողոքել են, որ բաց թողնեն տղաներին, բայց միլիցիայի պետն ասել է, որ անհոգ լինեն, իրենք տեղյակ են այդ գործին, բայց շախմատիստներն սպասել են այնքան ժամանակ, մինչև տղաներին չեն ազատել:

1992թ. փետրվարին՝ Արցախյան պատերազմի դժվարին օրերին, Բաքվի ռադիոն հաղորդում է, որ Ստեփանակերտում մարդ չի մնացել, բոլորը փախել են, և կոչ է անում իրենց զինվորներին հավաքագրվել՝ Ստեփանակերտ քաղաքը գրավելու համար: Այդ մասին տեղեկանալով՝ Ե. Մկրտչյանը հայտնում է սպորտվարչության պետ Գեորգի Շահրամանյանին և խնդրում, որ շուտափույթ հանրապետության տղամարդկանց միջև շախմատի անհատական առաջնություն անցկացնեն, որպեսզի Բաքուն և բոլորն իմանան, որ Ստեփանակերտում կյանքը նորմալ հունով է գնում, և նույնիսկ շախմատի առաջնություն են անցկացնում: Այդպես էլ անում են:

Ե. Մկրտչյանը երբեք չի պարծեցել իր հաջողություններով: Նա լավ գիտի, որ համեստությունը մեծացնում է մարդու արժանապատվությունը: Նրա համեստությունն այն է, որ նա ոչ թե անտարբեր է գովասանքների հանդեպ, այլ ուշադիր է իր հասցեին ասվող քննադատության նկատմամբ: Միշտ եղել է ճշմարիտ ու մաքուր խղճով: Առաջնորդվում է այն սկզբունքով, որ մաքուր խիղճ ունենալը հավասարազոր է մեկ ուրիշին ուրախություն պատճառելուն, որ մարդ երջանիկ լինել չի կարող, եթե չի կարողանում բավականություն պատճառել ուրիշներին իր հաջողություններով, ուրախություն պատճառել շրջապատին: «Ձեր սխալները բացահայտող հակառակորդը շատ ավելի օգտակար է, քան դրանք թաքցնող բարեկամը»: Այս սկզբունքով է առաջնորդվում Երվանդ Մկրտչյանը և այս ոգով դաստիարակում իր սաներին:

Արցախում շախմատի զարգացման գործում ունեցած ավանդի և ծննդյան 80-ամյակի կապակցությամբ հանրապետության նախագահի հրամանագրով Երվանդ Մկրտչյանն արժանացել է վաստակավոր մարզչի պատվավոր կոչման:

Շնորհավորում ենք Ձեզ հոբելյանի և պետական բարձր կոչման համար, հարգարժա՛ն Երվանդ Մակիչի: Հետագա հաջողություններ և ամենայն բարիք Ձեզ:

**«ԼՈՒՍԱՐԱՐ»**

ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

# ԱՆՍԱՍԱՆ ՀԱՎԱՏՈՎ

Արցախյան պատերազմի առաջին մարտական գործողությունների ծանր բեռն իր ուսերին կրած բնակավայրերից մեկն է Խրամորթ գյուղը, որտեղ կատարված հրեշավոր գործողությունները խաղաղ բնակիչների հետ հիշեցնում ու թարմացնում են մեր հիշողությունը հարևան ազգի անփոփոխ ձեռագրի վերաբերյալ: Եվ այն դպրոցական նորակառույց շենքը, որի կամարների ներքո անընդհատ պիտի հնչեին հայ մանուկների երգն ու ծիծաղը, հայեցի խոսքը, և որը պիտի դառնար մատաղ սերնդի միտքն ու հավատը կռելու դարավոր դարբնոց, չծառայեց բուն նպատակին, քանզի ազերի հրոսակների կողմից գյուղը դատարկվելուց հետո այն վերածվեց զորանոցի: Վաչկատուն ցեղերին հատուկ բնազդով՝ աչքը միշտ ուրիշի ունեցվածքին, նրանք տիրեցին ու ամուր նստեցին ուրիշի օջախում…



Փախստական դարձավ տուն ու տեղը կորցրած գյուղի բնակչությունը՝ սփռվելով ու ծվարելով տարբեր ծագերում՝ հայացքը միշտ Խրամորթի երկնքին հառած, հույսի կրակը հոգում վառ պահած:

Ու չուշացավ բաղձալի օրը: Ազատագրվեց Խրամորթը, տուն վերադարձան բնակիչները՝ ամեն ինչ սկսելով զրոյից, որովհետև հրո ճարակ էր դարձել գյուղը: Վերադարձան նրանք, ում համար թանկ էր այդ հողը, ովքեր ամուր թելերով էին կապված իրենց անցյալին: Եկան, որ շենացնեն ավերված օջախը, եկան, որ շարունակեն պապերի գործը, որ կրկին թև առնի մանկան ծիծաղը, որ գյուղի բարձունքին արձագանք տա մեսրոպաշունչ հայերենը:

Այսօր, ահա, «վիրավոր» դպրոցի կամարների տակ կրկին թնդում է երգն ու ծիծաղը, կրթվում է հայ մանուկը, որ ինքն էլ իր հերթին պահ տա այդ հունդերը հարահոս դարերին:

Եվ մեծ ու պատասխանատու իրենց գործն այստեղ մարդիկ սիրով են կատարում, ավյունով ու եռանդով: Դպրոցի տնօրեն Անուշ Գաբրիելյանի ջանքերով ձևավորվել է մի կուռ կոլեկտիվ, որի յուրաքանչյուր անդամ լավ է ճանաչում իր պարտականությունները: Բոլորի հոգում ամուր է նստած հավատը, հավատը սուրբ առաքելության, Հայոց բանակի ու հաղթանակի հանդեպ: Այդ ամուր հավատով էլ սնվում է մի ողջ սերունդ, որը վաղը ավելի պիտի շենացնի հայրենի գյուղը, Արցախը: Դրա վառ առհավատչյան դարձան այն ընդօրինակման դասերը, որ փնջի շրջանակներում կազմակերպվեցին դպրոցում հայոց լեզվից (8-րդ դասարան, ուսուցչուհի՝ Լիլիթ Մկրտչյան), հայոց եկեղեցու պատմությունից (5-րդ դասարան, ուսուցչուհի՝ Արմինե Սահակյան) և երաժշտությունից (3-րդ դասարան, դասվար՝ Աստղիկ Մկրտչյան):

Երբ ուսուցչի միտքը ստեղծագործ է, կարողանում է դասապրոցեսը համակցել տարբեր մեթոդներով: Այսպես, 8-րդ դասարանում ուսուցչուհի Լիլիթ Մկրտչյանը հմտորեն միահյուսել էր հայոց լեզվի քերականության բաժիններն ու ենթաբաժինները՝ ձևաբանություն, շարահյուսություն, հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն, կապակցություն և այլն, ապահովել միջառարկայական կապը (ռուսաց լեզու, աշխարհագրություն, մաթեմատիկա, գրականություն) և համադրել սովորողների հայեցի, ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրները:

Գոհացուցիչ էին երեխաների գիտելիքները անցած նյութերի կրկնության, թեման ներկայացնելու, համապատասխան օրինակներ բերելու, հարցերին պատասխանելու, խմբային և անհատական աշխատանքների ժամանակ:

Նոր նյութի հաղորդման համար նախադասությունները ուսուցչուհին ընտրել էր մեր պատմության լուսավոր ու տխուր էջերից, և բացատրությունը չդարձավ սոսկ մենախոսություն, այլ ջերմ ու տաք երկխոսություն, որի ընթացքում աշակերտները հանդես բերեցին հայերենից ունեցած իրենց գիտելիքների մակարդակը: Իսկ երբ դասի վերջում բուրեցին գարնանային անուշահոտ մանուշակները, հասկացանք, որ գեղեցիկի ընկալման հանդեպ ևս նրանք անտարբեր չեն:

5-րդ դասարանում կազմակերպված դասը հայոց եկեղեցու պատմությունից կատարյալ մեղվափեթակ էր հիշեցնում: Գարնանային ջերմություն, ու ժրաջան մեղուներ. այսպես կարելի է գնահատել 5-րդցիների աշխատանքը ողջ դասի ընթացքում: Իրենց ճարտար ու սահուն խոսքով նրանք լավ էին տարբերում արդարությունը, բարությունը, պարկեշտությունը, համեստությունը, մերժում կեղծավորությունն ու երկերեսանիությունը, որ փարիսեցիություն էին համարում: Հասկանում էին առակների արտահայտած բարոյախոսությունը, բացատրում, որ, չնայած մաքսավորը շատ փող էր գցել գանձանակը, իսկ այրի կինը՝ ընդամենը երկու լումա, այնուամենայնիվ, վերջինս ավելի շատ գումար նվիրաբերեց, քան մաքսավորը, որովհետև այրի կնոջ մոտ եղած գումարն ընդամենը այդքան էր: Պատմություններից ու առակներից կարողանում էին գեղեցիկ հետևություններ անել. Աստված միշտ ներում է բոլոր նրանց, ովքեր զղջում են: Ֆիզկուլտդադարը ևս նպաստեց սովորողների գիտելիքների ամրապնդմանը՝ թոթափելով հոգնածությունը. դեմ դիմաց քայլում էին աշակերտները՝ ամեն քայլափոխի հնչեցնելով Քրիստոսի 12 աշակերտների անունները, իսկ երկու աշակերտ գրատախտակին իրենց թիմերի արտասանած անուններն էին գրում (արագաշարժությունը կարևոր էր): Ուսուցչուհի Արմինե Սահակյանը նրանց վարժեցրել էր արագ մտածելու ու կողմնորոշվելու տեխնիկային, և սովորողները գեղեցիկ հայերենով ու գրագետ էին ձևակերպում իրենց մտքերը: Իսկ երբ հանձնարարվեց բնութագրել իրենց ընկերներին, աշակերտները շատ անկեղծ էին իրենց խոսքում: Առաջին աշակերտ. «Ինգան ունի բարի սիրտ, քանի որ օգնում է ինձ դասերին պատրաստվելիս և այն ժամանակ, երբ չեմ հասկանում հանձնարարությունը», 2-րդ աշակերտ. «Գոռը շատ բարի է, որովհետև դասերից հետո օգնում է մայրիկին: Իսկ երբ մենք տխուր ենք լինում, կարողանում է ուրախացնել բոլորիս», 3-րդ աշակերտ. «Եվան շատ բարեհոգի է, միշտ օգնում է ծնողներին և կատարում Աստծո պատվիրանները», 4-րդ աշակերտ. «Նարեկը լավ տղա է: Երբ նրա ընկերը դժվարության մեջ է լինում, օգնում է նրան»:

Այնուհետև ուսուցչուհին սահուն անցում է կատարում և ներկայացնում «Սերմնացանի առակը»՝ հաստատելով այն միտքը, որ Հիսուսի առակները տարբերվում են սովորական առակներից, քանի որ նրանք իրական կյանքից վերցված պատմություններ են: Եվ վերհիշելով իր ուսուցչին, որ փոքր ժամանակից իրենց հետաքրքիր առակներ էր պատմում, ու գրավում բոլորի ուշադրությունը՝ ակնարկեց բոլոր այն մարդկանց, ովքեր ապրում են ոչ միայն իրենց համար: Պետք չէ կեղծ երդումներ տալ, այլ ապրել այնպես, որ բոլորը հավատան քեզ. գործով միայն ապացուցել նվիրվածությունը հայրենի հողին ու ժողովրդին: Ու անդրադարձավ Արցախյան պատերազմում իրեն կյանքը զոհաբերած 31 հերոսներին ու հավելեց ևս մեկին՝ ապրիլյան քառօրյա պատերազմի հերոս, Խրամորթի քաջարի զավակ, գնդապետ Օնիկ Գրիգորյանին, որի հայրը՝ Կարո Գրիգորյանը, ներկա էր դասին և վերլուծության ժամանակ իր ծնողական երախտագիտությունը հայտնեց ուսուցչուհուն. «Քանի հնչեցնում եք որդուս անունը, այնքան երկարում է նրա կյանքը»:

«Սերմնացանի առակը» իմաստավորում է այն մարդկանց, որոնք ներկայացնում են պարարտ հողը: Ապառաժը, փշերը, ճանապարհը մարմնավորում են այն մարդկանց, որոնք Աստծո խոսքին ուշադրություն չեն դարձնում, իրենց անձնական շահի մասին են մտածում, շեղվում են ճիշտ ճանապարհից, հրաժարվում բարիք գործելուց: Իսկ պարարտ հողը, որտեղ սերմերը բերք են տալիս մեկի դիմաց՝ երեսուն, վաթսուն, հարյուր…, նման է այն մարդկանց, որոնց գործերը բարի պտուղներ են տալիս, ինչպես ցորենի սերմնահատիկը:

Ամեն ինչ՝ դիտարժան պաստառները, «գանձանակը», որից երեխաները հարցեր էին հանում ու անմիջապես պատասխանում, տեսանյութը, ծառայեցին իրենց նպատակին: Ինչքա՜ն բարություն ու հարգանք կար երեխաների հոգում դեպի արդար մարդը, դեպի բարի գործը: Նրանց հոգուց դուրս էին հորդում մանկական անկեղծ ու անապակ զգացմունքները: Դասին հրավիրված՝ Ասկերանի շրջանի հոգևոր հովիվ Արթուր սարկավագը ուսուցչուհու և երեխաների աշխատանքը գնահատեց գերազանց:

Այո՛, բարի մարդիկ մեր շրջապատում պիտի շատ լինեն. սա է երեխաների մեկնաբանությունը:

3-րդ դասարանում երաժշտությունից կազմակերպված դասը ևս արժանացավ բոլորի ուշադրությանը և գնահատանքին, որովհետև կարևոր առաքելություն ուներ՝ սովորողների հոգում միշտ արթուն պահել ազգային երգն ու երաժշտությունը, ճանաչել տալ ժողովրդական գործիքները, մշակութային արժեքները: Դասվար Աստղիկ Մկրտչյանի ժպտադեմ, բարի հայացքը, տրամադրող ու հաճելի ձայնը, քնքուշ վերաբերմունքը նպաստեցին սովորողների ակտիվությանը, և դասն անցավ ջերմ փոխհամագործակցության պայմաններում:

Հյուրերն ընդգծեցին ընդօրինակման դասեր կազմակերպած ուսուցիչների բարձր պատասխանատվությունն ու եռանդուն աշխատանքը սովորողների կրթության ու բարոյական կերպարի կերտման գործընթացում:

Օրը եզրափակվեց գարնանային չքնաղ տոնի՝ Կանանց միջազգային օրվա առթիվ կազմակերպված գեղեցիկ միջոցառմամբ (կազմակերպիչ՝ Նանար Աղաջանյան), որի ընթացքում սիրո ու քնքշանքի խոսքեր հնչեցին սուրբ մայրերի, հերոս կանանց, խիզախ ու քաջ քույրերի հասցեին: Նրանցով է կենդանի ու գեղեցիկ բնությունը, հավերժական՝ աշխարհը, իմաստալից ու քաղցր՝ մեր կյանքը:

**Սուրայա ՂԱՋԱՐՅԱՆ**

# ԲԱՑ ԴԱՍ՝ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ուսուցիչների վերապատրաստման 2017-2018 ուստարվա հերթական դասընթացները ևս ավարտվեցին: Իննօրյա աշխատանքներն ամփոփվեցին բաց դասերով, որոնցից երկուսը (VIա դասարան՝ մայրենի, VIբ դասարան՝ ֆիզկուլտուրա) կազմակերպվեց Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցում:

Մայրենիի բաց դասը VIա դասարանում (ուսուցչուհի՝ Սուսաննա Ստեփանյան) համարվեց ուսանելի և օրինակելի մայրաքաղաքի և շրջաններից հրավիրված ավելի քան քսան ուսուցիչների կողմից:

Դասի թեման Աղասի Այվազյանի «Գրախանութ» պատմվածքն էր: Դասապրոցեսը տրամադրող և հետաքրքիր մուտք ուներ: Ներկաները ըմբոշխնեցին «Երազ իմ երկիր հայրենի» հանրահայտ երգը (խոսք՝ Աղասի Այվազյանի, երաժշտությունը և կատարումը՝ Ռոբերտ Ամիրխանյանի):

Ուսուցչուհի Ս. Ստեփանյանը նախ ստուգեց տնային աշխատանքները, որ խմբային հանձնարարություն էին:

Առաջին խմբի աշակերտները մանրամասն տեղեկություններ հաղորդեցին Ա. Այվազյանի կյանքի և ստեղծագործության մասին: Երկրորդ խումբը ներկայացավ ինքնատիպ և մեկը մյուսից հետաքրքիր շարադրությամբ՝ «Գիրքն իմ կյանքում» վերնագրով: Երրորդ խումբն ընդհանուր տեղեկություններ հաղորդեց Ստենդալի «Կարմիրը և սևը», Ստիվենսոնի «Գանձերի կղզին» և Դյումայի «Երեք հրացանակիրները» ստեղծագործությունների վերաբերյալ (վերոհիշյալ գրքերը դասարանում էին):

Աշակերտները պատմվածքը նկարել էին ըստ իրենց պատկերացման: Հետաքրքիր էին նաև գույների ընտրությունն ու համադրությունը և յուրովի մեկնաբանությունը:

Սովորողները հնարավորություն ստացան անկեղծորեն արտահայտվելու, քննարկելու, բանավիճելու, քննադատաբար մոտենալու գրական երկին, դրանում զարգացող դեպքերին, գործողություններին, հերոսների արարքներին: Այդպիսի մոտեցումը նպաստում է վերլուծական կարողությունների խթանմանը:

Գրքերի մասին աշակերտների մեջբերած գեղեցիկ ասույթներն ուսուցչուհին ամբողջացրեց՝ արտասանելով Ե. Չարենցի «Տաղ՝ ձոնված գրքերին» գեղեցիկ բանաստեղծությունը՝ սաներին հղելով մեծ բանաստեղծի պատգամը.

«Օ՜, գրքերի աշխարհը տիեզերք է անեզր»:
Արևների նման բազմապիսի,
Ե՛վ աստղերի նման, և՛ շողերի -
Ես սիրում եմ գրքերը, որ աշխարհի մասին
Բարբառում են անձուկ ու մտերիմ:

Իմաստի ընկալման փուլում եռամակարդակ ձևավորված աշակերտների երեք խմբերը բառային և տեքստային բազմաբնույթ աշխատանքներ կատարեցին:

Կշռադատման փուլում ուսուցչուհին կիրառեց «Քառաբաժան» մեթոդը.

1. Ի՞նչ էի տեսնում:
2. Ի՞նչ ձայներ էի լսում:
3. Ի՞նչ էի զգում:
4. Ի՞նչ մտքեր էին ծնվում:

Աշակերտները մտքերն արտահայտում էին վստահ, անկաշկանդ և սահուն գրական հայերենով: Գովելի է այն փաստը, որ նրանք մեկը մյուսին չէին կրկնում, ավելին՝ լրացնում ու համալրում էին ասելիքը:

Գրական երկը զուգորդվեց երաժշտության, տեսաֆիլմի հետ:

Ուսուցչուհու կեցվածքն անգերազանցելի էր, խոսքը՝ կիրթ: Նա խրախուսում և քաջալերում էր աշակերտներին: Աշխատանքը կազմակերպվեց ԽԻԿ համակարգի սկզբունքով, որը հանդուրժողականություն, դիմացինին լսելու, ասածը հասկանալու կարողություններ է ձևավորում, նպաստում մտքերն ազատ և անկաշկանդ արտահայտելուն, ինչպես նաև զարգացնում է աշակերտների ստեղծագործական մտածողությունն ու երևակայությունը:

Դասապրոցեսի երկրորդ մասում աշակերտները ներկայացան դաս-դատով, որն էլ ավելի նպաստեց նյութի ամբողջովին յուրացմանը և աշակերտների անձնային հատկանիշների բացահայտմանն ու դրսևորմանը: Հավելեմ նաև, որ փորձառու ուսուցչուհին շատ ճիշտ դերաբաշխում էր կատարել: Վճռորոշը, այնուամենայնիվ, ուսուցչի ստեղծագործական աշխատանքն է. նա մշտապես գտնում է մատուցման նոր ձևեր, դասաժամին աշակերտներին զույգերով և խմբով աշխատեցնելու նորանոր հնարներ: Յուրաքանչյուր սովորող իր ուժերին համապատասխան առաջադրանք է ստանում և աշխատում է. որը մեծապես պայմանավորված է ուսուցչի վարպետությամբ, նրբանկատ վերաբերմունքով, մանրակրկիտ ու հետևողական աշխատանքով:

**Ռիմա ՄԵԼՔՈՒՄՅԱՆ**
**Ստեփ. հ. 6 հիմն. դպրոցի հայոց լեզվի եւ գրականության մեթոդմիավորման նախագահ**

ԳԵՂԱԴԻՏԱԿ

# ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԷԻՆ

Բոլորիս հայտնի է, որ Շուշիի մշակութային կյանքի ներկապնակը հարուստ է ու բազմերանգ և բազմիցս հպարտանալու առիթ է տվել:

Ապրիլի 19-ին մշակութային օրրանի Արվեստի թանգարանում կազմակերպվեց ուշագրավ ցուցահանդես Շուշիի Արսեն Խաչատրյանի անվան հումանիտար քոլեջի ուսանողների կողմից: Մեկ անգամ չէ, որ ականատես ենք դառնում քոլեջի աշխատանքների ցուցադրությանը: Ցուցահանդեսին ներկա էին պաշտոնատար անձինք, արվեստի և մտավորականության ներկայացուցիչներ, քոլեջի դասախոսներ և ուսանողներ:



Բացման խոսքով հանդես եկավ քոլեջի տնօրեն Ջիվան Հայրապետյանը՝ ընդգծելով, որ ցուցահանդեսն ունի ուսանողներին քաջալերելու նպատակ:

ԱՀ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը նշեց, որ քոլեջը նպաստել է Շուշիի մշակութային միջավայրի ձևավորմանը և շարունակում է իր այդ առաքելությունը:

«Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտի ռեկտոր Յուրի Հովհաննիսյանն ասաց, որ ակնհայտ է ցուցադրված աշխատանքների որակը, և լավագույն ուսանողները կարող են դառնալ մշակութային կյանքի շարժիչներ՝ պահելով այս ոլորտի դինամիզմը:

Ցուցահանդեսին ներկայացված էին քոլեջի «Զարդարային ու կիրառական արվեստի, ժողովրդական արհեստներ», ինչպես նաև «Դիզայն» և «Հագուստի մոդելավորում» բաժինների ուսանողների աշխատանքները: Ցուցադրված էին կավագործության (խեցեգործության), գեղանկարչության, ինտերիերի-էքստերիերի ուշագրավ նմուշներ:

Ինչպես մեկնաբանեց «Հագուստի մոդելավորում»-բաժնի դասախոս Գայանե Մինասյանը, ցուցահանդեսը կազմակերպվել է որպես ուսումնական տարվա աշխատանքների ամփոփում Մայիսյան եռատոնի նախօրեին:

Դիզայնի մասնագետ Մերի Մուսայելյանը պարզաբանեց, որ ներկայացված են վերջին կուրսի ուսանողների դիպլոմային աշխատանքները: Նա ասաց, որ հիմնական ուշադրությունն այդ աշխատանքներում դարձվել է ինտերիերին և էքստերիերին:

Ցուցանմուշներում ներկայացված էին Շուշին պատկերող ուշագրավ կտավներ, դիմանկար-գծանկարներ, ոճային առումով մեկը մյուսին գերազանցող գոբելենային աշխատանքներ:

Դրանց մասին հանգամանալից պատմեց «Զարդարային-կիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ» բաժնի ղեկավար, ԱՀ նկարիչների միության անդամ Սամվել Թավադյանը՝ մեր ուշադրությունը հրավիրելով բաժնի բոլոր ճյուղերի աշխատանքներին՝ նկարներ, փայտի փորագրություն, կավագործություն: Ինչպես ասաց նա, տարվա կտրվածքով ներկայացված են լավագույն աշխատանքները: Նկարներում վերածնվող Շուշին է, տեղ են գտել դեկորատիվ նատյուրմորտներ, դիմանկարային



ժանրի գծանկարներ: Առանձնանում են փայտափորագրության բարձրարվեստ թեմատիկ աշխատանքները՝ «Հայկ և Բել», «Արտաշես 1», «Առյուծաձև Միհր», «Քրիստոսի մուտքը Երուսաղեմ», «Խորհրդավոր ընթրիք»…

Կավագործության դասախոս Սերոբ Մամունցը հավելեց, որ ներկայացված աշխատանքների թեմատիկան ազգային զարդամոտիվներով է: Դրանց մի մասը կիրառական է, մյուսը՝ դեկորատիվ, մեկ այլ մասն էլ արվեստի գործեր են: Ազգային թեմատիկայով են ղարաբաղյան այան՝ կուժի և աղամանի տեսքով, տղամարդու կերպարը… Աշխատանքների մի մասն էլ հին գործերի կատարելագործված վերարտադրումներ են: Արվեստի գործերից են կավե անոթները՝ թեմատիկ պատկերներով և պղնձե գեղարվեստական ոտնակներով, որոնց կլորությունը խորհրդանշում է Երկիր մոլորակը, ֆիգուր-ոտնակները՝ մարդկության սերուցք-մտածողները, որոնք տանում են աշխարհն առաջ: Մեկ ուրիշ անոթի վերնամասում Սասնա ծռերի տոհմաբանության հերոսապատումն է…

Ցուցադրությանը կոլորիտային շունչ էին հաղորդում ասեղնագործական ասվյա բարդ, գունազարդ ձեռագործ աշխատանքները, որոնք պատկերում են հայկական ինքնատիպ զարդանախշեր, գոբելենե որակյալ և հարուստ թեմատիկայով գործեր, կարպետներ, դրանցից հյուսված կենցաղային ուշագրավ պիտույքներ, գորգ: Կային ազգային հագուստի գեղեցիկ նմուշներ:

Կարելի է վստահ ասել, որ Շուշիի մշակութային օջախներից մեկում՝ Արսեն Խաչատրյանի անվան հումանիտար քոլեջում կրթվում և կատարելագործվում է Շուշիի ապագան կերտող արվեստագետ սերունդ, որ, իրար շաղկապած այսօրն ու վաղը, ավելի է հստակեցնում Շուշիի դիմագիծը:

**Վարդիթեր ՀԱԿՈԲՅԱՆ**

# ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ



Ապրիլի 13-ին Ստեփանակերտի հ. 6 պետական մանկապարտեզի «Ծիածան» միջին խմբում տեղի ունեցավ Գարնան և մայրության տոնին նվիրված հանդես:

Ներկա էին ԱՀ ԿԳՍՆ նախադպրոցական և արտադպրոցական բաժնի պետ Ա. Այվազյանը, Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՍ բաժնի վարիչ Կ.Մարգարյանը, բաժնի մասնագետներ:

Երեխաները շատ ակտիվ էին: Եռանդով ու մեծ ոգևորությամբ փոքրիկ դերասանները ներկայացրին երկու բեմականացում: Երգ ու պարով և գեղեցիկ արտասանությամբ համեմված հանդեսը եզրափակվեց հայկական «Լորկե-լորկե» պարով:

Հյուրերն իրենց երախտագիտությունը հայտնեցին մանկապարտեզի տնօրեն Էմմա Անտոնյանին և ողջ անձնակազմին՝ նման գեղեցիկ և բովանդակալից գարնանային տոն կազմակերպելու համար: Գովեստի խոսքի արժանացան նաև հանդեսի կազմակերպիչներ Գոհար Սարգսյանը և Գայանե Մամունցը:

**Անի ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ**

# ՀՈԳՈՒ ՈՂՋ ՍԵՐԸ՝ ՍԱՆԵՐԻՆ

Այսօր դպրոց են գալիս երեխաներ, որոնց մի մասը նախադպրոցական հիմնարկներից է, մի մասը՝ առանց որևէ նախապատրաստվածության: Նրանք ուսման նկատմամբ, բնականաբար, ունեն տարբեր վերաբերմունք:

Ստեփանակերտի Ա.Ղուկասյանի անվան հ. 2 հիմնական դպրոցին կից նախադպրոցական հիմնարկի «Արևիկ» խմբի դաստիարակչուհի Մելինե Բադալյանը, հաշվի առնելով այդ հանգամանքը, պարապմունքները կազմակերպում է այնպես, որ երեխաները կարողանան հետաքրքիր ու զվարթ սովորել: Նա հետաքրքրաշարժ, ուսուցանող, միտքն ու երևակայությունը շարժող բազմաթիվ լեզվատրամաբանական առաջադրանքներով ուսուցումը դարձնում է գրավիչ ու հետաքրքրական:

Վերջերս նրա կողմից անցկացվեց բաց դաս «Գրաճանաչություն»-ից, պարապմունքի թեման էր՝ «Ղ-Խ հնչյուն-տառերի ամրապնդում»: Դաստիարակչուհին ուսումնական պաստառների, նկարների, աղյուսակների միջոցով ստեղծեց մտերմիկ միջավայր երեխաների համար, որը նպաստեց լեզվական հասկացությունները խոսքում դիտարկելու կարողությունների ձևավորմանը:

Տեղին ու ժամանակին նա անդրադարձավ «խաղաղություն» բառին՝ երեխաների մոտ սեր առաջացնելով դեպի հայրենիքը: Նրա տքնաջան աշխատանքի շնորհիվ երեխաները հրճվանք են ապրում, երբ ինչ-որ հարցի պատասխանում են ճիշտ, իսկ ինքը կրկնակի բերկրանք է ապրում, երբ այդ պատասխանը ոչ թե մեխանիկորեն հիշելու արդյունք է, այլ ինքնուրույն դատողություն:

Փոքրիկները կարողանում են ճիշտ և ժամանակին պատասխանել դաստիարակչուհու բազմաբնույթ լեզվատրամաբանական առաջադրանքներին, հաճույք են ստանում ինքնուրույն վճիռներ կայացնելուց, կարողանում են գնահատել իրենց կատարածը, համեմատվել ուրիշների հետ:

Դաստիարակչուհին մեծ տեղ է տալիս փոքրիկների ստեղծագործական երևակայությանը, հիշողությանը, մտածողությանը, նրանց մեջ ձևավորում երկարատև կենտրոնանալու, կամք դրսևորելու ունակություններ:

Այսպիսի շնորհակալ աշխատանք է կատարում մեր՝ ծնողներիս կողմից շատ սիրված ու հարգված, երիտասարդ, բայց գործին հոգով ու սրտով նվիրված դաստիարակչուհի Մելինե Բադալյանը:

*Ստեփ. Ա.Ղուկասյանի անվան h.2 դպրոցի «Արևիկ» խմբի ծնողներ*

# «ԹՈՒՄՈ»-Ն ԸՆԴԼԱՅՆՈՒՄ Է ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԸ

4☜

Ծնողները ցանկություն հայտնեցին նաև մեծահասակներին ընդգրկել «Թումո»-ում: Մ. Փափազյանն ասաց, որ եթե 18-28-տարեկանների համար ծրագիրն ապահովեն, կմտածեն նաև այդ ուղղությամբ՝ տարիքային շեմը վերևից բարձրացնել կամ ներքևից ցածրացնել: «Շատ պահանջ կա: Պարզապես չենք հասցնում թ՛ ֆինանսավորումը, թե՛ ծրագիրը: Ամեն ծրագիր անընդհատ զարգացնում ենք, նոր վարժությունների հոսք սկսում, որ ավելի հետաքրքիր լինի, կրկնություններ չլինեն, հետաքրքիր ճանապարհներ բացել. այդ ամենը ինչ լուրջ մոտեցում է պահանջում»: Բոլոր դեպքերում նա առաջարկեց մենեջերին, «Թումո»-ի ղեկավար Կորյունին աշխատել այդ ուղղությամբ, ծնողական խմբեր ստեղծել :Թող Ստեփանակերտն առաջին օրինակը լինի:

Հարց եղավ, թե «Թումո»-ն ավարտած աշակերտն ինչպես կարող է կապը պահել նրա հետ, ինչ աշխատանք կարող է անել:

Մ. Փափազյանի պատասխանով՝ «ավարտել» հասկացություն «Թումո»-ում չկա, այն ունի մինիմումների ծրագիր (8 աշխատարանի պետք է մասնակցած լինի, երեք տարի հաճախած), որը հանձնողին տալիս են մի կարգավիճակ (անունը դեռ չեն որոշել), որով նա կարող է որոշ դասընթացների և աշխատարանների շարունակել մասնակցել, և եթե ուզում է, մասնակցել նաև դասավանդման պրոցեսին: Հնարավորություն է տրվում, որ նա շարունակի մասնակցել իրեն հետաքրքրող նախագծին:

Ծնողներից մեկն առաջարկեց նրանցից խումբ ստեղծել, որը կփորձի արտադրանք տալ ու շուկա հանել:

Մարի Փափազյանը տեղեկացրեց, դիմել է նախարարությանը տարածքն ընդարձակելու առաջարկով և հուսով են, դրական կլուծվի: Փորձում են նաև ֆինանսավորումը գտնել, նպատակը այդտեղ մի քանի ստարտափ ստեղծելն է: Հաը կտրամադրեն, նախագծեր ցանկացողները երկու տարում պետք է հասնեն մի որոշակի մակարդակի, դրանից հետո նրանք դուրս են գալիս, գալիս են մյուսները: Երևանում արդեն կա այդպիսի խումբ, որն արդեն ինքնաբավ է:

Հանդիպման վերջում ծնողներից մեկը՝ Ասկերանի շրջանի Խանցք գյուղից Նարինե Խաչատրյանը, «Թումո»-ցիների ծնողների անունից շնորհակալություն հայտնեց Մարի Փափազյանին. «Մենք երախտապարտ ենք Ձեզ՝ նման ծրագրեր այստեղ իրականացնելու համար: Արցախում, Տավուշում և սահմանամերձ մյուս բնակավայրերում մենք իրավունք չունենք ունենալ չկրթված սերունդ: Դուք, իրոք, մեծ աշխատանք եք կատարում: «Թումո»-ցիների մեծ մասը գյուղերից է: Մենք ունեինք այդ մեծ երազանքը, որ մեր երեխաները տեղեկացված լինեն, բայց չկար այդ հնարավորությունը: Դուք տվեցիք մեզ այդ հնարավորությունը»:

**Լուսինե ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

## ԲԱԶՄԱԶԱՆ

# ՀԱՂԹԱՆԱԿԻՑ ՈԳԵՎՈՐՎՈՒՄ, ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆ

Մայիսի 11-12-ը Ստեփանակերտի շախմատի մանկապատանեկան հանրապետական մարզադպրոցում անցկացվեց դպրոցականների շախմատի 12-րդ հանրապետական օլիմպիադան: Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին անցկացվել են ներդպրոցական, դեկտեմբերին՝ շրջանային (քաղաքային) փուլերը, մայիսի սկզբներին Երևանում կանցկացվի եզրափակիչ փուլը: Մասնակցում էին նախորդ փուլում հաղթած դպրոցական թիմերը. Ասկերանից՝ Խաչենի, Մարտունուց՝ Բերդաշենի, Մարտակերտից՝ Հաթերքի, Հադրութից՝ Ազոխի, Շուշիից՝ Դանիել Ղազարյանի անվան, Շահումյանից՝ Նոր Վերինշենի, Քաշաթաղից՝ Գողթանիկի միջնակարգ, Ստեփանակերտից՝ հ. 2 և հ. 9 հիմնական դպրոցների թիմերը: Յուրաքանչյուր թիմի կազմում ընդգրկված էր 4 մարզիկ, որոնցից առնվազն մեկը՝ աղջիկ: Մրցումներն անցկացվեցին ՖԻԴԵ-ի արագ շախմատի կանոններով՝ շրջանային մրցաձևով:



«Տպավորությունս դրական է, ոգևորիչ. նկատելի են առաջխաղացումը, երեխաների սերը, պատասխանատվությունը, հետաքրքրությունը իմաստուն խաղի նկատմամբ: Նրանք նույնիսկ հուզումնալից պահեր ապրեցին՝ կորցնելով միավորներ: Նշանակում է՝ ի միջի այլոց չեն մասնակցել, եկել են հաղթելու նպատակով: Շախմատասերների բանակը գնալով ընդլայնվում է»,- ասաց ԿԳՍՆ պետական տեսչության նախնական մասնագիտական (արհեստագործական) և նախադպրոցական կրթության բաժնի վարիչ, շախմատի գծով մասնագետ, տեսուչ Բեհբուդ Մելքումյանը:

Երկօրյա համառ պայքարում 16 և 13 միավորներով 1-ին և 2-րդ տեղերը գրավեցին Ստեփանկերտի հ. 9 և հ. 2 դպրոցների թիմերը (մարզիչներ՝ Իրինա Պետրոսյան, Նինել Շահնազարյան), 3-րդ տեղը 10 միավորով՝ Մարտունու շրջանի Բերդաշենի դպրոցի թիմը (մարզիչ՝ Արթուր Սողոմոնյան): Լավագույն խաղացողներ ճանաչվեցին հ. 9 դպրոցի աշակերտներ Արամ Մեհրաբյանը և Շուշաննա Բալայանը:

Մրցանակային տեղեր գրաված թիմերը, նրանց մարզիկներն ու մարզիչները պարգևատրվեցին ԱՀ ԿԳՍՆ դիպլոմներով, մեդալներով և դրամական պարգևով, հաղթող թիմը՝ գավաթով: Պարգևատրվեցին նաև լավագույն արդյունքներ ցուցաբերած պատանին ու աղջիկը: Մրցանակակիրներին շնորհավորեց և պարգևները հանձնեց Բ. Մելքումյանը: Իսկ ում բախտ չվիճակվեց կանգնել հաղթողի պատվանդանին, նա խորհուրդ տվեց չհուսահատվել, պայքարը շարունակել մինչև վերջ. «Բոլորը հաղթելու համար են գալիս, բայց պետք է տեսնել պայքարի դժվարությունները: Հաղթանակի հասնում են պարտություններից դասեր քաղելով: Դուք առաջինը չեք, բոլոր հանրահայտ շախմատիստները, աշխարհի չեմպիոնները նույնպես պարտություններով են հասել հաղթանակների: Դա ձեզ հնարավորություն կտա խաղը վերլուծել, ձեր թերությունների շուրջ ավելի խորը մտածել և հետագա խաղերի ժամանակ ավելի ճիշտ դրսևորվել»:

Նա գոհունակություն հայտնեց այն բանի առթիվ, որ երեխաները ցուցաբերել են բարձր կարգապահություն և գիտակցականություն. «Իմաստուն խաղը ձեզ իմաստություն է սովորեցնում առաջին հերթին: Եղել եք կարգապահ, արդար պայքար մղել, ինքնուրույն կարողացել վերլուծել, արագ կողմնորոշվում եք, մինչև վերջ պայքարում եք: Բայց կասեի՝ առավել շատ ուշադրություն դարձրեք վերջնախաղերին ու նաև կարողացեք մրցակցի դիրքը գնահատել ցանկացած քայլից հետո ու նոր քայլեր անել»:

Պարգևատրումներ եղան նաև մրցումների աջակից՝ Հայ բարեգործական ընդհանուր միության կողմից: Հաղթած թիմը պարգևատրվեց գավաթով, մասնակիցները՝ արժեքավոր նվերներով: Պարգևները հանձնեց ՀԲԸՄ ներկայացուցիչ Սասուն Բաղդասարյանը:

Շնորհավորելով բոլորին օլիմպիադայի հանրապետական փուլին մասնակցելու կապակցությամբ՝ Բ. Մելքումյանը հաջողություն մաղթեց հաղթող թիմին, որը մայիսին կմասնակցի Երևանում կայանալիք մրցույթի եզրափակիչ փուլին: Նա հույս հայտնեց, որ մեր առաջատարները հուսախաբ չեն անի:

**Վ.. ՀՈՎՍԵՓՅԱՆ**

# ՆՎԻՐՎԱԾ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ 30-ԱՄՅԱԿԻՆ

Ասկերանի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի առօրյան բազմաբովանդակ ու հագեցած է: Այստեղ հաճախակի են կազմակերպվում տարբեր միջոցառումներ: Նրա սաներն ընդգրկված են շրջանում տեղի ունեցող տոն և հիշատակի օրերին կազմակերպվող հանդիսավոր միջոցառումներին: Կենտրոնի տնօրինության և դասվարների ուշադրությունից չի վրիպում և ոչ մի հիշարժան իրադարձություն. դրանցից յուրաքանչյուրն անցկացվում է տոնական շուքով:

Արցախյան շարժման 30-ամյակին ընդառաջ ՄՊՍԿ-ում հայտարարվել էր շարադրությունների մրցույթ՝ «Արցախն իմ տունն է» թեմայով: Այն սաներն ընկալեցին մեծ խանդավառությամբ: Իրենց շարադրություններում նրանք ներդրել էին հոգու ողջ սերն ու հարգանքը Հայրենիքի, հարազատ բնաշխարհի գեղեցկության ու անկրկնելի, կուսական բնության հանդեպ:

Այգեստանի մասնաճյուղի թատերական խմբակի սան Վահրամ Նասիբյանի խոհերը, իննամյա երեխայի հպարտությունը հարազատ բնաշխարհն է, նրա հերոսական ժողովուրդը, որի հայրենանվեր զավակների շնորհիվ մեր չնաշխարհիկ հայրենիքում խաղաղություն հաստատվեց: «Ապրիլյան պատերազմից հետո, որին հայրս ևս իր ներդրումն ունեցավ, ես նրանից զինվորական համազգեստ խնդրեցի: Եվ ահա արդեն երկու տարի է, այն կրում եմ մեծ հպարտությամբ: Ես սիրում եմ Արցախը և պատրաստ եմ Ադամի, Ազատի, Արմենակի, Քյարամի, Մարատի, Գոռի, Ռոբերտի և էլի շատերի նման պաշտպանել իմ տուն Արցախը»,- գրում է Վահրամը: Նույն մասնաճյուղի ասմունքի խմբակի սան Սիրան Գրիգորյանը լավագույնս է տիրապետում հարազատ բնօրրանի դարավոր և հերոսական պատմությանը, նրա ապագայի բոլոր ծրագրերն ու մտահղացումներն, անկասկած, Արցախում են:

Ավետարանոցի ուլունքագործության խմբակի սան Անուշ Պետրոսյանը հպարտությամբ է նշում իր հայ լինելը, իր անչափ հայրենասիրությունը, քանզի ծնվել և հասակ է առել հայրենասերների ընտանիքում: Նրա հայրն այսօր էլ ծառայում է Պաշտպանության բանակում, իսկ եղբայրը քաջաբար հսկում է հայրենիքի սահմանները: Մեծ քնքշանքով ու ոգևորությամբ է պատմում Անուշն իր սիրո մասին առ Արցախ աշխարհ ու իր ծննդավայր Ավետարանոց:

Հիրավի, դաստիարակությունը, որ աշակերտներն ստանում են դպրոցում և արտադպրոցական հիմնարկներում, մեծապես նպաստում է նրանց ազատ կամարտահայտմանը՝ խորհելու, փնտրելու, գտնելու բազում հարցերի պատասխաններ: Դա է թերևս պատճառը, որ բոլոր շարադրություններում նրանք երդվում են, որ Հայրենիքը երբեք չեն լքի, այլ կապրեն նրա հոգսերով՝ պատրաստ ամեն ինչի: «Ես հայ եմ և հպարտ եմ դրանով,- գրում է Ավետարանոցից Սվետլանա Մնացականյանը և շարունակում,- հպարտ եմ, որ ապրում եմ վեհաշուք Արցախում, խոստանում եմ, որ կլինեմ գեղատեսիլ Արցախ աշխարհի հուսալի պաշտպանը»:

Կենտրոնի Ասկերանի մասնաճյուղի ասմունքի խմբակի սան Կարինե Բախշիյանի շարադրությունն ամբողջությամբ ներծծված է հպարտության վեհ զգացումով, որ քարտեզի վրա հենց այս կետում է նա լույս աշխարհ եկել: Նա յուրաքանչյուր հայ մանուկի պայծառ աչքերում տեսնում է Հայրենիքի լուսավոր գալիքն ու ապագան: Ու գերազանցապես հասկանում հետևյալ խոսքերի արժեքն ու բովանդակությունը, որով ավարտում է շարադրությունը. «Արցախը մենք ենք, և եթե մեզանից յուրաքանչյուրը հստակ իմանա իր սրբազան պարտքը Հայրենիքի առջև, քարտեզի վրա կունենանք մեծ ու հզոր երկիր՝ իր նախկին սահմաններով»:

Ահա այսպիսին են մեր մատաղ սերնդի մտահոգություններն ու խոհերը Հայրենիքի, հարազատ ծննդավայրի մասին: Ծանոթանալով նրանց հոգեվիճակին, Հայրենիքի սիրով լցված ջինջ ու մաքուր էությանը՝ գալիս ենք այն համոզման, որ իրոք, ազատ ու անկախ Արցախի ընթացքը դեպի ճանաչում՝ այլևս անկասելի է…

**Անահիտ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

# ԽԱՂ ՈՒ ՊԱՐՈՎ

Մարտունու Մոնթե Մելքոնյանի անվան մանկապարտեզի «Ճուտիկներ» ավագ խմբում այդ օրը սովորականից աշխուժություն էր, տոնական: Խմբասենյակը զարդարված էր դրախտային կանաչով, բազմագույն ծաղիկներով: Հիացմունք պատճառեց կենաց ծառը: Մեծ ու փոքր հավաքվել էին՝ նշելու Սուրբ Զատիկը: Ներկա էին Մարտունու շրջանի հոգևոր հովիվ տեր Սերոբե քահանա Պատվականյանը և Վիլեն սարկավագ Գրիգորյանը:



Միջոցառումը սկսվեց Տերունական աղոթքով: Մանուկների շուրթերից լսվում էր զատկի խորհուրդը, ցուցադրվեցին զատկական խաղեր, երգեր ու պարեր:

Մոնթեականները Աստծուց խնդրեցին բարեկարգ մանկապարտեզ, անամպ երկինք, պայծառ արև, հարատև խաղաղություն:

Դաստիարակներ Կարինե Առուստամյանը, Քրիստինե Բաբայանը, երաժշտավար Զարինե Տիտանյանն ու պարուսույց Քրիստինե Գրիգորյանը ջանք ու եռանդ չեն խնայել միջոցառումը հետաքրքիր ու բարձր մակարդակով կազմակերպելու համար:

Տեր Սերոբե քահանան կատարեց մանկապարտեզի օրհնություն:

Մանկապարտեզի տնօրեն Ի. Ղուկասյանը շնորհակալություն հայտնեց հոգևոր հայրերին՝ միջոցառմանը նոր շունչ հաղորդելու համար:

Միջոցառումն ավարտվելուց հետո երեխաները մանկապարտեզի աշխատողների և ծնողների ուղեկցությամբ գնացին Սուրբ Ներսես Մեծ եկեղեցի, որտեղ տեր Սերոբե քահանան կատարեց մանուկների օրհնության կարգ:

Օրն այդ երկար կմնա բոլորիս հիշողության մեջ, քանզի մեզ ավելի հայ զգացինք:

**Տաթեւ ՍՈՒԼԵՅՄԱՆՅԱՆ**
**Ծնող**

# ԳՐԱՃԱՆԱՉ ԵՆ



Բերձորի Վահան Թեքեյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցի առաջին դասարանում սովորում է 25 աշակերտ, ովքեր ապրիլի 20-ին, արդեն գրաճանաչ, հանդես եկան իրենց ծնողների, ուսուցիչների, հարազատների, հյուրերի առջև: Բազմամարդ էր դպրոցի հանդիսությունների դահլիճը, բեմը՝ զարդարված հայոց տառերով: Դասվար Աննա Հակոբյանն արդեն 5-րդ տարին է, դպրոցում դասավանդում է տարրական դասարաններում: Առաջին ուսումնական տարին է, որ աշխատում է առաջին դասարանցիների հետ: Նրա ղեկավարությամբ փոքրիկները բեմ բարձրացան, և սկսվեց ուրախ հանդեսը: Էկրանին դասարանի մասին պատմող տեսանյութ էր ցուցադրվում: Յուրաքանչյուր աշակերտ ներկայացնում էր որևէ տառ ու հնչյուն: Նրանք գիտեն հայոց գրերի պատմությունը, Մաշտոցի մասին: Աշակերտներից մեկը հանդես եկավ Մաշտոցի դերում: Մոտ մեկ ժամ տևած ցերեկույթի ընթացքում երեխաները ներկայացան նաև ասմունքով, երգով, պարով, մանրապատումներով: Բեմում հայտնվեցին նրանց սիրելի հեքիաթների հերոսները՝ Կարմիր Գլխարկը, Գնդլ--իկ Բոքոնիկը, Քաջ Նազարն ու Ուստիանը, Չախորդ Փանոսը, այլոք: Դարձյալ առաջին դասարանցիներն էին դերակատարները: Յուրահատուկ բաց դաս էր փոքրիկների հանդեսը և դասվարի աշխատանքի արդյունք, որի համար աշակերտների ծնողներն Ա. Հակոբյանին հանձնեցին շնորհակալագիր:

Դպրոցի տնօրեն Անահիտ Քոսակյանը, շնորհավորելով կրտսեր սաներին գրաճանաչ դառնալու և Այբբենարանի տոնի առթիվ, նրանց նվիրեց տնօրինության կողմից պատրաստված հավաստագիրը, որը յուրօրինակ բացիկ-ուղերձ է և շնորհավորանք:

Առաջին դասարանցիներին շնորհավորեցին, բարի ճանապարհ և հաջողություններ, անամպ երկինք մաղթեցին շրջվարչակազմի աշխատակազմի ԿՍ բաժնի վարիչ Վարդուշ Մովսիսյանը, առաջատար մասնագետ, տարրական դասարանների գծով տեսուչ Սիրվարդ Թամազյանը: Հանդեսին ներկա էին նաև Բերձորի պետական մանկապարտեզի ավագ խմբի սաները, ովքեր առաջին դասարանցիների կողմից բացիկներ ստացան: Տոնն ավարտվեց ուրախ երաժշտությամբ, փոքրիկների ժպիտով ու երազանքով, որին, հավատացած եմ, հասնելու են:

**Զոհրաբ ԸՌՔՈՅԱՆ**

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

✉ Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 26.04.2018թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: